

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սալյն աշխատանքն արտանագործված է «Մտերմագործական համայնքնէդ
Ոչ առնորային իրաւաստօյուն 3.0» արտանագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported License.

Դու խորդ էս.

պատճենել և տարածել եւրօր ցածխայան մեղուխով կամ խլիով
մեղուխով կամ ուրաղիակն ուրաղ եւրօր ստիղնիւ իրաւոր ծորդ

You are free to:

Share – ցոյց տալ/տարածել ուրաղ ին իւրաւան ուրաղ
Adapt – արմուստաւան ծործ ստիղնիւ ուրաղ


ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԳԱՀԻՐԷԻ

ՕՐԷՆՔ ԵՒ ԿԱՆՈՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ
ՅԵԳԻՊՏՈՍ



ՏՊԱՐԱՆ
"ՔՍԵՆՅԱՌ"
ԳԱՀԻՐԷ
1930

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՀԱՅՈՑ ԳԱՀԻՐԷԻ



ՕՐԷՆՔ ԵՒ ԿԱՆՈՆՔ
ԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ
ՅԵԳԻՊՏՈՍ



ՏՊԱՐԱՆ
“ՈՍԿԵՏԱՌ”
ԳԱՀԻՐԷ
1930

ՁԵԿՈՅՑ

Նկատելով որ Ազգ. Սահմանադրութեան օրինագիրքը, մանաւանդ Ազգ. Ժողովոյ Ներքին Կանոնագիրքը, ընդհանուր Գաւառացի եւ Եզիպտոսի Վիճակին մաւաւոր Վարչական եւ Դատավարութեան հրահանգները, երբեմն առանձին առանձին տպագրուած, հազուագիւտ գտնալ սկսած են եւ յաճախ անոնց պէտքը զգալի կ'ըլլայ. Պատկ. Թեմական Ժողովը որոշեց Առաջնորդարանիս Ժողովներու եւ Հոգաբարձութեանց գործառնութիւնները ղեկավարող օրէնքները եւ կանոնները մէկ հատորի մէջ ամփոփեալ հրատարակել:

Կը յօսանք թէ այս հրատարակութեամբ շատերու կողմէ յայտնուած բաղձանքին գոհացում տրուած կ'ըլլայ եւ միեւնոյն քաղցին Ժողովներու եւ Հոգաբարձութեանց անդամներ իբր Ուղղեցոյց օգտակարապէս կը կիրարկեն զայն:

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Ե.

Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Տ. ԵՂԻՇԷԻ

Սրբազան Արեպիսկոպոսի

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

Տ. ՄԵՍՐՈՊԱՅ

Սրբազան Արեպիսկոպոսի

Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵԴԻՊՑՈՍԻ

Տ. ԹՈՐԳՈՄԱՅ

Սրբազան Արեպիսկոպոսի

ՑԱՆԿ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

	Էջ
Արտաքին գործոց Տեսողութեան առ Պատր.	
Տեղապահ ղրկած նամակը	3
Բ. Դրան հւ Ազգ. Յանձնաժողովոց առ կայսերական կառավարութիւն մատուցած Յայտադրին օրինակը	4
Բ. Դրան Հրահանգին օրինակը	13
Յատաջարանութիւն	14
Հիմնական սկզբունք	16
ԿԼՈՒՆ ԱՌԱՋԻՆ. — Ազգային կեդրոնական վարչութիւն	19
Ա. պատրիարք Կոստանդնուպօլսոյ	19
Ընտրութիւն եւ հրաժարում	19
Պաշտօն եւ պարտաւորութիւնք	25
Բ. պատրիարքական Գլխանատուն	28
Գ. պատրիարք Ս. Երուսաղէմի	30
Դ. Ազգային կրօնական ժողով	33
Ե. Ազգային Քաղաքական ժողով	37
Զ. Քաղաքական ժողովոյ կողմէն կազմուած խորհուրդք եւ Հոգաբարձութիւնք	40
1. Ուսումնական խորհուրդ	40
2. Տնտեսական խորհուրդ	41
3. Դատաստանական խորհուրդ	43
4. Վանօրէից խորհուրդ	44

5. Ելեւմտից հոգաբարձութիւն	46
6. Կապակաց հոգաբարձութիւն	48
7. Հիւանդանոցի հոգաբարձութիւն	49
Է. Քաղաքացիական խորհուրդ	50
Ը. Ազգային Ընդհանուր ժողով	53
Կազմութիւն եւ պարտաւորութիւնք	53
Ընտրութիւն եկեղեցական երեսփոխանաց	56
Ընտրութիւն աշխարհական երեսփոխանաց	57
Ա. Ընտրողութեան եւ ընտրելութեան պայմանք	57
Բ. Եղանակ ընտրութեան	59
Գ. Քուէարկութիւն	63
ԿԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. — Ընդհանուր կանոնք ժողովոց եւ խորհրդոց	67
ԿԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. — Ազգային տուրք	69
ԿԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. — Ազգային Գաւառական վարչութիւն	70
ԿԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ. — Վերաքննութիւն Սահմանադրութեան	73

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Բացում ժողովին եւ վաւերացում ընտրութեանց	75
Կազմութիւն Մայր Դիւանի	78
Կազմութիւն Նախարանի Դիւանաց	80
Ատենական կանոնք	85
Քուէարկութիւն եւ որոշում	91
Խնդրոց կարգ, Օրակարգ եւ Ստիպողութիւն	107

	Էջ
Առաջարկութիւնք	111
Բեմական յօրաքերութիւնք ժողովին	118
Ներքին եւ արտաքին բարեկարգութիւն Ազգ. ժողովին	130
Պատժական կանոնք	132
Բացակայութիւն	136
Յաւելեալ եւ քարեփոխեալ տրամադրութիւնք Ներքին Կանոնադրի Ազգ. Հնդհանուր ժողովոյ	142

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՅԱՆԳ ԳԱԻԱՌԱՑ ՀԱՄԱՐ

	Էջ
Յառաջարան	149
Հնտրութիւն Գաւառական Հնդհ. ժողովոյ	151
Հնտրութիւն Եկեղեցական անդամոց	154
Հնտրութիւն Աշխարհական անդամոց	155
Պաշտօն Գաւառական Հնդհանուր ժողովոյ	163
Գաւառական վարչութեան Կրօն, եւ Քաղ. ժողովները	165
Գաւառական Վարչութեան Ուսումնական եւ Տնտեսական խորհուրդները	170
Գաւառական Վարչութեան Թաղական խորհուրդները	177
Առաջնորդ	180
Ամբաստանութիւն Առաջնորդի վրայ	185
Միջամտութիւն Կեդրոնական վարչութեան	191

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ ՎԻՃԱԿԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ

	Էջ
Պաշտօնական լայտարարութիւն Ընտրողական Ժողովոյ	195
Ազգ. Կեդր. Վարչ. պաշտօնագիրը եգիպտոսի վարչական կազմակերպութեան մասին . . .	197
Ատենագրութիւն Ընտրողական Ժողովի . . .	199
Ազգ. Կեդր. վարչութեան պատասխանը եղած հարցմանց եւ առաջարկներու	207
Վարչական հրահանգ վրճակի եգիպտոսի . . .	210

ՀՐԱՀԱՆԳ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ

	Էջ
Պաշտօնագիր Պատրիարքական	220
Ընդհանուր տրամադրութիւնք	221
Ներքին կանոններ	223
Դատավարութեան կանոնք	225
Ի բացակայութեան տրուած վճիռներ եւ անոնց դէմ դիտողութիւն	234
Վերաքննութիւն	237

ԱԶԳԱՅԻՆ

ՍՍՀՄԱՆ ԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ



Բ. ԴՈՒՌ
ՅԵՍԱՅՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ
բուսեամար 191

ԱՌ ԽՈՂԵՄԱԶԱՐԴ ՏԵՂԱՊԱՆ ՊԱՏՐԻԱՐԲԻ

Խօհեմաղարդ և սիրելի էֆէնտի .

Բարեկարգութեանց վերաբերեալ կայսերապետան հրովարտակը կը պահանջէ, որ ամեն Հաւարակութիւն իր վայելած պաշտօններէն թիւններն ու արօնութիւնները շրջեալ պայմանաժամի մէջ ի քնն առնելով, ժամանակին բերմանցը և քաջաքակթութեան արգեանցն ու գիտութեանց պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեամբ սրոյէ, ու Բարձրագոյն Դրան ներկայացընէ . եւ Հոգեւորական Գլխոց շնորհուած իշխանութիւնն ու ձեռնհասութիւնը՝ իւրաքանչիւր Հասարակութեան արպետութեամբ վիճակին ու նոր գիւրքին հետ համաձայնութեան մէջ գրութիւն . Ուստի Հայոց Ազգին հաճաք պատուաւոր անձերէ բաղկացեալ Յանձնաժողովի մը ձեռք Սահմանադրութեան ուրուագիծ մը պարտաւորեալ . Բայց միանգամայն պատշաճ համարուեցաւ .

Սարգիս Պատրիարքի օրով կազմուած Ընդհանուր
Ժողովոյ Եկեղեցական տնդամներն ու Թաղական
Երեսփոխանները՝ քուէից առաւելութեամբ եօթն
հոգիէ բաղկացեալ Յանձնաժողով մը ընտրեն, և
վերոյիշեալ ուրուագիծը անգամ մըն ալ անոր
ցոյց տրուի: Վասնորոյ կը խնդրեմք որ պէտք
եղած հրաւերի նամակները երկու երեք օրուան
մէջ զրկելով, յիշեալ Յանձնաժողովին ընտրու-
թիւնը ընել առայ, և անոր՝ Բարձրագոյն Դուռը
միւս Յանձնաժողովին ու այս գործիս համար
յառկապէս որոշուած Պաշտօնակալին հետ մէկ-
տեղելովը՝ հարկ եղած տնօրէնութեան կատար-
ուելան շնորհ ընէք: Կը խնդրեմք նաև որ
վերոյիշեալ կերպով ընտրուած եօթն անձանց
անունները յառաջագոյն մեզ ուղարկէք:

(Ստորագրեալ)

1862 Փետրվար 14

ԱԼԻ

Բարձրագոյն Դրան Եւ Ազգային Յանձ-
նաժողովներուն առ Կայսերական Կառավա-
րութիւն մատուցած Յայտագրին օրինակն է:

Կայսերական Տէրութիւնը ՚ի վաղուց անախ
իր տրգարտէր հովանաւորութեան ներքեւ գլտ-

նուող զանազան Ազգաց՝ Կրօնից ազատութեան
և առանին գործոց մասնաւոր վարչութեան
համար առանձնաշնորհութիւններ ու արտօնու-
թիւններ շնորհած է:

Այս արտօնութիւնները թէպէտեւ ըստ
սկզբանց տոճեն ազգաց համար միօրինակ, բայց
միանգամայն ամեն մէկուն կրօնական սեպհա-
կան կանոնաց և սովորութեանց համեմատ
անօրինուած ըլլալով, իւրաքանչիւր Ազգ զանոնք
իր բնիկ սովորութեանց և ընթացից համեմատ
'ի գործ դնելով վայելած է:

Հայոց ազգը միւս ազգաց պէս մինչեւ
ցայսօր Պատրիարք մը ունեցած է, որ Տէրու-
թեան կողմէն իբր նախագահ Պատրիարքական
վարչութեան նախըցուած է, և ներկայացուցիչ
Ազգին ու Միջնորդ գործադրութեան կայսերական
հրամանաց. և որ 'ի վաղուց անտի հասարակօրէն
Նկեղեցական դասէն ընտրուած է, Ազգին զա-
նազան կարգի անհատներէն բաղկացեալ Ընդհա-
նուր Ժողովի մը ներքո:

Պատրիարքը իր պաշտօնին մէջ՝ որ է Ազգին
նախագահել և անոր օգտիցը հսկել, Ազգին՝
Ընդհանուր Ժողովոյ միջնորդութեամբ ունեցած
ազգեցութենէն ու վերաստեղծութենէն բնաւ մէկ

Ժամանակ ազատ լինելով՝ չէ. և ասոր ապացոյցն է, Պատրիարքին՝ ասին ժամանակ ընդհանուր ժողով. հրաւիրելն ու գումարելը, և կամ ըստ պահանջման դործոց կամ Բարձրագոյն Դրան բացորոշ մէկ հրամանին վրայ կարելոր խնդրոյ մը ծագած պատենը՝ Ընդհանուր ժողովոյ գիմելն ու անոր որոշումը խնդրելը :

Հայոց Ազգը՝ ասկէ քսան տարւոյ չափ յառաջ՝ կայսերական Տէրութենէն խնդրեց որ Պատրիարքարանի մէջ Պատրիարքին նախագահութեամբը երկու ժողով հասաւտուին. մէկը նրօնական, միւսը Բաղաքական դործոց համար. որպէս զի Պատրիարքին պաշտօնատարութեանը դործակից և օգնական ըլլան, և Ազգին՝ թէ՛ ըստ Բաղաքականի և թէ՛ ըստ կրօնականի՝ վագեմի կանօններէն և սովորութիւններէն ո՛ր և է խոտորմանց առաջիք առնուի :

Երբ այս ժողովները հաստատուեցան, ազգային մտնրամասն դործոց տնտեսութեան համար ալ՝ քանի մը Խորհուրդներ հաստատուել հարկ եղաւ : Բայց որովհետեւ Ազգային պաշտօնատեաքց ամեն մէկուն իշխանութիւնը և պարտաւորութիւնները որոշաբար սահմանուած չէին, յայտնի էր որ, Ազգին վիճակը բարեկարգելու

մասին եղած այս շանքերը, Ազգային վարչութեան զտնտղան մասանց մէջ, նաեւ յիշեալ վարչութեան և Ազգին մէջ՝ անպակաս պառակտումներ ծագելուն տալիք պիտի տային. և առաջ ամեն կողման վերաբերեալ իրաւանց գործադրութեան մասին շատ մը անկարգութիւններ, և Ազգային վարչութեան մէջ ալ շփոթութիւն և խռովութիւն պիտի պատճառէր:

Ահա՛ այս շփոթութեանց և երկպառակութեանց պատճառները վերցընելու, և ամեն կողման պահանճմանց փաստակարարութիւնը բառնալու նպատակաւ, կայսերական Տէրութիւնը իր բոլոր հպատակաց վրայ ունեցած հայրական խնամօքը՝ Ազգիս մէջէն խառն Յանձնաժողով մը կազմել հարկաւոր գտանց, որպէսզի Հայոց ազգին կրօնական և Բողոքական բնիկ ու փոքրութեանց, նաեւ 'ի վաղուց անտի ընդունուած ընթացքին համաձայն Սահմանադրութիւն մը պատրաստուի:

Արդ՝ իրաւն Յանձնաժողովը պատշաճ կը գտնէ որ վաւերացման համար Բարձրագոյն Դիւան ժողովուրդած Սահմանադրութեան սուրբագծին համեմատ՝

ա) Գտարիարքին՝ 'ի մէջ Տէրութեան և

Ազգին միջնորդ ըլլալու պաշտօնը ըստ անազին
դրութեան միայն:

բ) Ընդհանուր ժողովոյ կազմութիւնը ա-
ռաջինէն աւելի կանոնաւոր կերպիւ նորոգուի:
Եւ Ազգային երեսփոխանները հսկանքներէն
ընտրուելու տեղ (ըստ որում հսկանքներուն
վիճակը նոյնը 'չէ' ինչ որ առաջ էր), Յունաց
Ազգին մէջ գործադրուած եղանակէն գուցէ
աւելի կանոնաւոր և օրինաւոր կերպով՝ եկեղեց-
եաց ժողովուրդներէն (այսինքն թաղերէն) ընտ-
րուին:

Եւ որովհետեւ դուրսերը բնակող Հայ Ժո-
ղովուրդները իրաւամբ կը գանգատին թէ Պատ-
րիարքարանի որոշումներուն խորհրդակցութենէն
և մասնակցութենէն բոլորովին զուրկ են, Երես-
փոխաններուն մէկ մասը գաւառներուն կողմէն
ընտրուին. և Կոստանդնուպոլսոյ թաղերուն
Երեսփոխանաց վրայ աւելցուին. Եւ ժողովոյն
Կրօնական մասը այսինքն անգամայն քսանը՝
Կոստանդնուպոլսոյ քանազանք եկեղեցականներուն
կողմէն ընտրուին. որով Ընդհանուր ժողովոյ
անդամաց թիւը ընդ ամենը հարիւր քառասունի
կ'ամփոփուի:

Ասոնց պաշտօնը սոսն ամբողջ տեւէ, և ամեն

տորի պատներորդ մասը փոխուելով նորէն ընտ-
րութիւն ըլլայ:

Ընդհանուր ժողովը անուանէ թէ՛ ՂԳտորի-
արք և թէ՛ անոր նախագահութեամբը գործող
Ազգային իրկաց ժողովոց անգամները, և անոնց
գործողութեանց վերատեսչութիւնն ընէ:

գ) Կրօնական գործոց տեսչութիւնը՝ Կրօնա-
կան-ժողովոյն, քաղաքական գործոց տեսչա-
թիւնը՝ Քաղաքական ժողովոյն, և խառն գոր-
ծոց փեսչութիւնն ալ՝ յիշեալ երկու ժողովնե-
րուն մէկտեղ գալովը կազմուած խառն ժողովոյն
վերաբերեալ ըլլայ:

դ) Կրօնական և Քաղաքական ժողովները
իրենց ձեռնհասութեան շրջանակին մէջ գըտ-
նուած թէ՛ եկեղեցեաց ժողովուրդներուն (թա-
ղայաններուն) և թէ՛ եկեղեցեաց, գալուստանց,
հիւանդանոցաց, վանքերից և ասոնց հման ուրիշ
տեղիաց ազգային քործերուն ամենն ալ Տեսուչ
և թաղական խորհուրդներու միջնորդութեամբ
տնօրինեն:

ե) Վարչութեան կեդրոնը Ազգային Պատ-
րիարքարանն ըլլայ:

Պատրիարքը՝ իբրեւ պաշտօնական Գլուխ
Պատրիարքարանի, թէ՛ Ընդհանուր ժողովոյն և

Թէ՛ Ազգային կրկին ժողովներուն նախագահութիւն ընէ. և Ազգին ուղղակի կամ անուղղակի վերաբերեալ ամեն գործերը անորինէ՛ ընդ վերատեսչութեամբ Ընդհանուր ժողովոյ:

զ) Գաւառական ժողովրդոց վարչութիւնը կեդրոնական վարչութեան հետ կապուած ըլլայ: Եւ գաւառներուն մէջ Առաջնորդները նախագահութիւն ընեն տեղական ժողովներուն, որոնք պիտի կարգադրուին ըստ արամագրութեանց կոտորանքնապոյսոյ ժողովոց և նոյն (տեղական) ժողովոց գործերն ալ անորինեն:

ե) Գաւառական ժողովները՝ կեդրոնական վարչութեան, և սոյն վարչութեան Խորհարդներուն ամեն մէկը՝ ո՛ր ժողովոյ վերաբերի՝ նոյն ժողովոյն. և Ազգային ժողովները՝ Ընդհանուր ժողովոյն. և Պատրիարքը մէկ կողմէն Կայսերական Տէրութեան, և միւս կողմէն (Ընդհանուր ժողովոյ միջնորդութեամբ) Ազգին պատասխանատու ըլլան:

ը) Եւ որովհետեւ Կայսերական Տէրութիւնը Հայոց Ազգին համար աւելու հրամաններուն գործադրութեան բնական միջնորդ և Ազգային վարչութեան գլուխ պատրիարքը կը նանչնայ և՛ անոր կ'ուղղէ իր հարցումները, եթէ Տէրութիւնը

Պատրիարքին հրամայէ որ հարցուցած խնդրոյն վրայ իր (այսինքն Պատրիարքին) կարծիքը յայտնէ. Պատրիարքը՝ իր նախագահութեամբը գործող ժողովներուն որոշման համեմատ շարժի: Իսկ եթէ Ազգին կարծիքն առնելով Տէրութեան հաղորդել հրամայէ, այն ժամանակ Պատրիարքը Լնդհանուր ժողով հրաւիրէ, և այն ժողովոյն վերջնական որոշմունքը յայտնէ Տէրութեան:

թ) Ազգային վարչութիւնը երեք տեսակ պարտաւորութիւն ունի. որոնց առաջինն է առկայեալական տէրութիւնն. այս է՝ Ազգը կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել, և Ազգին թէ՛ ընդհանրապէս և թէ՛ ի մասնաւորի ամեն մէկ անհատներուն իրաւունց և արտօնութեանց՝ Տէրութեան կողմէն պահպանութիւնը ապահովցընել, երկրորդն է առ Ազգն, որ է ճշմարտապէս գիտութեամբ և հայրաբար վարուիլ. և երրորդն է առ Աթոռն էջմիաֆնի. ա՛յն է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ նրօնական կանոնաց և օրինաց համեմատ վարուիլ:

Ահա՛ ասոնք են Սահմանադրութեան այն կէտերը զոր խառն Յանձնաժողովը պատշաճ կը դատէ. և զոր կը հաստատէ միւս Յանձնաժողովը,

որ Զեր Վսեմութեան հրամանին համեմատ՝ ի
դիմաց Ազգին Սահմանադրութեան վրայ իւր
դիտողութիւնները Բարձրագոյն Դրան ներկայա-
ցընելու համար կազմուեցաւ:

Ի Կ. Պոլիս 16 Փետրւար 1862

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱՆԴԱՄՔ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

ՍՅՍՓԱՆՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԻԿՈՄԻԴԻՈՑ

անդապահ պատրիարքական տառայ Կոստանդնուպօլսոյ

ՅՕՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՊՈՒՅԻԿԵԱՆ

Իւսկիւտար Ս. Խաչ եկեղեցւոյ

ՅՕՀԱՆՆԷՍ ԳԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ

ՅՕՀԱՆՆԷՍ ԳԱՀԱՆԱՅ ՀԻՒՆԿԵԱՐՊԷՅԷՆՑԵԱՆ

Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ ի պալատ

ԳԵՈՐԳ ԵՐԱՄԵԱՆ

ՅՕՀԱՆՆԷՍ ՏԱՏԵԱՆ

ՍԵՐՈՎԲԷ ՎԻՋԷՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՂԱԹՕՆ

ՅԱԿՈԲ ՄՈՒՊԱՀԵԱՃԵԱՆ

ՅԱԿՈԲ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՅՕՀԱՆՆԷՍ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

ԳԱՍՊԱՐ ԿԻՒՄԻԻՇՃԻ

ԱՆԴԱՄՔ ԱԶԳԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

ԱՂԱԹՕՆԵԱՆ ՄԿՐՏԻՁ

ԱՍԼԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԱՆՈՒԿ

ՄԻՆԱՍԵԱՆ ՄԻՆԱՍ

ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՍԻՐԷՆԵԱՆ ՅՕՀԱՆՆԷՍ

ՕՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ

ՕՐԻՆԱԿ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆ

Առ խոհեմազարդ Տեղապահ Պատրի-
արքի Հայոց .

Հայոց Պատրիարքարանի վիճակին և վար-
չութեան բարեկարգութեանը վրայօք, ասկէ
առաջ Բարձրագոյն Դուռը կազմուած Յանձնաժո-
ղովին գրի առած Սահմանադրութիւնը՝ լոկ
աշխարհական գործոց վերաբերեալ քանի մը
կէտերը սրբազրուելէն ետքը, Վեհափառ Արքա-
յին մատուցուեցաւ . և նորին կայսերական Վե-
հափառութեան կողմէն ընդունուելով, պարու-
նակած նիւթերուն այսուհետեւ կանոն բռնուիլը
Ձեր Սրբազնութեան յանձնելու Արքունի հրամանը
շնորհուեցաւ :

Ուստի յիշեալ Սահմանադրութիւնը ներ-
փակեալ առ Ձեզ ուղարկելով՝ կը պատուիրեմք
որ պարունակած նիւթերուն այսուհետեւ անթերի
գործադրութեանը հսկելով, ըստ Բարձրագոյն
կամաց Օգոստափառ կայսեր՝ ի՛նչ որ պարտ ու
պատշաճ է ՚ի գործ գնելու հոգ տանիք :

17 Մարտ 1863

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Օսմանեան Տէրութեան իր Մահմէտական չեղող հպատակներուն շնորհած արտօնութիւնները՝ հաւատար են ըստ սկզբանց ամենուն համար . բայց տննց դործագրութեանը եղանակը՝ իւրաքանչիւր Ազգի մէջ ըստ պահանջման սեպհական սովորութեանց իւրեանց, մասնաւոր կերպով տնօրինուած է :

Հայոց Պատրիարքը գլուխ է իր ազգին . և մասնաւոր պարագաներու մէջ՝ Տէրութեան հրամանաց դործագրութեան միջնորդ . Սակայն Պատրիարքարանի մէջ կրօնական գործոց համար՝ կրօնական ժողով մը , և քաղաքական դործաց համար՝ Գաղաքական ժողով մը կան հաստատուած : Այս երկու ժողովները 'ի պահանջել հարկին միանալով՝ Խառն ժողով կը կազմեն : Թէ Պատրիարքը և թէ այս երկու ժողովաց տնգամները՝ Ազգին պատուաւոր անձանցմէ բաղկացեալ մէկ Ընգհանուր ժողովոյ մէջ կ'ընտրուին :

Որովհետեւ յիշեալ ժողովներուն պաշտօնն ու պարտաւորութիւնքը , և կազմութեան եղանակը քաւական կանոններով սահմանուած չեն , և այս պատճառաւ զանազան անտեղութիւններ ,

և մասնաւորապէս ընդհ. ժողով կազմելու մասին տեսակ տեսակ դժուարութիւններ տեսնուած են :

Որովհետեւ բարեկարգութեանց վերաբերեալ կայսերական հրովարտակին* համեմատ՝ իւրաքանչիւր Հասարակութիւն իր սւնեցած արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները՝ որոշեալ ժամանակի մէջ քննելով, և ժամանակին բերմանցը և քաղաքակրթութեան արգեանցն ու արդի լուսաւորեալ վիճակին պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեամբ որոշելով Բարձրագոյն Դրան ներկայացնելու պարտաւորւած է :

Որովհետեւ ամեն մէկ Ազգին Կրօնական Գլուխներուն շնորհուած է իշխանութիւնն ու կարողութիւնը, իւրաքանչիւր Հասարակութեան ազդեցութեամբ նոր վիճակին ու դրութեան համաձայնեցնել պէտք է :

Ուստի Հայոց Ազգէն քանի մը պատուաւոր անձինքէ Յանձնաժողով մը կազմուեցաւ, որ Ազգին համար պատրաստեց սա հետեւեալ Սահմանադրութիւնը :

(*) Խաբթի Հիւմայուն, 6/18 Փետրւար 1856:

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔ

Ա.

Ազգին ամէն մէկ անհատը առ Ազգը պարտաւորութիւններ ունի. Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի Ազգէն իւր Ազգն անհատներէն:

Ուստի Ազգն ու ազգայինը փոխադարձ պարտեօք կապւած են իրարու հետ. անանկ որ մէկին պարտաւորութիւնքը միւսին իրաւունքն են:

Բ.

Ազգայնոց պարտականութիւնն է՝ Ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւր իր կարողութեան չափովը. Ազգին խնդրած ծառայութեանցը յօժարակամ յանձնառու ըլլալ, եւ անոր ըրած տնօրէնութեանցը սիրով հնազանդիլ:

Ազգայնոց այս պարտաւորութիւնքը Ազգին իրաւունքն են:

Պ.

16283-58

Ազգին պարտականութիւնն է՝ ազգայնոց բարոյական, մտաւորական եւ նիւթական պիտոյիցը հոգ տանիլ. Հայաստանեայց Եկեղեցւոյ ղաւանութիւնն ու աւանդութիւնքը անարատ պահել. մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ըստմը՝ ամեն առաքեալի թէ՛ մանչ եւ թէ՛ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել. ազգային հաստատութիւնքը պայծառ պահել. հասոյթներն օրինաւոր կերպով աւելցնել, եւ ծախքերն իմաստութեամբ տնտեսել. Ազգին ծառայութեանը մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը բարւոքել եւ ապագայն անդորրել, կարօտելոց խնամ տանիլ հայրադար, ազգայնոց մէջ ծագած վէճերն արդարասիրութեամբ խաղաղել, եւ վերջապէս ազգային յառաջադիմութեան անձնանուէր տշխատիլ:

Ազգին այս պարտաւորութիւնքը ազգայնոց իրաւունքն են.

Պ.

Ձազը փոխանորդաբար ներկայացնող, եւ այս փոխադարձ պարտեաց կանոնաւոր կատարմանը տեսուի ու մատակարար կարգեալ իշխանութիւնը՝ ԱԶԳԱՅԻՆ ՎՍՏԱՅԻԹԻԻՆ կը կոչուի. որու յանձնուած



է Օսմանեան Տէրութենէն յատուկ արտօնութեամբ,
եւ Սահմանադրութեան միջոցաւ, Թուրքիոյ Հայոց
ներքին գործերու տնօրինութիւնը:

Ե.

Վարչութիւնը՝ ազգային ըլլալու համար, պէտք է
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ըլլայ:

Զ.

Երեսփոխանական Վարչութեան հիմը՝ ԻՐԱԻԱՆՑ
ու ՊԱՐՏԵԱՅ սկզբունքն է, որ ազդարութեան սկզբունք
է. իր ոյժը ծայնից քաղմութեան մէջ կը կայանայ, որ
օրինաւորութեան սկզբունք է:



ԳԼՈՒԽ Ա .

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Ա . ՊԱՏՐԻԱՐԻԿ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՐՄԱՐՈՒՄ

Յօդուած 1 .— Կոստանդնուպօլսոյ Պատրիարքը բոլոր Ազգային ժողովոց նախագահն է , և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ , և մասնաւոր պարագաներու մէջ՝ Տէրութեան հըրամանց գործադրութեան միջնորդն է :

Սառի պէտք է որ Պատրիարքը ընտրուելու անձը՝ ընդհանուր Ազգին վստահութեան ու յարգանացն արժանի ըլլալու համար՝ Պատրիարքական Աթոռին վայելուչ ամեն յատկութիւններն ու արժանաւորութիւնն ունենայ , և 'ի վաղուց անտի Պատրիարքութեան յատկացեալ Եպիսկոպոսաց զասէն ըլլայ . միանգամայն Տէրութեան կառարեալ վստահութեանն արժանաւոր , և դոնէ իւր հօրմէն սկսեալ՝ Օսմանեան

հպատակ, և երեսուն ու հինգ տարին լրացուցած
ԸԼԼԱՅ՝

Յօդ. 2. — Երբ՝ Պատրիարքը վախճանելով
կամ հրաժարելով և կամ ուրիշ որ և է պատ-
ճառաւ Աթոռը պարապ մնայ, Կրօնական և
Քաղաքական ժողովները յէկտեղ դալով Տե-
ղապահ մը կ'ընտրեն, և անոր հաստատութիւնը
կը խնդրեն Բարձրագոյն Դռնէն:

Ընդհանուր ժողովը կ'ընտրէ զՊատրիարք.
բայց Կրօնական և Քաղաքական ժողովներն
իրաւունք ունին ներկայացնալ ցուցակով մը
Ընտրելիաց արժանաւորութեան աստիճանին վը-
րայ կարծիք առլու:

Պատրիարքի ընտրութիւնը հետեւեալ կեր-
պիւ կ'ԸԼԼԱՅ՝

Նախ և առաջ՝ Տեղապահը Օսմանեան հո-
ղին վրայ դտնուող բոլոր Եպիսկոպոսաց ցանկը
կը շինէ, և իւրաքանչիւրին արտաւեր առջև՝ ըստ
առաջին յօդուածոյ ընտրելութեան համար պա-
հանջուած հոնգումանքը նշանակելով, Կրօնա-
կան ժողովոյն կը ներկայացնէ զայն:

Այս ժողովն ալ Եկեղեցական համագումար
ժողով հրաւիրելով, բնօրէնաց ցուցակ մը
կը պատրաստէ գաղտնի քուէարկութեամբ:

այսինքն իւրաքանչիւր անգամ թղթոյ մը վրայ
կը գրէ այն ամեն Եպիսկոպոսաց անունները՝
զորս կրօնական մասին անընդունելի շըհամարիւ-
նաքը՝ քուէհամարն ըլլալով, այն անունները
յատուկ ցուցակի մը մէջ կ'առնուին քուէից
շատութեան կարգաւ:

Տեղապահը յիշեալ կերպիւ պատրաստուած
ցուցակը Քաղաքական Ժողովոյն կը ներկայացնէ:
Ան ալ՝ նշանակուած անձանց ըստ քաղաքակա-
նին արժանաւորութիւնը քննելէն ետքը, ամե-
նէն աւելի արժանաւորներէն հինգ ընտրելի կը
զատէ քուէից առաւելութեամբ, և ասոնց ցու-
ցակը ընդհանուր Ժողովոյն կը ներկայացնէ:

Միանգամայն Եկեղեցական համագումար
Ժողովոյն պատրաստած առաջին ցուցակն ալ
աղգային Ընդհանուր Ժողովոյն սրահին մէջ
կ'ախուած կ'ըլլայ: Ընդհանուր Ժողովը այս
երկու ցուցակներէն՝ ընտրելեաց թէ՛ կրօնական
և թէ՛ քաղաքական յապիտութեանց վրայ՝ երկու
ձեռնհաս ժողովներուն կարծիքն իմանալով,
կ'ընտրէ զՊատրիարք՝ դաշտնի քուէարկութեամբ
և բացարձակ առաւելութեամբ քուէից:

Ընդհանուր Ժողովը կրնայ Քաղաքական
Ժողովոյն ներկայացուցած ցուցակէն գորս անձի
մը վրայ ալ քուէ տալ, բայց պէտք է սր այն

անձին անունը նշանակուած ըլլայ եկեղեցական համագումար ժողովոյն պատրաստած ցուցակին մէջ. վասնզի այս եկեղեցական ցուցակէն գուրս մնացած անձի վրայ ընտրութիւն չկրնար ըլլալ:

Եթէ առաջին անգամ քուէից բացարձակ առաւելութիւն չգոյանայ, երկու առաւելագոյն քուէ սաացողաց անունները Տեղապահին կողմէն Ընդհանուր ժողովոյ անդամներուն կը ժանուցուի և երկրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կ'ըլլայ: Այս երկրորդ քուէարկութեան տառն Ազգային երեսփոխաններէն առնօք որ չկրնան ներկայ գտնուիլ, կարող են իրենց քուէները ոտորագործել և կնքել նամակաւ առ ժողովն ուղարկել, կամ Տեղապահին և կամ Ընդհանուր ժողովոյ Ատենապետին ուղղելով զայն:

Քուէները յատուկ քուէառութի մը մէջ գրուելէն ետքը՝ քուէհամարը կ'ըլլայ Ընդհանուր ժողովոյ գիւանին ձեռօք, և սոյն ժողովոյ մէջէն ընտրուած չորս եկեղեցական և չորս աշխարհական քննիչներու ներկայութեամբ:

Եթէ պատահի որ երկրորդ անգամ քուէարկութեան մէջ երկու անձանց հաւասար քուէ ելնէ, այն տառն երկուքէն մէկը լիճակաւ կ'ընտրուի:

Յօդ. 3.— Ընտրութիւնը կոտարուելէն ետքը տեղեկագիր մը կը շինուի՝ զոր բՈՒՐ քաղաքականք կ'ըստորագրեն. և Տեղապահի միջնորդութեամբ Բարձրագոյն դրան կը մատուցուի և Պատրիարքը կը հաստատուի ըստ վաղեմի սովորութեան կայսերական հրամանին համեմատ:

Յօդ. 4.— Ընդհանուր ժողովը հրաւիրանաց գիր կ'ուղարկէ Պատրիարք ընտրուած անձին, քանի մը անձանց ձեռք՝ եթէ կ. Պալատ մէջ է. և յատուկ հրաւիրակաւ՝ եթէ կ. Պոլսէն դուրս տեղ է. Նորընտիր Պատրիարքը՝ այս հրաւիրանաց գիրը առնելով, Պատրիարքարան կուգայ և Մայր Եկեղեցւոյ մէջ Ընդհանուր ժողովոյ առջև հանդիսաւոր ուխտ կ'ընէ սոյն օրինակ. «Առաջի Աստուծոյ և 'ի ներկայութեան Ազգային ժողովոյ՝ հրապարակաւ ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս, և ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի զործադրութեանը. Անմիջապէս՝ Տեղապահին պաշտօնը կը դադրի, և Նորընտիր Պատրիարքը Բարձրագոյն Դրան հրաւերին վրայ՝ ուղղակի Օգոստոսփառ կայսեր կը ներկայանայ. պաշտօնական կերպիւ իր պաշտօնը կը հաստատուի, և Բարձրագոյն գուռը երթալով կը ծառայի »:

Յօդ. 5.— Եթէ Պատրիարքը Մահմանադ-
րութեան արամագրութեանցը հակառակ շարժի
կամ վարուի, ամբաստանութեան տակ կ'ընկնի:

Յօդ. 6.— Պատրիարքին վրայ ամբաստա-
նութիւն ընելու միայն Ընդհանուր Ժողովը, և
Կրօնական ու Քաղաքական Ժողովներն իրաւունք
ունին:

Ամբաստանող կամ բողոքող Ժողովը, Բարձ-
րագոյն Դռնէն հրաման առնելով, Պատրիարքէն
կը խնդրէ՝ որ Ընդհանուր Ժողով գումարէ:

Եթէ Պատրիարքը ասոր դէմ կենայ, եղե-
լութիւնը կրկին անգամ Բարձրագոյն գրան
իմաց կը տրուի, որ այն ատեն բողոքին համե-
մատ՝ Կ. Պօլսոյ մէջ գտնուող Եպիսկոպոսաց երի-
ցագոյնին նախագահութեամբը Ընդհանուր Ժողով
գումարելու հրաման կուտայ:

Ընդհանուր Ժողովը իր մէջէն հինգ եկե-
ղեցական և հինգ աշխարհական ընտրելով,
տասն հօգիէ բաղկացեալ քննիչ Յանձնաժողով
մը կը կարգէ. բայց պէտք է որ այս քննիչնե-
րուն մէջ՝ ամբաստանող կամ բողոքող անձանցմէ
մարդ չգտնուի: Քննիչ Յանձնաժողովը եղած
ամբաստանութիւնները քննելէն ետքը՝ տեղե-
կագիր կուտայ Ընդհանուր Ժողովոյն, որ կ'որո-

չէ զխնդիրը գաղտնի քուէտրդութեամբ: Այս
որոշումը պարունակող թուղթը պէ՛տք է ստա-
րագրուած ըլլայ որոշման կողմը քուէ տուող
ժողովականներէն. և եթէ անով Պատրիարքին
հրաժարուիլը վճառած է, երկու ժողովոց տես-
նապետները Նախագահ Եպիսկոպոսին հետ Պատ-
րիարքին երթալով՝ յիշեալ թուղթը անոր կը
ներկայացընեն. որ այն ժամանակ Ազգին որոշ
կամքը իմանալով հրաժարականը տալու պար-
տաւարեալ է: Իոկ եթէ չ'ուզէ տալ, Բարձրա-
դոյն զրան իմաց կը արուի. որ պաշտօնէն կը
ձգէ զՊատրիարք:

Յօդ. 7. — Հրաժարեալ Պատրիարքը վի-
ճակաւոր Եպիսկոպոսաց կարգը կ'անցնի. և ա-
նոր վրայ ըստ կանոնի սէտք եղածը կը սնո-
րինուի Խառն Ժողովոյ կողմէն:

ՊԱՇՏՈՆ ԵՒ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹՅՈՒՆՔ

Յօդ. 8. — Պատրիարքին պարտաւորութիւն-
քըն են Սահմանագրութեան սկզբանց համեմատ
վարուիլ, և անոր ամեն կէտերուն ճշգիւ գոր-
ծադրութեանը ուշի ուշով հսկել:

Պատրիարքը իրեն եկած գործերը որ ժողո-
վոյ կը վերաշերի նէ այն ժողովոյն կը յօնանէ՝
քննութեան և որոշման համար: Ժողովոց մէջ

որոշուած գործոց վրայ Պատրիարքին քաղցիր. Գներք և կամ ուրիշ Պաշտօնական գրութիւնները վաւերական և գործադրելի չե՛ն կրնար բլլալ եթէ օրոշող ժողովոյն կողմէն ալ կնքեալ և ստորագրեալ չ'ըլլայ: Իսկ երբ ստիպողական գործ մը պատահի, որոյ անօրինութեանը համար կարելի չ'ըլլայ մինչև ժողովոյն գումարման օրը սպասել և կամ արտաքոյ կարգի ժողով գումարել, Պատրիարքը կրնայ պէտք եղածը ինքնին տնօրինել, իր վրայ առնելով պատասխանատուութիւնը. բայց պարտաւորեալ է եղելութիւնը արձանագրել տալ կանոնաւոր կերպիւ, և որ ժողովոյն կը վերաբերի նե՛ տնօր յաջորդ նիստին ներկայացունել վաւերացման համար:

Յօդ. 9.— Պատրիարքը իր բացակայութեանը ատեն Ազգային ժողովներու մէջ տըրուած որոշումները պարունակող թուղթը գեռ չ'ստորագրած, կարող է անոնց վրայ իր գիտալովութիւններն յայտնելով, խնդիրը կրկին քննութեան յանձնել: Իսկ այս վերաքննութենէն ետքը՝ պարտաւորեալ է նոյն թուղթերը ստորագրել, եթէ տրուած որոշումը Սահմանադրութեան տրամադրութեանցը տնհամաձայն չ'դնեն:

Յօդ. 10.— Պատրիարքը կրնայ՝ Սահմա-

նադրութեան սկզբանցը համեմատ չը վարուող
Եկեղեցական մը, վարժապետ մը, Եկեղեցւոյ,
Վանքի, Դպրոցի կամ Հիւանդանոցի գործակալ
մը, պաշտօնէն հանելու առաջարկութիւն ընել
ձեռնհաս ժողովոյն կամ Խորհրդոյն:

Յօդ. 11. — Պատրիարքը իրաւունք չունի
ինքնին լուծել և փոխել կրօնական և Քաղա-
քական ժողովները և անոնց վերաբերեալ Խոր-
հուրդները: Բայց երբ տեսնէ թէ ասոնցմէ մէ-
կը Սահմանադրութեան սկզբանցը հակառակ
ընթացքի մէջ է, առաջին անգամին բացառ-
ութիւն կ'ուզէ ա'յն ժողովոյն կամ Խորհրդոյն
Ատենապետէն, երկրորդին՝ իմաց կուտայ անոր
ապօրինաւոր ընթացքը և 'ի կանոնապահութիւն
կը հրաւիրէ զայն. իսկ երրորդին՝ Ընդհանուր
Ժողովոյն կը դիմէ, եթէ ամբաստանելին Ազ-
գային ժողովներէն մէկն է, կամ Քաղաքական
Ժողովոյն կը դիմէ, եթէ Խորհուրդներէն մէկն է
և պատճառները ցուցնելով՝ ամբաստանեալ
Ժողովոյն կամ Խորհրդոյն լուծումը կ'առաջարկէ:

Յօդ. 12. — Պատրիարքը Ազգային սնտու-
կէն իրեն յատկացեալ ժամական ուկեհալով, ինք
կը տեսնէ Պատրիարքարանին ներքին ծախքը:

Բ. ՊԱՏՐԻԱՐԺԱՆԱՆ ԳԻՐԱՆԱՏՈՒՆ

Յօդ. 13. — Պատրիարքարանի մէջ Դիւանատուն մը պիտի հաստատուի պէտք եղած Ազգային գրութեանց յատկացեալ :

Այս դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժնուի :

ա) Թղթակցութեան գրասենեակ որ Պատրիարքարանէն ուղարկուած և Պատրիարքարան եկած գրութիւններով կ'ըբաղի :

բ) Արձանագրութեան գրասենեակ, որ Ազգային Ժողովոց և Խորհրդաց վերաբերեալ թուղթերը կարգաւորելու կ'ըբաղի :

գ) Ազգահամարի գրասենեակ, որ ազգայնոց քաղաքական լիճակագրութեանը, այսինքն՝ ծննդեան, ամուսնութեան և վախճանման վերաբերեալ արձանագրութեանց կ'ըբաղի :

Այս վերջին գրասենեակէն կը տրուին Ազգայնոց թէ՛ ճանապարհորդութեան համար և թէ՛ ուրիշ անձնական գործառնութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը, նաև ծննդեան, ամուսնութեան և վախճանման վերաբերեալ :

Յօդ. 14. — Պատրիարքական Դիւանատունը պիտի ունենայ Դիւանապետ մի որ պատասխան

նաւոր է գիւանատան բոլոր գործառնութեանց: Քաղաքական ժողովը կ'ընտրէ և Պատրիարքը կ'անուանէ զայն: Դիւանապետը կ'ընէ նաեւ Ընդհանուր ժողովոյն գիւանադպրութիւնը:

Դիւանապետը պարտաւորեալ է ամեն տարի՝ թէ՛ Կոստանդնուպոլսոյ մէջ և թէ՛ գուքսերը ծնած, ամուսնացած և վախճանած ազգայնոց տոմարներուն օրինակները բերել տալ, և Պատրիարքարանի Դիւանապետ Ընդհանուր Ազգահաւմարին մէջ արձանագրել տալ: Դիւանապետը Հայերէն լեզուի քով հմուտ և Տաճկերէնի ու Գաղղիերէնի ալ վարժ անձ մը պիտի ըլլայ:

Յօդ. 15.— Դիւանատունը բաւական թուով Դիւանադպիրներ պիտի ունենայ: Առնք ալ հայերէն լեզուն քով գիտնալու են, և ամեն մէկը իր պայտօնին կատարեալ հմտութիւն ունենալու է: Ամեն մէկ գիւանադպիր ըստ իւր սլաշտօնի պատասխանատու է այն ժողովոյն կամ Խորհրդոյն՝ որուն կը վերաբերի: Ամէնը մէկէն պատասխանատու են Դիւանապետին:

Յօդ. 16.— Ազգահամարի գրասենեակէն արուած որ և է թուղթ և վկայագիր վաւերեցեալ պէտք է ըլլայ Պատրիարքական կնքով և Դիւանապետի ստորագրութեամբ:

Պ. ՊԱՏԻՐԱՐՔ ՍԻՐՈՅ ԵՐԱՅԱՆԱԷՄԻ

Յօդ. 17. — Երուսաղէմի Պատրիարքը Ս. Յակոբայ Աթոռոյն ցկեանս գահակալն է. միանգամայն Հայոց Ազգին սեպհական Երուսաղէմ գանձաւած ուխտաւեզիներուն տնօրէնն ու Ս. Յակոբայ վանուց Միաբանութեան նախագահն է:

Իր պարտաւորութիւնն է Ս. Երուսաղէմի վանուց Կանոնադրին արամադրութեանց համեմատ վարուիլ. և անոր բարոյք դործադրութեանը հսկել:

Յօդ. 18. — Եթէ Ս. Երուսաղէմի Պատրիարքը Սուրբ Երուսաղէմի վանուց Կանոնադրին հակառակ վարուի, ամբաստանութեան տակ կ'ընկնի:

Յօդ. 19. — Պատրիարքին վրայ ամբաստանութիւն կրնայ ըլլայ կամ յիշեալ Միաբանութեան կողմէն և կամ Կոստանդնուպոլսոյ Կրօնական և Դաշաքաւոն ժողովոց կողմէն:

Այսպիսի պարագայի մէջ՝ Ազգային Ընդհանուր Ժողով կը դումարուի. եւ եթէ եղած ամբաստանութիւն քննուելով՝ հիմնաւոր ըլլալը տեսգուի, Ընդհանուր Ժողովը՝ վեցերորդ յօդաւածին մէջ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքին վերաբերեալ արամադրութեանց համեմատ՝ ըստ

պահանջման իրին, կա՛մ 'ի կանոնապահութիւն
կը հրաւիրէ զՊատրիարքն մասնաւոր բողոքագրով,
և կա՛մ կը պարտաւորէ զայն հեռանալ Պատրի-
արքական աթոռէն, և անոր պաշտօնը կը յանձ-
նէ Տեղապահի մը՝ զոր Ընդհանուր Ժողովը
գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ Միաբանու-
թեան մէջէն:

Յօդ. 20.— Երբ Ս. Երուսաղէմի Պատրի-
արքը վախճանի, Միաբանութիւնը իր մէջէն
Տեղապահ մը կ'ընտրէ, և Ազգային Ժողովները
կը հաստատեն զայն:

Յօդ. 21.— Ս. Երուսաղէմի Պատրիարքը
կոտանդնուպօլսոյ Ազգային Ժողովներուն կողմէն
կ'ընտրուի: Բայց Միաբանութիւնը իրաւունք ունի
իր կարծիքը յայտնելու ընտրելեաց արժանաւո-
րութեան աստիճանին վրայ՝ ներկայացնան
ցուցակաւ մի: Պատրիարքին վախճանելէն ան-
միջապէս ետքը՝ յիշեալ Տեղապահը Միաբանից
Ընդհանուր Ժողով կը գումարէ: Այս Ժողովը
սնտանց ցուցակ մը կը պատրաստէ՝ կոտանդ-
նուպօլսոյ Պատրիարքի ընտրութեան համար
կոտանդնուպօլսոյ Եկեղեցական համագումար
Ժողովոյն ըրած կերպիւր: Բայց պէտք է որ
Միաբանութեան ներկայացուելիք այս ցուցակը

գոնէ եօթն ընտրելեաց անուն պարունակէ։ Այս
ցուցակը միաբանութեան կողմէն ստորագրեալ
յայտագրով կոտորանգնուպօլսոյ Պատրիարքարան
կ'աւղարկուի։

Յօդ. 22.— Ս. Երուսաղէմի Պատրիարք
ընտրուելու փնէք զո'նէ երեսուն և հինգ տարին
լրացուցած, և ի ծնէ Օսմանեան Տէրութեան
հպատակ, Միաբանութեան Սպիսկոպոսներէն կամ
Վարդապետներէն պէտք է ըլլայ. միանգամայն
Միաբանութիւնէն զատուած մէկը պէտք չէ ըլ-
լալ։

Միաբանութիւնէն զատուած չեն համարուիր
այն անձինքը՝ որ Պատրիարքարանի ժողովոց
կողմէն աղգասյին պաշտօնի մէջ գործածուած
են՝ Երուսաղէմի Պատրիարքին հաւանութեամբ։

Յօդ. 23.— Կրօնական և Քաղաքական Ժո-
ղովները Խառն ժողով կազմելով, վերոյիշեալ
ցուցակին մէջ յիշատակուած անձանց արժանիքը
կը քննեն, և երեք ընտրելի որոշելով անուննե-
րը Ընդհանուր Ժողովոյն կը ներկայացնեն։ Մի-
աբանութեան կողմէն եկած ցուցակն ալ Ընդ-
հանուր Ժողովոյ արահին մէջ կախուած կ'ըլլայ։

Ընդհանուր Ժողովը ընտրելեաց զրաջօք թէ՛
Միաբանութեան և թէ՛ Աղգասյին երկու ժողովոց

կարծիքը իմանալով, անոնց մէջէն կրօնից և ուսման և բարի վարուց նկատմամբ ամենէն աւելի արժանաւորութիւն ունեցող անձը կ'ընտրէ՝ գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ:

Ընդհանուր ժողովոյ մէջ՝ Խորանութեան կողմէն ներկայացուած ցուցակէն գուրս անձի վրայ քուէարկութիւն չ'կրնար ըլլալ:

Գ. ԱՁԳԱՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺԱՂՈՎ

Յօդ. 24.— Կրօնական ժողովը կը բաղկանայ տասն և չորս բանիբուն եկեղեցականներէ, որոնք գո'նէ երեսուն տարին լրացուցած, և գէթ չ'ինք տարիէ 'ի վեր ձեռնադրուած պիտի ըլլան:

Յօդ. 25.— Եկեղեցական համագումար ժողովը գաղտնի քուէարկութեամբ՝ Ազգային Կրօնական ժողովոյ անդամոց թիւոյն եռանգաւորիկը կ'ընտրէ, և ընտրելեաց անունները ստորագրեալ յայտագրով Ազգային Ընդհանուր ժողովոյն կը ներկայացընէ:

Ընդհանուր ժողովն ալ անոնց մէջէն գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ Կրօնական ժողովոյ անդամները: Տեղեկագիրը Պատրիարքին կողմէն Բարձրագոյն Դրան կը ներկայացուի, եւ

Կրօնական ժողովոյ այսպէս ընտրուած անգամ՝
ները Կայսերական հրամանաւ կը հաստատուին :

Յօդ. 26. — Կրօնական ժողովը երկու տա-
րին անգամ մը ապրիլի վերջը ամսոյջ կը
լուծուի, և մայիսի սկիզբը կը նորոգուի : Այս
ժողովոյ անգամները անմիջապէս վերընտրելի
չեն. բայց երկու տարի ետքը կրնան նորէն
ընտրուիլ :

Յօդ. 27. — Երբ Կրօնական ժողովոյ ան-
գամներէն հրաժարական տուող և կամ ուրիշ
պատճառաւ պակսողներուն թիւը երեքի հասնի,
անոնց տեղ ուրիշներ կ'ընտրուին Ընդհանուր
ժողովով : Բայց մինչեւ որ այս ընտրութիւնն
ըլլայ, Կրօնական ժողովոյ մէջ բոլոր անգամոց
մեծագոյն մասը կը փնտռուի :

Յօդ. 28. — Կրօնական ժողովոյ պաշտօնն
է Ազգային Կրօնական գործոց ընդհանուր տես-
չութիւնը : Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին
մէջ կրօնական զգացումը զարգացունել, Հա-
յաստանեայց Եկեղեցւոյ գաւառութիւնն ու ա-
ւանգութիւններն անխախտ պահել, Եկեղեցեաց
և Եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել,
Եկեղեցականաց ներկայ վիճակը լաւցունելու
և ապագայն անգործելու և ապահովցունելու

միջոցները ձեռք բերելու հոգ տանելու Ազգային վարժարանաց երբեմն այդեղութիւն ընկնով՝ Պրիստոնէական Վարդապետութեան օւսուցման վրայ հսկողութիւն ընել . արժանաւոր և բանիւ բուն վարդապետներ և քահանայներ հասցունել , և Աղգին մէջ ծագած կրօնական վէհերը քըննելով՝ Եկեղեցւոյ օրինաց համեմատ լուծել :

Յօդ .— 29 .— Կրօնական ժողովը երբ չը կարենայ ինքնին լուծել զուտ կրօնական կարեւոր խնդիր մը , Եկեղեցական համագումար ժողով կը կազմէ՝ Կոստանդնուպօլիս գտնուող Եպիսկոպոսները , Եկեղեցեաց քարոզիչ Վարդապետները , Աւագերէցներն ու Աթոռակալները , և թէ հարկ ըլլայ՝ նաև շրջակայ գաւառաց Աւաջնորդները հրաւիրելով : Եթէ Եկեղեցական համագումար ժողովն ալ խնդիրը իր ձեռնհասութենէն վեր դատէ , այն ժամանակ՝ Ընդհանրական Կաթողիկոսին կը գիմէ՝ ստորագրեալ տեղեկագրով :

Յօդ . 30 .— Կրօնական ժողովոյ ամեն տեսակ տեղեկագիրները՝ միշտ անդամոց մեծագոյն մասին կողմէն ստորագրեալ պիտի ըլլան :

Յօդ . 31 .— Թէ՛ Կոստանդնուպօլսոյ և թէ՛ գաւառներու մէջ՝ Վարդապետի ձեռնագրութեան

համար պէտք եղած հրամանը Ազգային Կրօնական Ժողովոյ կողմէն կը տրուի։ Իսկ Քահանայի Առնագրութեան համար՝ եթէ Պօլսոյ մէջ է՝ նոյն Կրօնական Ժողովէն, և եթէ դաւաաներութեան մէջ է՝ աեղանոյն Կրօնական Ժողովէն կը տրուի։

Յօդ. 32.— Մինչև որ Եկեղեցւոյ մը Քահանաներն ու Թաղական խորհուրդը նոր քահանայ Առնագրել տալու կարեւորութիւնը չաեանեն, և ստորագրեալ տեղեկագրով Կրօնական Ժողովոյ խնդիր չընեն, Առնագրութեան հրաման չ'տրուիր։

Յօդ. 33.— Կրօնական Ժողովը կ'ընտրէ Կոստանդնուպօլսոյ Եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցները, և Պատրիարքը կ'անուանէ զանոնք։

Յօդ. 34.— Կրօնական Ժողովոյ մէջ ամեն աեսակ ընտրութիւն դադանի քուէարկութեամբ կ'ըլլայ։

Յօդ. 35.— Կրօնական Ժողովը կանոնագիր մը պէտք է շինէ Եկեղեցականաց ներկայ վիճակին բարեւարութեան և ապագային անդորրութեանը համար, որպէս զի իրենց հոգեւորական պաշտօնները կարենան ձրի կատարել։

Ե. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ . 36 .— Քաղաքական ժողովը կը բաղկանայ Ազգային գործաց և Տէրութեան օրինաց տեղեակ քսան աշխարհականներէ :

Յօդ . 37 .— Քաղաքական ժողովոյ անդամները գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգային Ընդհանուր ժողովոյ մէջ կ'ընտրուին, և տեղեկագիրը Պատրիարքի կողմէն Բարձրագոյն Դրան մատուցուելով՝ Կայսերական հրամանաւ կը հաստատուին :

Յօդ . 38 .— Քաղաքական ժողովը երկու տարին անգամ մը ապրիլի վերջը ամբողջ կը լուծուի, և մայիսի սկիզբը կը նորոգուի :

Այս ժողովոց անդամները երկու տարի անցնելէն ետքը նորէն կրնան ընտրուիլ : Եւ թէպէտ առջի երկու տարին Քաղաքական ժողովոյ համար վերընտրելի չեն, բայց ուրիշ որ և է ազգային պաշտօնի մէջ կրնան գործածուիլ :

Յօդ . 39 .— Եթէ Քաղաքական ժողովոյ անդամներէն մէկը, առանց բանաւոր պատճառի մատուցելու գրով, երեք անգամ իրարու վրայ ներկայ չգտնուի, նոյն ժողովոյ ատենապետի կողմէն անոր նամակ գրուելով՝ չ'գալուն պատճառը կը հարցուի : Եթէ պատասխան չ'առնուի,

երկրորդ զրութեամբ իմաց կը տրուի իրեն որ՝
եթէ յաջորդ նիստին ալ ներկայ չ'գտնուի, իբ-
րե հրաժարեալ պիտի համարուի, և եթէ գորե-
եալ չ'ներկայանայ, հրաժարականը տուած պի-
տի սեպուի:

Յօդ. 40. — Երբ Քաղաքական ժողովոյ
հրաժարական տուող կամ ուրիշ պատճառաւ
պակասող անգամաց թիւը երեքի հասնի, անոնց
տեղ ուրիշ անգամներ կ'ընտրուին Ընդհանուր
Ժողովով: Բայց մինչեւ որ այս ընտրութիւնն
ըլլայ, Քաղաքական ժողովոյ մէջ բոլոր ան-
գամաց մեծագոյն մասը կը փնտռուի:

Յօդ. 41. — Քաղաքական ժողովոյ պաշ-
տօնն է Ազգային քաղաքական գործոց ընդհա-
նուր անսշութիւնը: Իւր պարտաւորութիւնքն են
Ազգին բարեկարգութեան և յառաջդիմութեան
մտազրութիւն և փոյթ ունենալ, իր տեսչու-
թեան տակ գտնուող Խորհրդոց կողմէն մատուց-
ուած ազգօգուտ առաջարկութիւնները ուշադրու-
թեամբ քննել, և անոնց կարեւորութիւնը յայտ-
նուելէն ետքը՝ հաստատել կամ գործադրութեան
արդելիքները բառնալու ջանք ընել:

Յօդ. 42. — Քաղաքական ժողովը իրեն
եկած գործերը ո՛ր Խորհրդոյ վերաբերեալ ըլլան՝

քննելու համար այն խորհրդոյն կը յանձնէ, և մինչև որ անոր կարծիքը չ'առնու՝ չ'կրնար գործադրութեան ձեռնարկել։ Եւ թէպէտ կրնայ իրաւացի պատճառներով հերքել մէկ խորհրդոյ ըրած որոշումը, բայց ինքնին ուրիշ անօրինութիւն չ'կրնար ընել նոյն նիւթին վրայ։ Եւ կը պարտաւորի դարձեալ նոյն խորհրդոյն յանձնել գործը։ Քաղաքական ժողովը չը կրնար նաեւ փոխել կամ լուծել Ազգային խորհուրդներէն մէկը, քանի որ չը տեսնէ զայն Սահմանադրութեան հիմնական սկզբանց հակառակ ընթացքի մէջ։ Բայց երբ տեսնէ անոնց մէկը այսպիսի ընթացքի մէջ, առաջին անգամին՝ բացատրութիւն կ'ուզէ նոյն խորհրդոյ ատենապետէն, երկրորդ անգամին՝ անոր գրով աղաարարութիւններ ընելով, 'ի կանոնապահութիւն կը հրաւիրէ։ Իսկ երրորդին՝ անդամները կը փոխէ միայն թէ այս մասին ունեցած պատճառները պիտի բացատրէ Ընդհանուր ժողովոյ ներկայացնելու երկամեայ տեղեկագրին մէջ։

Յօդ. 43.— Քաղաքական ժողովը երբ իրեն եկած քաղաքական գործերէն կարեւոր խնդրոյ մը լուծումը իր ձեռնհասութենէն վեր դասէ, Ընդհանուր ժողովոյն կը դիմէ։

**Ձ. ՓԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՂԱՂԱՅ ԿՈՂՄԷՆ
ԿԱՋՄՈՒՄԸ ԱՋԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԳ
ՆԻ ՀՈՐՀԱՐԱՐՁՈՒԹՅՈՒՆՔ**

Յօդ. 44. — Ուսումնական, Տնտեսական և Դատաստանական գործոց և վանօրէից ճեշդութեան համար չորս Խորհուրդ. և մասնակարարութեան պաշտօնով՝ երեք Հոգաբարձութիւն պիտի հապտատուի Բաղաքական Ժողովոյ կողմէն. Այս Խորհրդոց և Հոգաբարձութեանց անդամները երկու տարի պաշտօն կ'ը վարեն. այն պայմանով որ ամեն տարեգլուխ կիսով չափ նորոգուին:

Դատաստանական խորհրդոյ նախագահը կ'ը Պօլսոյ Պատրիարքի փոխանորդն է:

1. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Յօդ. 45. — Ուսումնական խորհուրդը եօթն ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ:

Ուսումնական խորհրդոյն պաշտօնն է՝ Հայոց Ազգին գաստիարակութեան և կրթութեան բնահանութեան տեսչութիւնը: Իր պարտաւորութիւնքն են Ուղղային վարժարանաց բարեկարգութեանը հրահեւ, թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ ազայոց գաստիարակութեանը հոգ տանելու նպատակաւ հաս-

առատուած ընկերութիւններուն խորհուրդա տալ և
 ձեռնարկ ըլլալ, դպրատանց գաւառապետներուն
 կազմութիւնը լուստնելու և ապագայն անգործ
 լու խնամ տանիլ. Ազգին մէջ յաջողակ և քառ
 ջանքով գաւառապետներ հասցունելու, և դպրո-
 ցական գաւառիքեր պատրաստելու. Զանք և
 փոյթ ունենալ:

Ուսումնական խորհուրդը Ազգային վարժա-
 րանաց մէջ ուսմունքնին լրացունող աշակերտաց
 վկայական կուտայ. ուսմանց գաւառիքերը
 կ'որոշէ, և տարեկան քննութիւնները կը կատարէ:

Իսկ կրօնական ուսմանց համար կրօնական
 ժողովին կը դիմէ, վասն զի այս ժողովը կ'որոշէ
 կրօնական գիտութեանց գաւառիքերը և դառա-
 տունները, քննութիւնները կ'ընէ և վկայականը
 կուտայ:

2. ՑՆՑՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 46. — Տնտեսական խորհուրդը կը
 բաղկանայ եօթն տնտեսագէտ աշխարհականներէ,
 զորս Դաշնաբան ժողովը կ'ընտրէ քուէից ա-
 գաւելուիեամբ:

Տնտեսական խորհրդոյն պաշտօնն է՝ Կ. Պօլսոյ մէջ գտնուած Ազգային բոլոր Հաստատութեանց և անոնց կալուածներուն մաստակաւ րարութեան ընդհանուր տեսչութիւնը՝ Իւր պարտաւորութիւնն է՝ նոյն հաստատութեանց բարեկարգութեանը անխնայ հրակեղ և հոգ տանիլ :

Տնտեսական խորհուրդը պէտք է հոգ տանի որ ամեն Ազգային կալուած օրինաւոր կալուածագիր ունենայ : Թէ՛ Կ. Պօլսոյ և թէ՛ գաւառներու մէջ գտնուած ազգային անշարժ ստացուածոց կալուածագրերուն օրինակները՝ Տնտեսական խորհրդոյ ձեռք ժողովուելով՝ Պատրիարքարանի գիւանատան մէջ պիտի պահուին :

Ազգային ո՛ր և է կալուածոյ գնումն ու վաճառումը չ'կրնար տեղի ունենալ, առանց Տնտեսական խորհրդոյ գիտութեան, Քաղաքական ժողովոյ հանութեան և Պատրիարքի կնքով հաստատութեան :

Այս տրամադրութեանց ուժովը Եկեղեցիներու միւրեւնէյի իւրօրին ըսուած բանը վերցուած է Հայոց Ազգին համար :

Կ. Պօլսոյ և չըլայից մէջ՝ Ազգային ո՛ր և է շինութեանց կամ վերանորոգութեանց չ'կրնար ձեռնարկուիլ, առանց գիտութեան Տնտեսական

Խորհրդոյ, և հաճութեան Քաղաքական ժողովոյ:

Տնտեսական Խորհուրդը՝ ազգային Ելեմտից, Կտակաց և Հիւանդանոցի Հոգաբարձութիւններուն Նաև Թաղական Խորհուրդներուն մատակարարութեանը վրայ հսկողութիւն պիտի ընէ. և ասոնց ամեն մէկէն որոշեալ ժամանակներ համար պահանջելով, Քաղաքական ժողովոյն պիտի հաշորդէ:

Տնտեսական Խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ՝ յետագայ տարւոյ մէջ ըլլալիք հասոյթն ու ծախքը Ելեմտից Հոգաբարձութենէն օտուդերով, հաշուեկշիռը պիտի պատրաստէ և Քաղաքական ժողովոյն ներկայացունէ:

Յ. ԴԱՅԱՍՑԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 47. — Դատաստանական Խորհուրդը կը բաղկանայ ութ իրաւագէտ, և ամուսնացեալ և քառասուն տարին լրացուցած անձերէ, որոնց չորսը եկեղեցական և չորսը աշխարհական պիտի ըլլան:

Դատաստանական Խորհրդոյ նախագահը Պատրիարքի փոխանորդն է. և անգամներուն բոլորն ալ Խառն ժողովոյ կողմէն կ'ընտրուին՝ քուէից օրաւերութեամբ:

Դատաւանական Խորհրդոյ պաշտօնն է՝
ընտանեկան վէճերը լուծել, և Բ. Դրան կողմէն
Պատրիարքարան յանձնուած գատերը՝ յանձնա-
րարութեան համեմատ քննել և որոշել:

Երբ պատահի այնպիսի գատ մը զոր Դա-
տաւանական Խորհուրդը իր ձեռնհասութենէն
վեր գտարէ, ըստ պահանջման խնդրոյն կամ
Կրօնական կամ Քաղաքական և կամ Խառն Ժո-
ղովոյն յանձնուելուն հարկաւորութիւնը կը
քաջնէ:

Եթէ Դատաւանական Խորհրդոյն մէջ որո-
շուած գտարի մը դէմ բողոքէ գատապարտեալը,
խնդիրը վերադառն կը քննուի յիշեալ Ժողովներէն
մէկուն մէջ՝ որո՛ւն որ կը վերաբերի:

4. ՎԱՆՔՐԷՆԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 48. — Վանքերն Ազգին սեպհական
ստորաբաժինն ըլլալով. Ազգին կը վերաբերի
պնոնց մատակարարութեան, հասութից ու ծա-
խուց ընդհանուր տեսչութեան և քննութեան
խաւուսնքը:

Ըստ սրում հարկաւոր է որ ամեն վանք
իրեն համար յատուկ կանոններ սահմանայ, կեդրո-
նական վարչութեան Կրօնական և Քաղաքական

Ժողովները Խառն ժողով կազմելով, Իւրաքանչիւր Վանքի Միաբանութեան, նաեւ Վանօրէից խորհուրդին կարծիքն առնելէ ետքը, պէտք եղած կանոնադրութիւնը կը պատրաստեն, և Ազգային Ընդհանուր Ժողովոյ հաստատելը կուտան:

Սոյն կանոնադրութեանց հիմնական սկզբունքն են:

ա) Իւրաքանչիւր Վանքի մասնաւոր մասնակարարութիւնը իր Միաբանութեան կը վերաբերի: Իսկ ամենուն վրայ ընդհանուր տեսչութիւն ընելու իրաւունքը կեդրոնական Վարչութեան կը վերաբերի, որ կը գործադրէ Վանօրէից խորհրդին ձեռօք:

բ) Իւրաքանչիւր Վանքի Վանահայրը իր Միաբանութեան կազմէն կ'ընտրուի, և կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ հաւանութեամբը Պատրիարքի ձեռօք կը հաստատուի:

Վանահայր ըլլալու անձը պէտք է որ երեսունուհինգ տարին լրացուցած, և Օսմանեան Տէրութեան հպատակ Վարդապետներէն ըլլայ:

գ) Բոլոր Վանքերը Ազգին բարոյական գաղափարները ծառայելու պարտաւոր են, աւստի առժէն մէկը իր կարողութեան չափով՝ ունենալու

է Ընծայարան , Թանգարան , Տպարան , Հիւանդանոց , և ասոնց պէս ուրիշ աղօթօգուտ հաստատութիւններ :

Վանօրէից Խորհուրդը կը բաղկանայ եօթն անձերէ , զոր Քաղաքական Ժողովը կ'ընտրէ քուէից առաւելութեամբ :

Վանօրէից Խորհուրդին պաշտօնն ու պարտաւորութիւնն է՝ իւրաքանչիւր Վանքի կանոնաց գործադրութեանը հսկել և վերատեսչութիւն ընել . եկամուտներն ու հասոյթները ստուգել և ծախքերը քննել ու կանոնաւորել :

Վանօրէից Խորհուրդը կ'ընտրէ վանականներուն մէջէն իւրաքանչիւր Վանքի ժառանգարութեան պաշտօնին համար պէտք եղած անձինքը : Ասոնք՝ Վանահօր նախագահութեամբ՝ և իրենց Վանքին յատկացեալ կանոններուն համաձայն Վանքը տնտեսելով , որոշեալ ժամանակներ՝ հաշուեհամար կուտան Վանօրէից Խորհուրդին :

Ծ. ԵԼԵՒԾՅԻՑ ՀՈՂԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 49. — Ելեւմտից Հոգարարութիւնը կը բաղկանայ եօթն հաշուադէտ անձինքէ , զոր Քաղաքական Ժողովը կ'ընտրէ քուէից առաւելութեամբ :

Ելեմիայի Հոգաբարձութեան պաշտօնն է Ազգային կեդրոնական Մետուկին տնտեսութիւնն ու համարակալութիւնը :

Այս Մետուկին մուտքն են՝ Ազգային Ընդհանուր տուրք, կոստանդնուպօլսոյ Պատրիարքական Դիւանատան հասոյթք, և առանց մասնաւոր տեղ մը որոշելու Ազգին առուանը եղած կտակ կամ նուէր : Ելքն են՝ Պատրիարքարանի և Դիւանատան սովորական ծախք, կեդրոնական Վարչութեան ձեռքը եղած Ազգային հաստատութեանց և կարօտեալ թաղերու տրուելիք նըպաստ, և զանազան ուրիշ պատահական ծախք :

Ելեմիայի Հոգաբարձութիւնը կը հաւաքեամեն այս հասոյթները, և իր ձեռօք կ'ըլլան յիշեալ ծախքերը : Միշտ Տնտեսական Խորհուրդին գիտութեամբը և Քաղաքական Ժողովոյ հաւանութեամբը :

Ելեմիայի Հոգաբարձութիւնը պարտաւոր է իր տնտեսութեան յանձնուած Ազգային Մետուկին հաշիւը Տօմարաղալութեան կանոնաւ կարգադրել և որոշեալ ժամանակներ հայտնեցուցակ ներկայացնել Տնտեսական Խորհուրդին, որ ստուգելով և վաւերացունելով կը հաղօրդէ Քաղաքական Ժողովոյն :

Ե. ԿՅԱԿԱՅ ՀՈՂԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 50. — Կտակաց Հոգարարձութիւնը կը բաղկանայ եօթն անկիւնքէ, որոնց երեքը եկեղեցականն և շորսը աշխարհական՝ Խառն Ժողովով կ'ընտրուին քուէից տաւաւելութեամբ:

Կտակաց Հոգարարձութեան պաշտօնն է՝ ազգային կտակաց տնօրէնութիւնը: Իր պարտաւորութիւնն է՝ կտակաց օրինաւոր կերպիւ և կտակարարին նպատակին և զիտաւորութեանը համեմատ գործադրութեանը հսկել:

Կտակաց Հոգարարձութեան համար պէտք ձգած ժառանգար Կանոնադրութիւնը՝ Խառն Ժողովը պիտի պատրաստէ Կտակաց Հոգարարձութեան և Տնտեսական Խորհուրդին կարծիքն առնելով, և Ընդհանուր Ժողովը պիտի հաստատէ:

Կտակաց Հոգարարձութիւնը որոշեալ ժամանակներ իր պաշտօնին վերաբերեալ հաշիւները պիտի ներկայացունէ Տնտեսական Խորհուրդին, որ անսղակիւ և վաւերացուննելով պիտի հաղորդէ Քաղաքական Ժողովոյն:

7. ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ՀՈԴԱՐԱՐՃՈՒԹԻՒՆ

Յօդ. 51. — Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կը բաղկանայ ինն անձինքէ, զոր Քաղաքական ժողովը կ'ընտրէ քուէից առաւելութեամբ:

Ասոնց երկուքը վկայեալ բժիշկ պիտի ըլլան:

Հիւանդանոցի Հոգաբարձութեան պաշտօնն է՝ Ազգային Հիւանդանոցը և տնոր սեպհական կալուածներն ու եկամուտները տնտեսել, և անոնց հասոյթովն ու Ազգային Մտուկին նպաստիւր մատակարարել զայն:

Այս հաստատութիւնը չորս շրջանակի բաժնուելով, մէկը՝ աղքատիկ հիւանդները դարմանելու, երկրորդը՝ ծեր և անկար աղքատները պատսպարելու, երրորդը՝ խելագարները խնամելու, և չորրորդը՝ օրը և անտէրունջ աղաքը դաստիարակելու պիտի յատկանան:

Այս շէնքին կարգադրութիւնն ու տնտեսութիւնը բժշկական և առողջապահիկ կանոնաց համեմատ պիտի տնօրինուին:

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը այս հաստատութեան տնտեսութեան մասին՝ Տնտեսական Խորհուրդին, և դաստիարակութեան մասին՝ Ուսումնական Խորհուրդին պատասխանատու է, և

սոյն Խորհրդոց որոշեալ ժամանակներ համար
պիտի տայ իր գործողութեանց վրայ :

Է. ՓԱՂԱԿԱՆ ԽՈՐՀԱՅԻՆՆԵՐ

Յօդ. 52. — Թաղական Խորհուրդները կը
բաղկանան ըստ տեղւոյն՝ հինգէն մինչև տասներ-
կու անդամներէ :

Թաղական Խորհուրդին պաշտօնն է՝ թաղին
ժողովրդեան ազգային գործոց մատակարարու-
թիւնը. Եկեղեցւոյ և Դպրատան Հոգաբարձու-
թիւնը. աղքատաց խնամակալութիւնը, և ազ-
գայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն
ու խաղաղարարութիւնը :

Իր պարտաւորութիւնքն են՝ թաղին Եկեղե-
ցւոյ պայծառութեանը խնամ տանել. թաղին
մէջ թէ՛ աղջիկ և թէ՛ մանչ տղայոց դաստիա-
րակութեան համար՝ դպրատուններ հաստատելու
ջանք ընել. և թաղին կարօտեալ ընտանեաց
ձեռնտուութիւն ընել :

Յօդ. 53. — Ամեն թաղ մէկ մէկ Սնտուկ
պիտի ունենայ՝ Թաղական Խորհուրդին տնօրէ-
նութեանը տակ :

Այս Սնտուկին մուտքն են՝ թաղին ժողովրդեան կողմէն տրուած թաղական տուրքը. եկեղեցւոյ և Դպրատան կալուածոց եկամուտները. եկեղեցւոյ հասոյթները. կտակաւ կամ ուրիշ կերպիւ եղած նուէրները եւյլն. եւ քն են՝ թաղին եկեղեցւոյ և Դպրատանց ծախքն ու տղաբաւար տրուելիք օգնութիւնները:

Ամեն թաղական Խորհուրդ իր թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւնը պիտի ընէ կանոնաւոր կերպով մասնաւոր Տումարի մը մէջ:

Յօդ. 54.— Թաղական Խորհուրդները՝ իրենց պաշտօնին վերաբերեալ գործոց մէջ Տեսուչ Խորհուրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ունին. այսինքն՝ գպրատանց համար՝ Ուսումնական Խորհուրդին հետ. տնտեսական և գրամական գործոց համար՝ Տնտեսական Խորհուրդին հետ. գետի վերաբերեալ գործոց համար՝ Դատաստանական Խորհուրդին հետ. եւ ասոնց ամէն մէկին որոշեալ ժամանակներ համար պիտի տան իւրաքանչիւրին վերաբերեալ գործոց վրայ:

Յօդ. 55.— Իւրաքանչիւր Թաղական Խորհուրդ իր թաղին ժողովրդեան կողմէն կ'ընտրուի:

Ամեն աղքատին անհատ որ քսան և հինգ տարին լրացուցած է. և ըստ 67րդ. յօդուածոյ Սահմանադրութեան՝ ընտրութեան իրաւունքէն դատաւարանապէս զրկուած չէ, իրաւունք ունի մասնակից ըլլալ ընտրութեան թաղական խորհրդոյ անդամոց:

Յօդ. 56. — Թաղական խորհրդոց պարտաւորութիւնն ու ընթացքը սահմանելու համար պէտք եղած կանոնադրութիւնը կրօնական և Գաղաքական ժողովներուն ձեռօք պիտի շինուի:

Թաղական խորհրդոց անդամներուն պաշտօնը չորս տարի կը տեւէ. հինգերորդ տարւոյն սկիզբը կը նորոգուին, և անմիջապէս վերընտրելի են:

Ը. ԱՁԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՂՈՎ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 57. — Ազգային Ընդհանուր Ժողովը հարիւր քառասուն երեսփոխաններէ կը բաղկանայ. որոնց՝

ա) Մէկ եօթներորդ մասը, այսինքն քառասուն, եկեղեցական երեսփոխանք են, զոր կոտանդնուպօլսոյ մէջ գտնուող եկեղեցականք կ'ընտրեն:

բ) Երկու եօթներորդ մասը, այսինքն քառասունը, գաւառներէն գալիք Ազգային երեսփոխանք են:

գ) Զորս եօթներորդ մասը, այսինքն ութսունը, Կոստանդնուպօլսոյ խաղերէն ընտրուած երեսփոխանք են:

Յօդ. 58. — Կրօնական և Քաղաքական Ժողովոց անդամները Ընդհանուր Ժողովին ներկայ կը գտնուին. բայց եթէ երեսփոխան ընտրուած չեն՝ Ընդհանուր Ժողովին մէջ քուէ չ'ունին:

Յօդ. 59. — Ընդհանուր Ժողովը նիստ չ'կրնար ընել՝ մինչև որ անդամաց մեծագոյն մասը՝ այսինքն զո՛նէ եօթանասունումէկ հոգի ներկայ չըլլայ:

Յօդ. 60. — Ընդհանուր ժողովին պաշտօնն է՝ Պատրիարքը, Կաթողիկոսը և Ազգին գլխաւոր պաշտօնատարները, և Կրօնական ու Քաղաքական Ժողովոյ անդամները ընտրել. Ազգային ժողովոց վարչութեանը հսկողութիւն ընել. սոյն ժողովներուն վերաբերեալ՝ բայց իրենց ձեռնհասութենէն վեր համարուած գործերը որոշել և վճռել. և Ազգային Սահմանադրութիւնը անխախտ պահել:

Յօդ. 61. — Ընդհանուր ժողովը կը գումարուի՝

ա) Ըստ վաղեմի սովորութեան ամեն երկու տարին անգամ մը. ապրիլ ամսոյ վերջերը՝ Ազգային վարչութեան երկամեայ ընթացքին տեղեկագիրը մտիկ ընելու, և Ելեմտեան պաշտօնակալաց ձեռօք ժողովուած և ճախս եղած գումարներուն ընդհանուր հաշիւը տեսնելու և քննելու, Կրօնական և Քաղաքական Ժողովոց բոլոր անդամները փոխելով՝ ուրիշներ ընտրելու, և յետագայ երկու տարուան մէջ Ազգային տուրքը խնչպէս անօրինուելիքը սահմանելու համար:

Սոյն երկ-տարեկան ժողովը ռկսած օրէն մինչև երկու ամիս տեւելով իր նիստերը կը վերջացունէ:

Ընդհանուր ժողովոյ այս նիստերուն մէջ՝ միանգամայն Ազգային Վարչութեան ժողովներուն անգամ՝ զանազակ Երեսփոխանները ամեն խնդրոյ վրայ կրնան խօսիլ և բայց աւելի և ընտրութեան խնդիրներէն զատ՝ ուրիշ խնդիրներու մէջ չեն կրնար քուէ տալ ։

բ) Կաթողիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար ։

գ) Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի Պատրիարքները ընտրելու համար ։

դ) Կրօնական և Քաղաքական Ժողովոց մէջ, կամ Պատրիարքին ու ժողովոց մէջ պատահած անհամաձայնութիւնը բառնալու համար ։ Սոյն պարագայից մէջ՝ անհամաձայնութեան ենթակայ Եզոզ կողմերը Ընդհանուր ժողովոյ մէջ խօսք միայն ունին և ո՛չ քուէ ։

ե) Ազգային Սահմանադրութեան վերաքննութեանը համար ։

Եւ վերջապէս այնպիսի խնդիրներու համար որոնց վրայ որոշում տալը Ընդհանուր ժողովոյն կը վերաբերի ։

Սակայն այս տեսակ արտաքոյ կարգի նիստերուն տեղի ունենալէն առաջ՝ Ընդհանուր ժողովոյ գումարման պատճառը Պատրիարքարա-

նի կողմէն Բարձրագոյն Դրան իմաց տրուելով .
անոր հաճութիւնը կ'առնուի :

Յօդ. 62. — Պատրիարքը կը գումարէ Ընդհանուր ժողովրդ, Կրօնական և Քաղաքական Ժողովոց մէկուն համահաճութեամբը, և կամ նոյն իսկ Ընդհանուր ժողովոյ անդամաց մեծագոյն մասին խնդրանօքը : Միայն թէ այս կերպ արտաքոյ կարգի ժողով գումարելէն առաջ՝ գումարման պատճառը Բարձրագոյն Դրան իմաց տրուելով, անոր հաճութիւնը առնուլ հարկ է :

ՅԵՏՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ

Յօդ. 63. — Կոստանդնուպօլսոյ մէջ գրտնադ բոլոր Եկեղեցականք՝ Պատրիարքի հրաւիրանօք ապրիլ ամսոյ վերջը որոշեալ տեղ մը կը գումարուին, և դադտնի քուէարկութեամբ ու քուէից բացարձակ առաւելութեամբ Աղգային Ընդհանուր ժողովոյ Եկեղեցական անդամները կ'ընտրեն, թէ՛ Եպիսկոպոսներէն, թէ՛ վարդապետներէն և թէ՛ քահանաներէն : Բայց պէ՛տք է որ ընտրելիք՝ դուրսերը պաշտօն չ'ունենան, և հասակաւ երեսուն տարին ըրացուցած, և դոնէ՛ հինգ տարի առաջ ձեռնադրուած ըլլան, և ո՛ր և է դատաստանի տակ չը գանուին :

Յօդ. 64. — Եկեղեցական երեսփոխանաց պաշտօնը տասն տարի կը տեւէ. և երկու տարին անգամ մը՝ հինգերորդ մասը փոխուելով կը նորոգուի։ Այս հինգերորդ մասը առաջին թիւ տարիներուն մէջ՝ վիճակաւ պիտի որոշուի և հանուի. և թէ՛ վիճակաւ ելած և թէ՛ տասնամեայ պաշտօնը լրացուցած անգամները անմիջապէս վերընտրելի են։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՅԱՆԱՅ

ա) Ընտրողութեան եւ ընտելութեան պայմանք

Յօդ. 65. — Ընտրողական իրաւանց հիմն կը բռնուին Աղգային տուրքը, և անձնական արժանիքը։

Աղգային տուրքը ընտրողութեան իրաւունք տալու համար, պէ՛տք է որ ընտրողը տարին գո՛նէ եօթանասուն ու հինգ շուրուշ ընդհանուր տուրք վճարէ։

Ընտրողութեան անձնական արժանեօք իրաւունք ունեցողներն են՝ Արքուի զիւաններուն և Տէրութեան ուրիշ պաշտօններուն մէջ գտնուողները, վկայեալ բժիշկները, օգտակար գրքերու հեղինակները, գպրատանց ուսուցիչները, և ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած անէինք։

Յօդ. 66. — Ընտրողութեան իրաւունք ունին քսան ու հինգ տարին լրացուցած անձինք. ապա ընտրողք հարկ է որ Օսմանեան Տէրութեան հպատակ ըլլան:

Յօդ. 67. — Ընտրելու իրաւունքէն գատաւատանապէս զրկեալ են հետեւեալ չորս դատանձինքը.

ա) Պրէսիան յանցանօք գատապարտեալները, որոնք ըստ պատժական օրէնաց Տէրութեան՝ քաղաքականապէս մեռեալ կը համարուին:

բ) Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնուած, և Ազգային Ժողովներէն մէկուն կողմէն գատապարտուած անձինք, որոց համար Ազգային գործերու մէջ չը գործածուիլը վճռուած ըլլալ գատող ժողովին կողմէն:

գ) Տէրութեան գատարաններուն կողմէն զգաւատացուցիչ պատիժ կրողները, որոց պատժոյն պայմանաժամը գեաւ լրացած չէ:

դ) Խելագարութեան պատճառաւ անբաւական գատեալները, որոց կատարելապէս առողջացեալ ըլլալը օրինաւոր կերպիւ հաստատուած չ'ըլլայ:

Յօդ. 68. — Ընտրելի են Ազգին այն ամեն անհատները, որոնք երեսուն տարին լրացուցած ըլլալով, Օսմանեան հպատակ. Տէրութեան օրինացը տեղեակ, և Ազգային գործոց հմուտ են, և ընտրողութեան իրաւունքէն ըստ 67րդ յօդուածոյ զրկուած չեն:

Իայց Կոստանդնուպօլսոյ թաղերուն կողմէն ընտրուելիք ութսուն երեսփոխանաց դո՛նէ եօթը՝ տսփճանաւոր անձինք ըլլալու են:

բ) Եղանակ ընտրութեան

Յօդ. 69. — Կոստանդնուպօլսոյ թաղերէն և գաւառներէն ընտրուելիք երեսփոխանաց քաշկաման ցուցակը շինելու համար, ամեն երկու տարի փետրուար ամսոյ սկիզբը՝ Ազգային կրօնական և Քաղաքական Ժողովները, Տեսուչ Խորհրդոց Ատենապետներուն հետ մեկտեղելով Համախորհուրդ Ժողով կը կազմեն, և Պատրիարքական Դիւանատան ընդհանուր Ազգահամարին նայելով, ամեն մէկ թաղին ու գաւառին կողմէն քանի՞ երեսփոխան ընտրուելիքը կ'որոշեն, Պօլսոյ թաղերուն համար՝ ընտրողաց թիւը, և գաւառներուն համար՝ բնակչաց թիւը հիմն ըռնելով: Եւ այս կերպով շինուած ցուցակին

համեմատ՝ իւրաքանչիւր թաղի և գաւառի տա-
լու երեսփոխանաց թիւը Պատրիարքի ևեռօք ա-
նոնց կը ծանուցանեն։

Երեսփոխանաց պաշտօնը աասն տարի կը
տեւէ։ և երկու տարին անգամ մը՝ թէ՛ Կոս-
տանդնուպօլսոյ թաղերէն և թէ՛ գաւառներէն
ընտրուած Ազգային Երեսփոխաններուն հինգերորդ
մասը կը փոխուի և կը նորոգուի։ Այս հինգեր-
որդ մասին ընտրութիւնը պիտի կատարուի ամեն
երկու տարին անգամ մը, թէ՛ թաղերուն և թէ՛
գաւառներուն կողմէն, մէջերնին փոփոխակի
կարգ պահելով։

Այս փոփոխակի կտրղը առաջին ութ տարի-
ներուն մէջ՝ ղիճակաւ պիտի որոշուի, ուս՝
պայմանաւ որ եթէ թաղի մը ընտրողները և
կամ գաւառի մը ընակչաց թիւը աւելցած կամ
պակօած է, ա՛յն թաղին կամ գաւառին աւլու
Երեսփոխանաց թիւն ալ համեմատութեամբ պի-
տի աւելնայ կամ պակսի։

Վախճանեալ կամ հրաժարեալ Երեսփոխա-
նաց տեղ ընտրուելիք անձինքն ալ՝ ամեն
տարի տարեգլխէն երկու ամիս առաջ պէ՛տք է
ընտրուին։

Թաղական Երեսփոխանները կոստանդնուպոլսոյ Թաղերուն բնակչաց կողմէն պիտի ընտրուին իսկ գաւառական Երեսփոխանները իւրաքանչիւր գաւառի Ընդհանուր Ժողովոյ կողմէն պիտի ընտրուին :

Յօդ. 70. — Ի՞նչ Գլխոյ Թաղերէն և Թէ՛ գաւառներէն ուղղուած Երեսփոխանները՝ հարկ չէ՛ որ ընտրող Թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան . բաւական է որ կոստանդնուպոլսոյ մէջ բնակին , իրենց ներկայացուցած Թաղին կամ գաւառին ազգային գործօցը հմուտ ըլլան , և ազգասիրութեամբ , ուղղութեամբ և արդարա-
խոհութեամբ ընտրողաց յարգն ու համարումը ստացած անձինք ըլլան :

Ազգային Երեսփոխանները ո՛չ թէ զիրենք ընտրող Թաղին կամ գաւառին Երեսփոխանները կը համարուն Ընդհանուր Ժողովոյ մէջ , այլ Ազգին Երեսփոխաններն են՝ համազօր իշխանութեամբ :

Յօդ. 71. — Երկու տարին անգամ մը Գլխոյ Թաղերուն կողմէն ընտրուելիք Երեսփոխանաց հինգերորդ մասին համար՝ Պատրիարքը փետրուար տմսոյ մէջ ընտրող Թաղերուն ամեն մէկուն կը ծանուցանէ քանի՛ Երեսփոխան ընտ-

րելիքը՝ ընտրողութեան և ընտրելութեան պայմաններն ալ յիշեցունելով:

Այս ծանուցման վրայ՝ Թաղական Խորհուրդները Երեսփոխանաց ընտրութեանը կը հեռնարկեն: Բայց ընտրական գործողութեանց համար Թաղին Քարոզիչը՝ կամ անոր չը գըտնուած ժամանակը՝ Աւագերէցը նախագահութիւն կ'ընէ, և Թաղին բնակիչներէն երեքէն մինչև վեց պատուաւոր անձինք Թաղական Խորհուրդին վրայ կ'աւելցուին:

Այս կերպով կազմուած Ընտրողական Ժողովներուն ամեն մէկը՝ իր Թաղին մէջ ընտրողութեան իրաւունք ունեցողներն ստուգելով, այբուբենի կարգաւ ընտրողաց ցանկ կը պատրաստէ, և ութ օր բաց մնալու պայմանաւ Թաղական Խորհրդարանի մէջ կ'ախել կուտայ:

Ընտրողական Ժողովը ընտրողաց որոշումը գիւրացունելու համար՝ ուղարած Երեսփոխաններուն թիւէն եռապատիկ աւելի ընտրելիաց ցուցակ վճռելու կը պարտաւորուի, և ա՛յն ալ կ'ախել կուտայ Խորհրդարանին մէջ: Սակայն ընտրողք ամենեւին պարտաւորեալ չեն ընտրելեաց ցուցակին հետեւելու:

Գաւառներուն մէջ ալ՝ գաւառական Ընդհանուր Ժողովոց անդամները միեւնոյն կերպով կ'ընտրուին :

գ) Քուէարկութիւն

Յօդ. 72. — Ընտրողաց ցանկին բացուելէն շարաթ մը ետքը՝ կիւրակէ առաւօտ, ժամերդու-թեան աւարտմանէն ետքը, Թաղական Խորհրդո գարանի մէջ քուէարկութեան կ'ըսկսուի սապէս :

Թաղական Խորհրդոյ նախագահը՝ ընտրողաց ցանկը ձեռքն առած կարգաւ կը կանչէ ընտ-րողները, որք ընտրողաց ցանկին մէջ՝ իրենց անուան առջև ստորագրելէն վերջը, քանի ե-րեսփոխան աղաւած է նէ՝ այնքան անձանց ա-նուն թղթի մը վրայ կը գրեն վերէն ի վար կարգաւ. և ամեն մէկ անուան առջև մտկանուն, ընակութիւն և արուեստ նշանակելով՝ թուղթը կը ծալլեն. և յատկապէս պատրաստուած քու-էտուիին մէջ կը ձգեն : Իսկ եթէ ընտրողք պատճառաւ խիք չը կրնան գալ Խորհրդարան, ստորագրեալ նամակաւ մը քուէնին կ'ուղարկեն :

Յօդ. 73. — Քուէարկութիւնը գաղտնի է. քուէարկութիւնը քուէարկութեան արդիւնքը անմիջապէս չի հայտնուի :

իրենց քուէթուղթը, որպէս զի ուրիշ մը չը կրնայ տեսնել գրած անունները:

Յօդ. 74. Քուէարկութիւնը սկսած օրը պէտք է լմննայ: Ընտրողներէն ո՛վ որ իր քուէն նոյն օրը չը ներկայացունէ, ետքը բողոքելու իրաւունք չունի:

Յօդ. 75. — Ո՛չ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի մէջ քուէ տալ:

Յօդ. 76. — Ընտրութեան մասին միացեալ թաղերը և թեմերը՝ եթէ իրարու մօտ ըլլան, ընտրողները մէկ տեղ ժողովուելով քուէարկութիւն կ'ընեն: Իսկ եթէ իրարմէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւր թաղ կամ թեմ զատ քուէարկութիւն կ'ընէ, և ետքը երկու կողման քուէարկութեանց արգիւնքը կը միացունեն:

Յօդ. 77. — Քուէարկութիւնը կատարուելն ետքը, նոյն օրը միեւնոյն նիստի մէջ՝ Խաղական Խորհուրդին առջև քուէառուփը կը բացուի. և այս բանիս համար օրոշուած Քննիչները քուէներն համբելով, քուէարկուաց թուոյն հետ կը խաղդատեն:

Եթէ տարբերութիւն գտնուի, և Խաղական Խորհուրդը խորագախութեան կառկած սւնննայ, մինչև առաջիկայ կ'իրակի՝ միւս օր մը նորէն քուէարկութիւն ընել կ'օրոշուի:

Նմանապէս՝ եթէ ուզուած Երեսփոխանաց թիւը առաջին անգամին չի լեցուի, մնացածին համար երկրորդ անգամ քուէարկութիւն կ'ըլլայ միւս օր մը:

Յօդ. 78.— Եթէ պատահի որ քուէարկու- ներէն մէկը պէտք ելածէն աւելի թուով անուն գրած ըլլայ իր քուէթուղթին մէջ, նոյն թիւէն վերջը եկած անունները անընգունելի են. նմա- նապէս անվտեր կը համարուին այն քուէթուղ- թերը՝ որոց մէջ զանուած անունները վերէն 'ի վար կարգաւ գրուած չեն:

Յօդ. 79.— Քուէարկուաց թուոյն կէսէն աւելի քուէ ստացողներուն մէջէն՝ առաւելագոյն քուէ ստացող անէինք՝ Երեսփոխան ընտրուած են. եւ եթէ երկու անձանց հաւասար քուէ ար- ռած ըլլայ, երկրագոյնը ընտրեալ է:

Յօդ. 80.— Եթէ առաջին անգամ քուէար- կութեամբ առաւելութիւն չ'ստացուի, Թաղական Խորհուրդը կը ծանուցանէ առաւելագոյն քուէ ստացող երկու անձանց անունները, և երկրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկու անուանց վրայ կ'ըլլայ:

Յօդ. 81.— Ամեն թաղական խորհուրդ՝
իր թաղէն ընտրուած Երեսփոխանաց անունները
Պատրիարքին կը ներկայացունէ մասնաւոր տե-
ղեկագրով մը, որուն մէջ պէ՛տք է նշգիւ նը-
շանակուած ըլլալ ընտրեալներուն անունը, մա-
կանունը, բնակութիւնը, արհեստը, և քուէար-
կութեան բոլոր պարագայները:

Պատրիարքը այս տեղեկագրերը կը ներկա-
յացունէ Քաղաքական Ժողովին, որ զանոնք քննե-
լով կ'ստուգէ Երեսփոխանաց ընտրութեան
պայմանները:

Այսպէս ստուգուելէն ետքը, Պատրիարքը
Պաշտօնական կերպիւ կը ծանուցանէ Երեսփոխա-
նաց ամեն մէկուն ըստ օրինի ընտրութիւնը, և
կը հրաւիրէ զանոնք Ընդհանուր Ժողովոյ աս-
եան կազմել որոյեալ օր մը:

Յօդ. 82.— Ընդհանուր Ժողովը իր առաջին
նիստին մէջ՝ Քաղաքական Ժողովին քննած տե-
ղեկագրերը մտիկ ընելով եղած ընտրութիւննե-
րը և Երեսփոխանաց իշխանութիւնը կը վաւե-
րացունէ. օրով Ընդհանուր Ժողովը ըստ օրինի
կազմուած կ'ըլլայ:

Ընդհանուր Ժողով կրնայ գումարուիլ,
երբ Կոստանդնուպօլսոյ Երեսփոխանաց մեծագոյն

ժողովը ընտրուած ըլլալ, տառնց ոսպանելու գա-
ւառական Երեսփոխանաց ընտրութեան վախճա-
նին՝ որոնց լուրը մէկ կողմէն կոտտանդնուպօլիս
հասնելու վրայ կ'ըլլայ:

Յօդ. 83.— Եթէ մէկը քանի մը թաղե-
րու կամ գաւառներու կողմէն ընտրուած ըլլալ,
ինք կ'որոշէ ո՛ր թաղին կամ ո՛ր գաւառին Ե-
րեսփոխանութիւնն ընդունիլը, և եթէ ինք չ'ուզէ
որոշել, Ընդհանուր Ժողովը վիճակաւ կ'որոշէ:

Յօդ. 84.— Երեսփոխանաց անուան ցու-
ցակը Ընդհանուր Ժողովոյ օրահին մէջ կ'տխուած
պիտի մնայ՝ այլ ու բէնի կարգաւ չ'ինուած. և
իւրաքանչիւր անուան տաջի պիտի նշանակուի
հրաժարում, վախճանում, և այլ ի՛նչ որ պատա-
հի. Այս ցուցակը երկու տարին անգամ մը պի-
տի նորոգուի:

Գ Լ Ե Ւ Ն Բ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՆՈՆՔ ԺՈՂՈՎՈՑ

ԵՒ ԽՈՐՀՐԴՈՑ

Յօդ. 85.— Ամեն Ժողով և Խորհարդ պի-
տի ունենայ առենական Դիւան մը, որ կը բաղ-
կանայ մէկ Առենապետէ, մէկ Առենագլխէ, և

երբեմն նա՛ւ Ատենապետի և Ատենադպրի Փռ-
խանորդներէ: Ասոնց ամենն ալ հարկաւ ժողո-
վոյ անդամներէն պիտի ըլլան:

Ատենական Դիւանը տարին անգամ մը կը
նորոգուի, և անդամներն անմիջապէս վերընտ-
րելի են:

Յօդ. 86. — Առանց մեծագոյն մասի ներ-
կայութեան Ատենան չը կրնար կազմուիլ:

Յօդ. 87. — Խնդիր մը լաւ քննուելէն, և
անոր վրայ ներկայ ժողովականաց կարծիքը
հասկցուելէն վերջը, քուէի կը դրուի. և ձայնից
առաւելութեամբ որոշում կը տրուի: Երբ ձայ-
նից հաւասարութիւն պատահի, եթէ նախագա-
հը ներկայ է՝ անոր կարծեաց կողմը կը հակի
որոշումը. եթէ ո՛չ՝ Ատենապետին կողմը:

Յօդ. 88. — Խառն ժողովոյ մէջ քննուած
որ և է խնդրոյ որոշում տրուելու համար, պէտք
է որ երկու ժողովները զառա քուէարկութիւն
ընեն: Երբ երկուքին ալ մեծագոյն մասը մի-
ևնոյն որոշումն ըրած ըլլայ, խնդիրը լուծուած
է. իսկ եթէ որոշումնին տարբեր ըլլայ, կար-
ծեաց անհամաձայնութիւն կը համարուի. և հե-
տեաւոր խնդրոյն որոշումը ընդհանուր ժողովին
կը ձգուի:

Խառն ժողովը օրինաւորապէս գումարուած համարուելու համար, պէ՛տք է որ ժողովոց երկուքին ալ մեծագոյն մասը ներկայ գտնուին:

Յօդ. 89. — Ընդհանուր ժողով գումարուելէն գո՛նէ վեց օր առաջ՝ պէ՛տք է որ Պատրիարքարանի կողմէն հրաւիրանաց գրեր յուղարկուին անգամներուն:

Գ Լ ՈՒ Ն Գ.

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐԳ

Յօդ. 90. — Ամեն ազգային անհատ՝ որ շափահատ է և վաստակ ու շահու տէր, պարտական է արօք մասնակից ըլլալ Ազգային ծախուց:

Այս տուրքը տարեկան է. և բաշխման հիմն կը բռնուի իւրաքանչիւր անհատի կարողութիւնը:

Յօդ. 91. — Ազգային տուրքը երկու տեսակ է. մէկը ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է, և կը հաւաքուի Պատրիարքարանի կողմէն, Ազգային կեդրոնական սնտուկին համար. և միւսը մասնաւոր՝ որ իւրաքանչիւր Թաղի մասնաւոր ծախուց յատկացեալ է, և կը

հաւաքուի թաղական Խորհրդոց կողմէն, թաղական սնտուկներուն համար:

Յօդ. 92. — Կոստանդնուպօլսոյ մէջ ընդհանուր տուրքի բաշխման և հաւաքման եղանակը՝ Քաղաքական ժողովին մէջ կ'որոշուի, և Ընդհանուր ժողովով կը հաստատուի: Իսկ մասնաւոր տուրքը՝ ամեն թաղ իր Խորհրդոյ մէջ կ'որոշէ և կը հաստատէ:

Սոյնպէս կը տնօրինուին նաեւ գաւառներուն մէջ Գաւառական ընդհանուր տուրքն ու թաղական մասնաւոր տուրքը:

Յօդ. 93. — Գաւառներուն կողմէ Ազգային Պատրիարքարանի Սնտուկին տրուելու մինչեւ ցարդ սովորութիւնն եղած տուրքին բաշխման և հաւաքման եղանակը՝ Ընդհանուր ժողովը պիտի որոշէ, և Բարձրագոյն Դրան հանութեամբը պիտի գործադրուի:

Փ Լ Ո Ւ Ս Փ.

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 94. — Առաջնորդը Գաւառական ժողովոց նախագահն է, և տնոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ:

Իր պարտաւորութիւնն է գաւառին մէջ Ագ-
գային Սահմանադրութեան գործադրութեանը
հսկել :

Յօդ . 95 .— Առաջնորդը չը պիտի կարենայ
Վանքերու մէջ բնակութիւն հաստատելով՝ պաշ-
տօնին տեղէն հեռանալ , այլ գաւառին գլխա-
ւոր քաղքին մէջ ագգային Առաջնորդարանը
պիտի բնակի , ուր կը գումարուին և Գաւառական
ժողովները :

Երբ Առաջնորդ մը միանգամայն և Վանա-
հայր ըլլայ , եթէ Վանքը միայն մէկ օրուան
ճամբայ հեռի է Առաջնորդանիտ քաղաքէն՝
կրնայ երկու պաշտօնն ալ մէկտեղ վարել , եր-
բեմն երբեմն Վանքի այցելութիւն ընելով :
Բայց եթէ հեռաւորութիւնը օրուան մը ճանա-
պարհէ աւելի ըլլայ , պէ՛տք է որ Վանքի մէջ
իրեն փոխանորդ կարգելով , ինք քաղաքը բնակի :
Սակայն հարկ եղած ժամանակը իր վիճակին
ամեն կողմը այցելութեան կրնայ երթալ :

Յօդ . 96 .— Կոստանդնուպօլսոյ մէջ եղա-
ծին նման՝ Գաւառներուն մէջ ալ ամեն թաղ
պիտի աւնենայ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ մը ,
ԹԱՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ մը , և ԹԱՂԱԿԱՆ ԴԻԻԱՆԱ-
ՏՈՒՆ մը :

Նմանապէս Առաջնորդանիսա Քաղաքին մէջ պիտի հաստատուին ԿՐԾՆԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ՝ Եւ Քաղաքական Ժողովին տնօրէնութեանը տակ՝ ԳԱԽԱՌԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ մը:

Նաեւ Առաջնորդարանի մէջ ԳԱԽԱՌԱԿԱՆ ԴԻԻԱՆԱՏՈՒՆ մը հաստատուելով, Առաջնորդական վիճակին քաղոր ժողովրդոց Թաղական Ազգահամարի առամարնեբը հո՛ն պիտի ժողվելին, և Գաւառական ընդհանուր Ազգահամար պիտի կազմուի:

Յօդ. 97.— Առաջնորդի ընտրութիւնը՝ նոյն և նման Պատշիարքի ընտրութեան, Գաւառական Ընդհանուր Ժողովով կ'ըլլայ. և ընտրութեան տեղեկագիրը տեղւոյն Խառն Ժողովոյ միջոցաւ պատրիարքին կ'ուղարկուի: Պատրիարքը Կեդրոնական վարչութեան Խառն Ժողովոյ համահաճութեամբը կ'անուանէ զԱռաջնորդը, և Բարձրագոյն Դրան իմաց տալով պաշտօնական հրամանագիրը կ'ընդունի:

Յօդ. 98.— Գաւառական Ժողովները Կեդրոնական վարչութեան Ժողովներուն վերաբերեալ տրամադրութեանց համեմատ պիտի կազմուին. և պաշտօնինն ու պարտաւորութիւննին նոյն և նման են:

Բայց Գաւառական ժողովներուն անգամաց
թիւը՝ իւրաքանչիւր վիճակի համար միանգամ
պիտի սահմանուի, ամեն մէկ գաւառի բնակչաց
թուոյն համեմատութեամբ:

Մինչև որ Ազգին տուրքը գաւառներուն
մէջ օրինաւոր կերպիւ հաստատուի, Տէրութեան
առաջին և երկրորդ և երրորդ աստիճանի տուրք
տուող անձինք միայն պիտի ընտրեն Գաւառա-
կան Ընդհանուր Ժողովոց անգամները: Եւ այս
Ժողովներուն կազմութեան կերպը՝ իւրաքանչիւր
վիճակի բնակչաց թուոյն նայելով, կեդրոնական
Վարչութիւնը պիտի որոշէ, Առաջնորդաց հետ
խորհրդակցելով:

Գ Լ Ո Ւ Ն Ե

ՎԵՐԱԳՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Յօդ. 99.— Ազգային Սահմանադրութեան
հիմնական սկզբունքը անփոփոխելի են: Բայց
երբ փորձառութեամբ՝ ի՛նչ ի՛նչ տրամադրու-
թեանց փոփոխութիւնը հարկաւոր գտաուի, Ընդ-
հանուր Ժողովը՝ Սահմանադրութեան հաստատու-
թենէն հինգ աստի ետքը՝ Վերաքննութեան
Յանձնժողով մը կը կազմէ, կրօնական և Գաղա-

քական ժողովներէն երեքական անգամ, չորս
Տեսուչ Խորհուրդներէն երկերկու անգամ, և ասոնցմէ զատ Ընդհանուր Ժողովոյ մէջէն կամ
Գրէն վեց հոգի, ընդ ամենը քսան անգամ
ընտրելով։ Այս Յանձնաժողովը կը սահմանէ
հարկաւոր գառաւած փոխստ/թիւները, որ
Ընդհանուր Ժողովը վաւերացնելէն ետքը,
Բարձրագոյն Դրան կը ներկայացունի, և Կայսե-
րական հրամանին համեմատ կը գործադրուին։

Արամ Բաբ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Բացում ժողովին, եւ վաւերացում
Ընտրութեանց

Յօդ. 1. — Կ. Պօլսի Պատրիարք Բարձրաշնորհ Սրբազանը՝ իբրեւ նախագահ՝ զԱզգային Ժողովը կը բանայ մայիսի առաջին եօթնեկին մէջ:

Բացման ճառով ընդհանուր տեսութիւն մը կուտայ ազգային գործոց նախընթաց տարւոյն վիճակին վրայ, և ժողովին ուշագրութեանը կը յանձնարարէ առեւտական նոր շրջանն զբաղելու գլխաւոր խնդիրները:

Առեւտական շրջանը մտաւի վերջերը կը լըմընայ, յորում ժողովը կը փակվի, յորում սահմանադրապէս լուծանելի երեսփոխանաց

պաշտօնը կ'աւարտի, եթէ ժողովին մասնակի վերանորոգումը այն տարւոյն հանդիպի :

Նոր ընտրութիւնք՝ ժամանակին սկսելով ապրիլին կ'աւարտին :

Վարչութեան տարեկան համարառուութեան ժամանակը կը հասնի :

Իբրեւ նախապատրաստութիւն՝ զոր նախագահ Սրբազանը կը հաջայ, բացումէն առաջ պէտք է պատրաստ ըլլան ,

ա) Ընտրութեանց տեղեկագիրները , որ առաջին Նիսաին օրակարգն է գիւանին կազմութեան հետ :

բ) Վարչութեան իւրաքանչիւր ճիւղին տարեկան համարառուութիւնը , որ առաջին վիճարանելի խնդիրն է գիւանաց կազմութենէն ետքը :

Յօդ. 2. — Բացման ճառէն անմիջապէս ետքը՝ նախագահ Սրբազանը կը հրաւիրէ երեսփոխանաց երիցագոյններէն մէկը առժամեայ ատենապետ բազմիւ, և կրտսերագոյն մը՝ ատենագրութեան պաշտօն վարել :

Այս առժամեայ գիւանին գործն է՝ վաւերացում ընտրութեանց , և կազմութիւն Մայր Դիւանին :

Յօդ. 3.— Ժողովը չվաւերացնելու զայն ընտրութիւնը որ ընտրեալին յանձնառութիւնն ապահովող ծանօթագիր չ'ունի ընտրող ժողովին կողմէն, և ընտրելիութեան պայմաններն ապահովող ծանօթագիր չ'ունի ընտրող ժողովին կողմէն, և ընտրելիութեան պայմաններն ապահովող ծանօթագիր՝ Պատրիարք Սրբազանին կողմէն ։

Ընտրութեանց տեղեկագիրները՝ որ նախագահ Սրբազանին ուղղեալ են ընտրող ժողովներէն, ապահովութեան ծանօթագրով մը իւր Սրբազնութեան կողմէն գիւանին կ'աւանդուին ։

Ատենադպիրը կ'ընթեռնու զանոնք, և գիւտողութիւններ՝ եթէ կան՝ կ'ըլլան ։ Ժողովը կ'արտասանէ իր վճիռը ընտրութեանց օրինաւորութեանը վրայ, և Ատենապետը երեսփոխան կը հռչակէ այն անունները որոնց իշխանութիւնը վաւերական գաւոված է ։

Նախագահ Սրբազանը կը հրաւիրէ անմիջապէս նորընտիր երեսփոխանները՝ եթէ ունկնդրաց մէջ են, գալ տեղ առնուլ և բազմիլ ։ Եթէ չեն, յատուկ նամակաւ կը ծանուցանէ իրենց ընտրութեան վաւերացումը և կը հրաւիրէ զանոնք յաջորդ նիստին ժողովին աշխատութեանց մասնակցիլ ։

Օրինաւորութեան թերութիւն ունեցող տեղեկագիրը Նախաւեհունութեան գիւանին կը յղվի, և վաւերացումն ուրիշ նիստի կը մնայ:

Անմիջապէս կը ձեռնարկվի Մ. Դիւանին կազմութեանը, եթէ ժամանակը ներէ և ժողովն ուզէ. եթէ ոչ՝ ութ օրէն վերստին կը գումարուի նիստը ի ներկայութեան նորընտիր անգամաց, օրակարգ ունենալով 1. կազմութիւն Մ. Դիւանին, 2. կազմութիւն Նախաքննիչ գիւանաց:

Բ. ԳԼՈՒԽ

Կազմութիւն Մայր Դիւանի

Յօդ. 4.— Ժողովին գիւանը՝ որ և Մայր գիւան կ'ըսուի միւս գիւաններուն նկատմամբ, կը բաղկանայ մէկ ատենապետէ, երկու գերատենապետէ (*) և երեք ատենագայրէ, որոնք մէկ շրջանի համար կ'ընտրուին և վերընտրելի են:

(*) Հրահանգ.— Դերատենապետները Դիւանը չեն բաղմիր, այլ միայն բացակայութեան ատեն Ատենապետին փոխանորդելու համար:

Յօդ. 5.— Ատենապետը առանձին կ'ընտրուի բացարձակ առաւելութեամբ: Իսկ երկու դերաւանապետները միասին կ'ընտրուին բաղմանուն քուէով (յօդ. 47), նոյնպէս և տաւնադպիրք:

Ասոնք իրենց ստացած քրէից առաւելութեան կարգովը՝ իբրև առաջին, երկրորդ և լինկը նկատուին:

Երկու դարձ քրէտարկութենէ ետքը, և տաւանում պատահած տտեն, համեմատական առաւելութիւնը կը բաւէ:

Քրէից հաւտարութիւն պատահած տտեն՝ տաւնապետաց երիցագոյնն ընտրեալ է և տաւնադպրաց կրտսերագոյնը, եթէ վիճակ չպահանջվի գտնէ երկու ձայնով. ժողովը կ'որոշէ ձեռամբարձով, առանց վէճի:

Երբ Դիւանին մէջ հրաժարում պատահի (յօդ. 111), եթէ հրաժարողը տաւնապետն է նոր ընտրութիւն կ'ըլլայ. բայց եթէ երկրորդն է հրաժարողը, երրորդը երկրորդ կ'ըլլայ, և նոր երրորդ մը կ'ընտրվի: Իսկ եթէ տաւնադպիր ներէն մէկը հրաժարի, հետեւորդն անոր տեղ կ'անցնի և երրորդ տաւնադպիր մը ընտրվի:

Յօդ. 6.— Ատենադրութեանց արձանագրութեն զատ գիւանն ունի երեք տօմար՝ խնդրոց

կարգի տօմար, խօսից կարգի տօմար, ներկայաւթեան տօմար 'զորոնք առաջին տտենադպիրը կը բաշխէ իր պաշտօնակցաց, հսկելով անոնց վրայ իբրեւ ընդհանուր տտենադպիր։

Մայր դիւանին կազմութենէն ետքը եթէ ժամանակը չը ներէ՝ նիստը կը վերնայ, ութ օրէն վերստին գումարուելու պայմանաւ նախաքննիչ դիւանաց կազմութիւնն ընելու համար, որ իբրեւ տտենական խնդիր՝ միշտ ստիպողական է ժողովին համար, որ չի կրնար դորձի սկսիլ իր դիւանաց կազմութենէն առաջ։

Գ. ԳԼՈՒԽ

Կազմութիւնն Նախագննիչ Իիւանաց

Յօդ. 7. — Ժողովին մէկ մասը դիւաններու կը բաժնուի, որոնք տարիէ տարի կը նորոգվին։

Ժողովն իր աշխատութեանց դիւրութեան և արդիւնաւորութեանը համար՝ իր դիւաններուն յատուկ ձեռնհասութեանը կը յանձնէ վիճարանելի խնդրոց նախապատրաստական քննութիւնը։

Այս դիւանները Ձեռնհաս կամ Նախաքննիչ դիւաններ ալ կը կոչուին, որք են։

ա) Ձեռնհասութեան դիւան՝ կրօնական

կամ խառն նիւթոց քննութեանը յատկացեալ .

բ) Դաստիարակութեան դիւան՝ կրթական կամ դպրոցական խնդրոց քննութեանը յատկացեալ .

գ) Կաշուածոց դիւան՝ վանքի, հիւանդանոցի, կաակաց և որ և է կալուածական խնդրոց քննութեանը յատկացեալ .

դ) Համարակաշութեան դիւան՝ տարեկան պիւտճէին հանգանակութեան, և որ և է ելմբանական խնդրոց քննութեանը յատկացեալ .

ե) Յարաբերութեանց դիւան՝ թաղական և գաւառական խնդրոց և աշերտագրոց քննութեանը յատկացեալ .

զ) Իրաւասութեան դիւան՝ հովուական աթոռոց վերաբերեալ և վարչական խնդրոց քննութեանը յատկացեալ .

է) Նախաձեռնութեան դիւան՝ օրինական և կանոնական խնդրոց քննութեան յատկացեալ .

ը) Խմբագրութեան դիւան՝ օրինական և կանոնական ծրագրաց կամ յօդուածոց գրական վերաքննութեանը յատկացեալ .

Բացի ասանցմէ՝ ժողովն ըստ հարկին և առժամեայ կերպով յատուկ մասնաժողովներ կը գործէ՝ սովորաբար 5էն ցը 7 անգամէ. զոր օրի-

նակ՝ Սահմանադրութեան կամ Կանոնադրութեան վերաքննութեանը համար, գաղափարների մը համար էլ. որոնց ընտրութիւնը դիւանաց ընտրութեան պէս կ'ըլլայ, իսկ պաշտօնին իրենց տեղեկագրին հետ կը վախճանի:

Յօդ. 8.— Դիւանները (ինչպէս անունը կը ցուցնէ) երեքական անդամէ կը բաղկանան և անդամաց ընտրութիւնը՝ իւրաքանչիւր դիւանի համար որդագրելի ընդհանուր ցանկի մը վրայ կ'ըլլայ, զոր Մ. Դիւանը կը ներկայէ Ժողովին և Ժողովը ցանկը որդագրելով մէկ դարձ քըւէտուկութեամբ կ'ընտրէ զամենը համեմատական առաւելութեամբ միայն (*) (յօդ. 47. գ.)

Դիւանի մը անդամը ուրիշ դիւանի մ'ալ և մարտնչողովի մ'ալ անգամ կրնայ ըլլալ, բաց ի Ժողովին ատենապետէն:

Անձնիւր դիւան ինք կը կարգէ իր ատենապետը ու ատենադպիրը, և յանձնված խնդիրը

(*) Հրահանգ.— Որքան դիւան կայ՝ ախքան հատված կայ մէկ ցանկի վրայ դժով դատված իւրաքանչիւր հատված երեք անուն կը պարտաւորէ: Մէյմէկ տրինակ այս ցանկէն բարապանք կը ցրեն երեսփոխանաց, արք ամէն մէկ հատվածը զատ զատ որդագրելով և ընդհանուր ցանկը ծախելով քըւէտուկը կը ձգեն:

քննելէն ետքը՝ կ'որոշէ զիւր տեղեկարարը՝

Դիւանները կուտան և իրենց ատենապետաց անուաները Մ. Դիւանին, որ կը հարգարդէ Ժողովին՝ դիւաններու ատենապետաց ցանկը՝

Յօդ. 9.— Դիւաններն իրենց աշխատութեանց կարգին մէջ Ժողովին օրակարգին պէտք է հետեւին, և իրենց յանձնեալ քննութեան արդիւնը կարելի եղածին չափ շուտ պէտք է հասցընեն Ժողովին, մանաւանդ երբ ստիպողութիւն կայ։

Յօդ. 10.— Դիւան թէ մասնաժողով ահա ղեկավարով մը և տեղեկարարի մը միջնորդութեամբ կը ներկայեն Ժողովին իրենց աշխատութեան արդիւնք, որ տեղեկագրին վերջը եզրակացութեամբ կ'ամփոփի։

Յօդ. 11.— Առաջարկութեան մը հեղինակը իրաւունք ունի ընկերակցեալս խորհրդակից մտնով՝ զայն տալարկութիւնը քննող գիւտնին կամ մասնաժողովին նկատերուն։

Եթէ քանի մը հեղինակներ են մի և նոյն առաջարկութեան, մէջերմէն մէկը կ'որոշեն զիրենք ներկայացնող։

Յօդ. 12.— Եթէ խնդրի մը վրայ տեղեկութիւն ստանալու համար՝ հարկ ըլլայ, դիւան-

Ներն ուղղակի կը հաղորդակցին Վարչութեան
գիւաններուն հետ՝ իրենց ատենապետին, ասե-
նադարին կամ տեղեկաբերին միջնորդութեամբ։

Նայնպէս Բարձրաշնորհ Սրբազանը՝ ժողովա-
յին դարձի մը համար ըստ հարկին, գիւաններէն
մէկը կամ մէկ քանին՝ կամ ատենապետները
միայն ի խորհրդակցութիւն կը հրաւիրէ իր քով։

Յօդ. 13. — Դիւանաց ատենապետները կըր-
նան միասնալ առժամապէս և Ատենապետաց Դի-
ւան կազմել՝ որ և Համագումար Դիւան կ'ըսվի,
ազգային խիստ կարեւոր կամ յարձրեւորական
ժանր խնդրի մը նախաքննութեանը համար։

Ժողովը կ'որոշէ Համագումար գիւանի մը
պէտքը, և Մ. Դիւանին Ատենապետը զանի կը
գումարէ իր նախագահութեամբ։

Ատենապետաց գիւանը պէտք է ըստ կանո-
նի՝ Պատրիարքի ընտրութեան, ամբաստանութեան
և հրաժարման խնդրոց նախաքննութեանը հա-
մար (ձևս յօդ. 47, 84, 87)։

Համագումար գիւանին վարմունքը նոյն է
արպէս միւս գիւաններունը, (տե՛ս վերոգրեալ
յօդաւորները)։

Դ. ԳԼՈՒԽ

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՈՒՄ

Յօդ. 14. — Ազգային ժողովը նիստ կ'ընէ քանի որ ունի օրակարգ՝ կանոնադրապէս երկու շաբաթն անգամ մը, ուրբաթ օր, Ղալաթիոյ ժողովարանը. ժամը 6էն մինչև 10. (տես բացատրութիւնքը 6 և 53 յօդուածաց մէջ)։

Նախագահ Սրբազանը կրնայ ըստ հարկին արտաքոյ կտրգի ժողով գումարել ուրիշ օր մը։

Նախագահ Սրբազանին կողմէն երեսփոխանք ի ժողով կը կոչվին գոնէ երկու օր առաջ, օրագրաց միջոցով կամ յատուկ կոչնագրով, յորում յիշեալ պէտք է ըլլայ նիստին տեղը, որոյեալ ժամը և օրակարգը։

Երբ որ օրակարգն սպառի, նիստերը կը դադրին, բայց ժողովը բաց կը համարվի ըստ առաջին յօդուածին կանոնադրութեամբ։

Յօդ. 15. — Ատեանը կը բացուի նիշդ ուրշեալ ժամուն և նախընթաց ատենագրութիւնն ընդունելութեան կը դրուի ի ներկայութեան ո՛ր և է թիւի անգամաց։

Դիտողութիւն ունեցող բացակայ ատենաբանք իրաւունք չ'ունին բողոքելու։

Յօդ. 16.— Ատենապետը կը բանայ և կը փակէ զատեանը:

Իր պաշտօնն է՝ վիճաբանութիւններն ուղղել, ատենարանից կարգով խօսք տալ, կանոնադրութեան պահպանութեանը հսկել, և Ժողովքը ըստ կանոնի ղեկավարել:

Առաջին ատենապետին բացակայութեան ատեն՝ երկրորդին կը մնայ այս պաշտօնը, և երկրորդին բացակայութեանը՝ երրորդին:

Յօդ. 17.— Ատենապետաց պաշտօնն է իրաւաօգնութեամբ ատենական դրութեանց հոգ տանիլ, և նիստի մատենագրութիւնը ամփոփ ու ըստ կարի նիշա խմբագրեալ հետեւեալ նիստէն զոնէ 24 ժամ առաջ տպեալ հասցնել երեսփոխանաց ամէն մէկուն: Այս հոգը գլխաւորապէս առաջին ատենապարին կը պատկանի, միւսներն իրենց յանձնված առարկաներով զբաղեալ (յօդ. 6):

Յօդ. 18.— Եթէ գիպուածով ատենագրութիւնը չէ կրցած ժամանակին ցրուիլ, ընթերցումը յատենի կ'ըլլայ, և ատենապետ ու ատենագիր կ'ըստորագրեն ընդունելութենէն ետքը: Տպեալներն ստորագրեալ են՝ յաջորդ նիստին մէջ ընդունուելու համար:

Ատենագրութիւնն տրիշ քան չէ քան նիստի մը մէջ անցածին ըստ կարի ճիշտ պատկերը՝ Դիտողութիւն՝ անոր անճիշդ երեւցած կէտերուն վրայ միայն կրնայ ըլլալ։ Դիտողութեան առթիւ անցեալէն թեւ մը բռնելով անկէ նոր խնդիր հանելը՝ խնդրէն շեղիլ է և աններելի (յօդ. 24, 25)։

Դիտողութեանց կը պատասխանէ խմբագիր ատենագիրը, եթէ հարկ կայ պատասխանելու. բայց թէ՛ բողոքող և թէ՛ պատասխանող մէկ անգամ կրնան խօսիլ։

Ատենագրութեան ընդունելութիւնը ձեւամբարձով կ'ըլլայ։

Յօդ. 19.— Ատենագրութեան ընդունելութենէն ետքը՝ օրակարգին չ'անցած՝ Ատենագետը կը հաղորդէ ժողովին անոր վերաբերեալ թուշխմերը, և ժողովը՝ Ատենագետին առջարկութեանը վրայ յղումները կ'արտասանէ (*)։

(*) Հրահանգ.— Ժողովին արտասանած յղումները, աւր որ ըլլան, Ատենագետը կը հրամայէ օտ քառերով, զոր օրինակ՝

«Ժողովէն առ իւր գիտան (այս անուն)ի նախա-
քննութիւն։

Ժողովին մատուցեալ ա՛ր և է թուղթ կամ նախագահին ուղղեալ կամ ուղղակի Ատենապետին՝ Մ. Դիւանին վրայ կ'աւանդվին։

Յօդ. 20. — Ժողովէն ոչ ոք անգամ կըրնայ խօսիլ՝ Ատենապետէն խօսք չը խնդրած ու չ'առած։

Ատենապետը երբ իբր անգամ խօսիլ ուզէ, գեր-ատենապետին կը թողու աթոռ, ինք ալ իր կարգին խօսք կը խնդրէ ու բեմը կ'եւնէ, և նոյն խնդրին համար ա՛լ չը բազմիր ատենապետ։

Յօդ. 21. — Ատենաբանք նշանակել պէտք է տան Դիւանին՝ անունին, ճառերու խնդիրնին, թեր կամ գէմ խօսելիքնին։

Խօսից կարգի տեմարակալը՝ (կամ ուրիշ ատենադպիր մը) կը նշանակէ խօսք խնդրողները առաջնութեան կարգով, թեր ու գէմ խօսողաց շարքն որոշելով։

Յօդ. 22. — Վիճարանութեանց մէջ ատենաբանք փոխադարձ կարգով կը խօսին թեր տ

(Թվական նիստին) Ատենապետն (Ստորագրութիւն)։

Կամ Ազգային Ժողովէն առ իւր Գործադիր Իշխանաւթիւն,

Կամ առ իւր Վարչութիւն եւն. ի անօրէնութիւն։

(Թվական եւ ստորագրութիւն)։

գէմ. այսինքն թեր խօսող մ'ալ, ալլ գէմ խօսող մը կուգայ. նոյնպէս և աննպաստ խօսողի մը կը յաջորդէ խնդրին ինչպստտ խօսող մը. և այսպէս փոխաստծ յաջորդութեամբ կը շարունակէ վիհաբանութիւնը:

Յօդ. 23.— Ատենաբանը պէտք է բեմ ելնէ ու անկէ խօսի. եթէ (անձնական ազատութեան մը պատճառով կամ խիստ կարճ բացատրութեան մը համար) Ատենապետը բացառութեամբ չը ներէ անոր՝ իր տեղէն խօսելու:

Նախագահ Սրբազանը միայն իր ամբողջն կը խօսի, և երբ խնդրէ՝ խօսքն իրն է:

Յօդ. 24.— Ատենաբանը խնդրէն դուրս ելնելու չէ. եթէ շեղի Ատենապետը զանի ի խնդիր կը կոչէ:

Ոչ ոք կրնայ խօսք առնուլ ի խնդիր կոչման վրայ:

Յօդ. 25.— Երբոր տաճնաբան մը երկու անգամ ի խնդիր կոչուի մի և նոյն ճառին մէջ, ժողովը կրնայ՝ տաճնապետին առջորդութեանը վրայ՝ արդիւնէլ զանի խօսքէ նոյն խնդրին վրայ նոյն նիստին մէջ. — ժողովը կը յայտնէ զիւր կամքը ձեռամբարձով, առանց վէճի:

Յօդ. 26. — Նոյն խնդրին վրայ երկու անգամէն աւելի չը խօսվիր. և խնդրողին Ատենապետը չկրնար ներել առանց փողովին հաճութեան. ի բաց առեալ են առաջարկութեան մը հեղինակն ու տեղեկաբերը:

Յօդ. 27. — Խօսքը չը զլացուիր անձնական դէպի մը համար խօսիլ Ռզոյէն (*), կամ կանոնադրական դիտողութեան մը համար:

Յօդ. 28. — Ո՛ր և է ընդմիջում, ո՛ր և է անձնականութիւն, բեմական բարբառի անվայել ո՛ր և է բառ կամ բացագանչութիւն տրգիւնալ է և աններելի:

Արգիլեալ է նոյնպէս Տէրութեան աշխարհափարութեան վրայ քննադատական տկնաբանութիւնք:

Յօդ. 29. — Տասն անգամոց խնդրանք՝ որ համառօտ պատճառաբանեալ պէտք է Ատենա-

(*) Զորքինակ՝ խօսքի առաջութեան համար, քըւէի սխալ մուգղելու համար, անընգունելի բառի մը կամ թիւր մեկնուած իմաստի մը սրբազրութեան համար, ելն. Սոյն պարագայից մէջ՝ եթէ պատասխանելու տեղի կայ, որու որ անկ է անի միայն կը պատասխանէ. բայց թէ՛ բողոքող թէ՛ պատասխանող մէկ անգամ կրնան խօսիլ:

պետին ձեռքը տրուի, ձեռամբարձով առանց վէճի ժողովը կ'որոշէ միթէ գռնփակ նստիլ կ'ուզէ (յօդ. 81, 82)։

Յօդ. 30.— Ատենը փակ յայտարարելէն առաջ Ատենապետը կը կարգադրէ՝ ժողովին խորհուրդն առնելով, ի ներկայութեան որ և է թիւի անգամոց, յաջորդ նիստին օրն ու օրակարգը, որ ատենագրութեան մէջ կ'արձանագրուի, և օրագիրք կը հրատարակեն։

Ե. ԳԼՈՒԽ

Քրէաբեկութիւն, եւ որոշում

Յօդ. 31.— Նախազէն միշտ Պրնայ առաջարկվի (*).

(*) Բեմական լեզուի մէջ նախազէն կամ նախապարզ վճիռ կ'ըսվի՝ խնդիր մը որոշման անդի առնենալ կամ մանաւանդ չ'առնենալը յայտնելը։

Հրահանգ.— Ժողովը ժամավաճառ չ'ընելու համար նախազէն կ'առաջարկվի զորօրինակ՝ կրօնական կամ քաղութական խնդրոց մէջ ձեռնհասութեան համար, առհմանադրական սկզբան մը համար, արգէն սրուշեալ կէտի մը համար (յօդ. 75), և կամ երբ վիճելի կէտը զվստուր խնդրի մը հետ այն տատիճան կապակցութիւն առնի որ մէկը չը լուծվիր առանց միւսը յուզելու, և

Յօդ . 32 .— Վիճաբանութիւնն աւարտեալ է ընականապէս երբ խօսից կարգն սպառի և տտեանաբանք խօսած ըլլան քանիցս անգամ որ կանոնագրութիւնը կը ներէ . Սակայն եթէ վիճաբանութեան ընթացքին մէջ շատ մը ձայներ քըւէ պահանջեն, Ատենապետը մնացող ատենաբանից անունները յիշեցնելով ժողովին կամքը կը հարցնէ . Ժողովը կը պատասխանէ ձեռամբարձով առանց վէճի :

Յօդ . 33 .— Որոշման մասին քըւէի և օրակարգի պահանջմունք նախագասութիւն ունին գլխաւոր խնդրին վրայ, զորս վիճաբանութիւնը կրնան ընդհատել, այլ զատենաբանին խօսքը ոչ՝ թէ խօսած ատեն յառնեն այդ պահանջմունք :

Յօդ . 34 .— Վէճը փակեալ յայտարարելէն առաջ Ատենապետը միշտ կը հարցնէ ժողովին կարծիքը :

այն միւսը զալու է օր մը՝ անի ալ իր տտենին ժողովն զբողեցնելու, վերջապէս երբ մ'ը և է անտեղութիւն մը կայ զոր պէտք է բացաւարէ այդ վճիռը առաջարկողը, որում խօսքը միշտ տրվի. և թեր ու գէմ խօսողները լուվելէն ետքը, խնդիր մը կրնայ առանց քննութենէ տանցնելու՝ մերժվիլ կամ հա ձգվիլ որով նախկարգ վնասվ :

Եթէ փակման գէժ խօսք ուզվի, մէկ ատենաբանի միայն կը տրուի:

Եթէ աւարակոյտ կայ ժողովին կարծեաց մէջ, երկրորդ փորձէն ետքը, վիճարանութիւնը կը շարունակուի:

Փակումն արտասանելէն ետքը՝ ալ խօսք չի տրուիր, միայն թէ խնդրին գրութեանը (1) վրայ:

Յօդ. 35. — Բարեփոխութիւնք նախագատութիւն ունին գլխաւոր խնդրին վրայ և անկէ առաջ քըւէի կը գրուին:

Յօդ. 36. — Ատենական կամ կանանական ծրագիրք և առաջարկութիւնք յօգուած առ յօգուած քըւէի կը գրուին: Ամբողջին վրայ քըւէով կ'աւարտի միշտ սրահումը:

Ճշաւոր խնդիրներու մէջ բաժանումն իրաւունքն է երրոր խնդրուի:

Յօդ. 37. — Ժողովն իր որոշման ենթարկեալ խնդրոց վրայ վճիռ կուտայ՝ ձեռամբարձով կամ ելունխտով (2), յայտնի քըւէով, գաղանի քուէով:

(1) Այսինքն ո՛ր բառերով քըւէի գրվելիքը:

(2) Ելունխտ թէ՛ ձեռամբարձ անխախտ կրնայ գործածել Ատենագիտը, բայց ընդհանրապէս ձեռամբարձի առաջին տարակուսելի փորձէն ետքը՝ ուր ձեռքերն համբկու գժուարութիւն ծագած է, երկրորդ փորձը ելունխտով ընել աւելի որոշիչ համարված է:

Յօդ . 38 .— Ձեռամբարձով որոշումն իրաւունք է ամէն խնդրոց համար բաց այն կէտերէն զոր ներկայ կանոնադրութեան 40 , 41 , և 45 յօդուածք կը նախատեսեն իրրեւ բացառութիւն :

Յօդ . 39 .— Ձեռամբարձով որոշումը կը կատարուի՝ թեր ու գէժ կարծեաց կողմէն զատ զատ ձեռք վերցնելով (փորձ ու հակափորձ) , զոր գիւանին անգամք կը համրեն ու կը հաստատեն :

Եթէ հաստատեն թէ տարակոյս կայ՝ փորձը նորէն կը կրկնուի :

Ո՛չ ոք կրնայ խօսք առնուլ երկու փորձերու միջև , և ոչ իսկ երկրորդ փորձին ու քըւեւարկութեան միջև :

Յօդ . 40 .— Յայտնի քըւէն իրաւունք է՝

1 .— Երկու տարակուսելի փորձերէն ետքը :

2 .— Օրինական ծրագիրներու կամ առաւջարկութեանց համար :

Յօդ . 41 .— Յայտնի քըւէ կրնայ խնդրուիլ ամէն նիւթի համար :

Ի բաց առեալ են սա կէտերը . օրակարգի որոշում , ատենադրութեանց ընդունելութիւն , ընտրութեանց վաւերացում , հրաժարմանց ըն-

գունելութիւն, աղաջնութիւն կամ նախագա-
սութիւն, յղում, օրանգում, վիճարանութեան
փակում, և ստիպողութեան նկատառում:

Յօդ. 42. — Յայտնի քըւէ կրնայ խնդրվի-
թէ՝ ձեռամբարձ որոշումէ առաջ և թէ՝ առա-
ջին տարակուսելի փորձէն ետքը:

Կրնայ նաև խնդրվի ձեռամբարձ որոշումէն
ետքը, եթէ օրինական ժրագրի կամ առաջար-
կութեան մը վրայ է արվելիք վճիռը:

Յօդ. 43. — Յայտնի քըւէի խնդրումը գրով
պէտք է ըլլայ՝ գոնէ 3 անգամէ ստորագրեալ
և Աստեճակտին ձեռքը տրուած:

Թէ՝ ստորագրողաց և թէ՝ թեր ու գէժ քը-
ւէարկուաց անունները պէտք է տանհագրու-
թեանց մէջ անցնին, նոյնպէս և ձեռնկապհից և
բացակայից անունները:

Յօդ. 44. — Յայտնի քըւէարկութիւնը կը
կատարվի սա հետեւեալ կերպով:

Աստեճակտը կը հրաւիրէ երեսփոխանները
որ անդերնին նստին: Անձնիւր երեսփոխան եր-
կու քըւէթուղթ ունի որոց վրայ իր անունը
տպեալ է: Սպիտակագոյն քըւէթուղթները ըն-
դունելութիւն կը նշանակեն, կապուտագոյնները
չընդունելութիւն:

Բարապանք կը ներկայեն անհնիւր երեսփո-
խանի՝ զոր անուանէ կը կոչէ ներկայութեան
առժամակալ ատենագիրը՝ քըւէատուփ մը որոյ
մէջ կը հգէ իր քըւէթուղթը։

Անուանց ցանկը սպառելէն ետքը անմիջա-
պէս կրկին կը կոչէ ատենագիրն այն անունները
որք քըւէ չեն տված։ Անուանական կոչման
չը պատասխանողը բացակայ կը նշանակուի,
յայտնած պատճառովը, եթէ ունի (տե՛ս յօդ.
107)։

Երբոր քըւէթուղթերը հաւաքուած են,
Ատենագետը փակեալ կը յայտարարէ զքըւէար-
կութիւնը։ Քըւէտուփերն անմիջապէս բեմին
վրայ կը բերուին։ Ատենագիրք քըւէհամարը
կ'ընեն, և Ատենագետը կը հռչակէ զարգիւնը,
այսինքն քանի քըւէի վրայ, քանի քըւէի գէմ,
քանի քըւէով ընդունվիլ կամ չընդունվիլը։

Եթէ երեք անգամ խնդրեն թէ քըւէարկու-
թիւնը բեմին վրայ ըլլայ, Ժողովը կ'որոշէ
ևնումարանով առանց վէճի։

Յօդ. 45.— Այն ատեն պարագայից մէջ
ուր յայանի քըւէ կրնայ կամ պարտ է ընդուն-
վիլ, եթէ 5 անգամ գաղտնի քըւէ խնդրեն,
պէտք է որ գաղտնի ըլլայ։

Գաղտնի քըւէն ալ յայտնի քըւէին պէս
կը խընդըրվի (տե՛ս յօդ. 43) :

Խնդրանքն ստորագրողաց անունները շատ-
նագրութեան մէջ կ'անցնին, նոյնպէս և ձեռնպա-
հից ու բացակայից անունները :

Յօդ. 45. — Գաղտնի քըւէարկութիւնը կը
կատարվի սա հետեւեալ կերպով .

Անձնիւր երեսփոխան կ'առնէ երկու գնտակ,
մէկը ճերմակ՝ որ ընդունելութիւն կամ պայմ'
կը նշանակէ . միւսը սև որ չընդունելութիւն
կամ ո՛չ կը նշանակէ : Անուանական կոչման
կարգով անձնիւր ոք կը ներկայանայ, բեմին
վրայ դրուած սափորի մը մէջ՝ կը ձգէ իր քըւէն
նշանակող գնտակը . իսկ միւս գնտակը որ նշա-
նակութիւն չ'ունի, կը տանի կը ձգէ ուրիշ սա-
փորի մը մէջ՝ որ ատենադպրաց գիւանին վրայ
դրուած է :

Քըւէնին տալէն ետքը՝ ամէն մարդ՝ կ'անց-
նի իր տեղը կը նստի :

Ատենադպիրք կողովի մը մէջ կը պարպեն
բեմին վրայ սափորը . ամէնուն ցուցնելու կերպով

կը համարեն Կնատակները, և ճերմակները սեւերէն՝
կը զատեն (*) :

Գոնէ երկու ատենադպիր կը հաստատեն այս
համարանքին արդիւնը զոր Ատենապետը կը հըռ-
շակէ :

Յօդ. 47. — Ժողովին մէջ ընտրութիւնք
Կադանի քուէով կ'ըլլան, և քուէհամարը շորս
քննիչներու հետօք կը կատարովի որոնք վիճակով
կը հանուին :

ա) Միանուն է քուէն՝ երբոր մէկ քուէով
մէկ անուն կ'ուզվի ընտրել, և քուէթուղթը
մէկ անուն պարունակելու է :

Բազմանուն է քուէն՝ երբոր մէկ քուէով
մէկէն աւելի անուն կ'ուզվի ընտրել, և քուէ-
թուղթը այնքան անուն պարունակելու է որքան
որ կ'ուզվի ընտրել :

Բազմանուն քուէթուղթները՝ եթէ ուզված
թիւէն աւելի անուն պարունակեն՝ ընդունելի

(*) Հրահանգ. — Գնդակի պակտութեան ատեն,
սու հարկի մարթ է նաև թուղթի կտորներով կատարել
այս գործողութիւնը, անմիաբ անդամ դրացւոյն չը
ցուցնելու զգուշութեամբ և ընթեռնելի կերպով իր այլուն
կամ ո'չը թուղթի կտորի մը վրայ գրելով: Այն ատեն
երկու ստփորի ալ հարկ չըկայ:

են. բայց միայն՝ առաջիններէն ուղղած թիւը կ'առնվի, եւ քի աւելարդը չի համարուիր:

բ) Ժողովին մէջ ընարութիւնները՝ Մ. Դիւանին անդամներէն զատ որ անցանկ կ'ընարվին թէ՛ միանուն եւ թէ՛ բազմանուն քուէով (յօդ. 6), ներկայեալ ցանկի մը վրայ կ'ըլլան, որ կամ զեղչելի է կամ սրբազրեցի:

գ) Սրբազրելի ցանկը՝ այնքան անուն կը պարունակէ որքան որ ընտրել կ'ուզվի, որոյ մէջ քուէարկութիւն չ'ուղած անուններն կ'աւրեն անգը ուղածներն կը դրնեն:

Մէկ դարձ քուէարկութեամբ համեմատական առաւելութիւնը միայն կը բաւէ:

դ) Զեղչելի ցանկը՝ եթէ մէկ անուն ընտրել կ'ուզվի մէջէն՝ դոնէ եռապատիկ անուն պարունակելու է. եթէ մէկէն աւելի կ'ուզվի ցանկը երկպատիկ անուամբ կը բաւէ. նախ այս ցանկը քուէի կը դրվի. եւ յետոյ քուէարկութիւն կը զեղչեն այս ցանկէն աւրելով չ'ուղած անուններն, բայց տեղը անուն չեն կրնար դնել:

երկու դարձ քուէարկութենէ ետքը՝ համեմատական առաւելութիւնը կը բաւէ:

Զեղչելի ցանկը պէտք է կոչնագրին հետ հաշորդեալ ըլլալ երեւոյթութեան, որպէսզի ժառ

մանակ ունենան ընտրելեաց վրայ պէտք եղած
ժանօթութիւններն ստանալու:

ե) Դիւանաց և մասնաժողովոց ընտրութիւնը
սրբագրելի ցանկի վրայ կ'ըլլայ զոր Մ. Դիւա-
նը կը ներկայէ և ժողովը կը սրբագրէ:

զ) Վարչութեան անդամոց ընտրութիւնը
զեղչելի ցանկի վրայ կ'ըլլայ, զոր Համագու-
մար Դիւանը Պատրիարքին հետ խորհրդակցու-
թեամբ կը պատրաստէ և ժողովը կը զեղչէ (*):

է) Պատրիարքի ընտրութիւնը բացարձակ ա-
ռուելութեամբ կ'ըլլայ՝ զեղչելի ցանկի վրայ,
զոր վարչութիւնը կը ներկայէ՝ Սահմանադրու-
թեան պահանջած կրօնական ու քաղաքական
պայմանաց ապահովութեան ժանօթագրով մը,
և միանգամայն ընտրելեաց անցեալն ու արժա-
նիքը պատճառաբանող համառօտ տեղեկագրով
մը, զոր ապենապետաց գիւանը կը նախաքննէ
(13):

Այս դիւանն իր գիտողութեամբ կ'եզրակայէ
իր կարծիքը՝ կամ անօրբագիր ընդունելութեան
ցանկին, կամ սոսկ շիտիոթութեամբ արժանեաց

(*) Կրօնականին համար անո՞ւ Սահմանադրութեան
մէջ իր յօդուածը:

կարգին, և կամ սրբազրութեան զոր կ'առաջարկէ: Ժողովն այդ առաջարկեալ փոփոխութիւն կամ սրբազրութիւնը կ'ընդունի կամ կը մերժէ ձեռամբարձով առանց վէճի, և յետոյ ըստ այնմ կը զեղչէ ցանկն իր քըւէով:

Քըւէից հաւասարութիւն պատահած տարեան երիցագոյնն ընտրեալ է, եթէ վիճակ չը պահանջվի գոնէ երկրորդոշ ձայնով: Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի միթէ վիճակը կ'ընդունի:

Սոյն կանոնով կը քննէ ժողովը պատրիարքական տեղապահութեան ընտրելեաց ցանկը, եթէ իրեն գայ:

Սոյն ճամբէն կ'անցնի ժողովին մէջ և կաթողիկոսական ընտրելեաց ցանկը՝ որ կողմէ որ գայ, և սոյն օրինակ կը մասնակցի Ազգային ժողովն այդ ընտրութեան:

Յօդ. 48.—Քըւէի մասնակցողաց բացարձակ աւաւելութեամբը կը գոյանայ ժողովին որոշումը:

Բարձրաշնորհ Նախագահը քըւէի մասնակցեալ պարտաւորեալ չէ, և անուանական կոչում չ'ըլլար իրեն համար:

Ամէն քրէտոկութեանց վերջը՝ փակեալ յայտարարելէն առաջ՝ Ատենապետը ժողովին կողմէն կը հորցնէ Պատրիարք Սրբազանին միթէ ունի՞ քրէտո Իսկ երբոր քրէհամարի արդիւնը թեր ու գէժ քրէից հաւատարութիւն բերէ, եթէ Պատրիարք Սրբազանը քրէ տուած է, այն քրէին կողմը կը հակի որոշումը. եթէ չէ տուած, յայնժամ ատենապետը յանուն ժողովին կը խնդրէ նորին Սրբազնութեան քրէն որ կ'որոշէ զորոշումը:

Պատրիարք Սրբազանին բացակայութեան ատեն՝ Ատենապետին կը մնայ այս իրաւունքը:

Յօդ. 49. — Ժողովին որոշմանց վաւերականութեան համար՝ երեսփոխանաց մեծամասնութեան ներկայութիւնը հարկաւոր է, կամ պակասութեան ատեն՝ անոր որոշող նայնից միւսիարանութիւնը:

Երկու աստիճան մեծամասնութիւն կ'ընգունվի, օրինակամ եւ իսկակամ:

Օրինական մեծամասնութիւնն է՝ ամբողջ երեսփոխանութեան Սահմանադրութեամբ որոշ-

ուած թիւին (*) կէսէն մէկ աւելին (որ այսօր 71 է) :

Իսկական մեծամասնութիւնն է՝ ահոր հաւանական թիւին կէսէն մէկ աւելին (որ այսօր 47 է) : Եւ հաւանական թիւ կը նկատվի ամբողջ Երեսփոխանութեան երկու երրորդը (**)

Այս երկու աստիճան մեծամասնութիւնք իրենց որոշող մասը կամ ձայնն ունին, որ իւրաքանչիւրին համար իր բացարձակ առաւելու թիւնն է. 74ին որոշող ձայնն է 36. և 47ին որոշող ձայնն է 24 :

Ձանգամոց ներկայութիւնը գիւանը կը հաւասարէ ներկայութեան թամարէն զոր երեսփոխանք կ'ընտրողներն ժողովարան մտած առեւնին. և քըւէարկութեան ասեն գարնեալ կ'ըս-

(*) Մտնօք. — Երեսփոխանաց այս ամբողջ թիւը գրեթէ երբեք և բնականապէս կարելի չէ նեղ բերել, պատճառք՝ ընտրութեանց և վաւերացմանց յապագմունք, համբարգուծիւնք, հիւանդութիւնք, հրաժարմունք, վախճանմունք և այլն :

(**) Միւս մէկ երրորդը գրեթէ միշտ բացակայ կամ անպարտաւ համարելի է վերոյիշեալ պատճառանոք. — Այս թիւերն ըստ հարկին կ'աւելնան կամ կը պակսին համեմատապէս եթէ երեսփոխանաց օրինական թիւն աւելնայ կամ պակսի ռաճմանադրապէս :

տուգէ միթէ ստորագրողք իսկապէս ներկայ են
և թէ նիստը լիովին բաւական է որոշման նեւ-
նարկելու: Եթէ նիստը լիովին բաւական չը
գտնվի, ներկայ անգամք կ'որոշեն նեւամբար-
նով առանց վէճի միթէ կ'ուզեն որոշող ձայնից
միաբանութիւնը՝ հաւանական կարծեւով՝ փորձել
կամ թէ իսկոյն անբաւական յայտարարել Ժո-
ղովը:

Յօդ. 50.— Օրինական մեծամասնութեան
ներկայութիւն կը փնտռվի, կամ անոր որոշող
ձայնից միաբանութիւն:

1.— Պատրիարքական ընտրութեան համար

2.— Պատրիարքական ամբաստանութեան
դատական նիստին համար

3) Սահմանադրական օրինաց վերջնական
որոշման համար:

Եթէ առաջին նիստի մը մէջ չը գոյանայ
օրինական մեծամասնութիւն, բայց որոշող
ձայները միանան մէկ կողմ, որոշումը վաւե-
րական է: Իսկ եթէ այդ ձայները չը միանան,
նիստն անբաւական կը համարվի, և որոշումն
իբրեւ չեղեալ՝ յաջորդ նիստին կը մնայ, ուր իս-
կական մեծամասնութեան ներկայութիւնը կը
բաւէ կամ անոր որոշող ձայնից միաբանութիւնը:

Յօդ. 51. — Իսկական մեծամասնութեան ներկայութիւն կը փնտռվի, կամ անոր որոշող ձայնից միաբանութիւն՝

1) Այն խնդրոց համար որոնց համար օրինական մեծամասնութիւնն անգամ մը անբաւական գրաված է (յօդ. 50)։

2) Ամեն ընտրութեանց, և այն ամէն ազգային խնդրոց համար որք վիճաբանութեամբ լուծելի են։

Ի բաց առեալ են ատենանին սկիզբն ըլլալու ատենագրութեան ընդունելութիւնը և ատենանին վերջերն ըլլալու յաջորդ նիստի օրակարգին որոշումը (տե՛ս յօդ. 15-30)։ Նոյնպէս ի բաց առեալ են այն անվէճ խնդիրներն ու կէտերը որք ձեռամբարձով առանց վէճի որոշելի են, օրոնք ներկայ կանոնագրութեան յօդուածաց մէջ իրենց տեղը յիշված են, կամ՝ 41 յօդուածին մէջ իբրեւ բացառութիւն նշանակված։ Այս խրնդիրները՝ որք ուղղակի ազգային չեն, այլ սոսկ ատենական դարձողութիւնք, կրնան որոշվիլ ի ներկայութեան օ՛ր և է թիւի անգամոց։

Եթէ առաջին նիստի մը մէջ չը գոյանայ իսկական մեծամասնութիւն, բայց որոշող ձայնները յիշարանին, որոշումը վաւերական է։ Իսկ

եթէ չը միաբանին, նիսան անբաւական կը հա-
մարվի, և փորձեալ սրտումն՝ իբրեւ չեղեալ՝
յաջորդ նիստին կը մնայ, ուր սոսկ սրտող մա-
սին ներկայութիւնը կը բաւէ. զի բացակայք
ձեռնպահից կարգը կը սեպվին, չունին իրաւունք
բողոքելու և իրաւունքնին ներկայից թողլով՝
ասոնց իրաւունքը բարգեալ կը նկատուի:

Յօդ. 52. — Սոսկ սրտող մասին ներկա-
յութեամբը նստեալ տառանի մէջ՝ մ'չ օրակար-
գէն գուրս խնդիր ներելի է որոշել և մ'չ իսկ
վիճաբանութիւնը փակել անկէ գուրս խնդրի մը
վրայ, եթէ յուզվի:

Եթէ իսկական մեծամասնութեան սրտող
մասին ներկայութիւնը չը գոյանայ, որոշումն
անկարելի է, զի վաւերականութեան հիմ չը
մնար, և նիստը՝ իբրեւ բոլորովին անբաւական
կը վերնայ:

Եթէ մէկ տառնական շրջանի մէջ երկու
անգամ աեզի ունենայ այս առակնկալ գէպը,
անմիջապէս Նախագահ Սրբազանը յատուկ կոշ-
նագրով ի պարտականութիւն կը կոչէ բոլոր ե-
րեսփոխանները՝ յիշեցնելով իրենց կանոնադրու-
թեան վերջին յօդուածը. որ կը գծէ Նախագա-
հին ընելիքը, և որ ամենայն իրաւամբ գործադ-

րելի է, եթէ յաջորդ նիստին մէջ անձամբ չը պատասխանվի սոյն կոչնագրին :

Յօդ . 53 .— Ամեն անբաւական նիստի հետեւեալ նիստը ութ օրէն գումարել՝ իրաւունք է և պարտիք :

Զ . ԴԼՈՒԽ

Խնդրոց կարգ, Յրակարգ, եւ Ստպողութիւն

Յօդ . 54 .— Ժողովին բացումէն սկսեալ՝ վիճաբանելի խնդրոց կարգը բնականապէս կուգայ և իրեն յատկացեալ ամսարին մէջ կ'արւանագրվի :

Երեսփոխանական թարեկան ընտրութեանց վաւերացումն ու Մայր գիւտնին կազմութիւնը՝ Ժողովին առաջին նիստին աշխատանքն են (յօդ . 1) :

Դիւանաց կազմութիւնն ու վարչութեան տարեկան համարաառուութիւնքը՝ երկրորդ նիստին խնդիրներն են (յօդ . 1) :

Համարաառուութեան կը յաջորդէ բնականապէս տարեկան պիւտճէին խնդիրը, որոյ քընուութիւնն ու սահմանումը հաւանորէն երրորդ կամ չորրորդ նիստը կը գրուեն :

Ասոնցմէ ետքը կուգան Նախագահական ճառով յատկապէս յանձնարարեալ խնդիրները, որք Վարչութեան կողմէն իրրեւ օրինաց ծրագիր կամ առաջարկութիւն կը ներկայվին, և զորս Ատենապետը՝ առաջնութեան կարգով՝ խնդրոց տօմարին մէջ արհանագրել կ'արտօնէ զատենագիտիւր, Ժողովին հաւանութեամբ (*):

Ո՛չ ոք կրնայ խնդրոց տօմարին մէջ խնդիր յաւելուլ կամ պակսեցնել առանց Ժողովին հաւանութեանը:

Ատենապետը խնդրոց տօմարին հետեւելով կը կարգադրէ յաջորդ նիստին օրակարգը (յօդ. 30) որ մէկ հիստի մէջ վիճարանելի կամ կարգը այն աւուր եկած խնդիր ըսել է, որ և կ'ըսուի պարզ ու անխառն օրակարգ:

(*) Հրահանգ.— Խնդրոց կարգի արձանագիրք տօմարը կանոնաւոր բռնված ըլլալու համար, ամեն մէկ խնդրի էջ մը տալու է և վերէն ի վար տամարածէ նշանակելու է՝ աւանդում, յղում, սեպտողութիւն, ցկատում, մերժում, օրածում, որոշում ընդունելութեամբ կամ չընդունելութեամբ, հրամանում. և այդ ամեն մէկ տառնական գործողութիւն՝ տեղի ունեցած օրէն թիւ կանոնալ:

Յօդ. 55. — Ո՛ր մէկ խնդիր կրնայ խառնվիլ պարզ օրակարգին մէջ, եթէ ստիպողութիւնը նկատողութեան չ'առնու և չ'ընդունի ժողովը :

Ո՛ր մէկ օրակարգ կրնայ առաջարկվիլ եթէ պատճառաբանեալ չ'ըլլայ, խմբագրեալ և դիւանին աւանդեալ, զոր Ատենապետը կ'ընթեռնու ժողովին :

Պարզ ու անխառն օրակարգը՝ եթէ պահանջվի՝ առաջնութիւն ունի միշտ :

Յօդ. 56. — Եթէ պարզ ու անխառն օրակարգն ի բաց առնվի, ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի՝ միթէ կ'ուզէ՞ նկատողութեան առնուլ և դիւաններուն յղել պատճառաբանեալ օրակարգին քննութիւնը :

Եթէ դիւաններուն յղումն որոշվի, տեղ կը ցուցվի խնդրոց կարգին մէջ, և ժողովը նախաքննիչ դիւանին տեղեկագրին վրայ ա՛յնպէս կը վարվի որպէս կանոն է վարվիլ ստիպողական նիւթերու մէջ (տե՛ս յետագայ յօդուածները) :

Յօդ. 57. — Օրինական խնդրոց կամ առաջարկութեան մը ներկայացման ատեն՝ ստիպողութիւն կրնայ խնդրվիլ :

Կրնայ խնդրվիլ Վարչութեան կողմէն, հեղինակին կողմէն, ո՛ր և է երեսփոխանի կողմէն:

Յօդ. 58.— Ստիպողութիւն յայտարարել տալու խնդրանքը պատճառաբանեալ պէտք է ըլլայ:

Ժողովն անվէճ կ'որոշէ՝ Լեւոնապետին հարցման վրայ՝ եթէ տեղի կա՞յ եւք տալու ստիպողութեան խնդրանքին:

Յօդ. 59.— Եթէ ստիպողութիւնն յայտարարվի, Ժողովին հարցվելէն ետքը գիւաննեւրուն կը յղվի (յօդ. 9), և ըստ այնմ վիճաբանութեան օրը կ'որոշվի:

Նախաքննիչ գիւանին տեղեկագրին վրայ՝ Ժողովն անմիջապէս վիճաբանութիւնը կը բանայ և պարզ էւսով (այսինքն միակ քըւէարկութեամբ) մը կը անօրինէ որոշումը:

Եթէ ստիպողութիւնը չ'ընդունվի, օրինական խնդրոց համար՝ տես 66 յօդ. և պարզ խնդրոց համար՝ 62 և 63 յօդաւածները:

Յօդ. 60.— Օրինական խնդրի մը կամ տաւջարկութեան մը ստիպողական բնութիւնը կրնայ ետ առնվիլ՝ երեսփոխանի մը խնդրանքին վրայ՝ Նախաքննիչ գիւանին տեղեկագրին աւանդումէն ետք: Այս ետ տաւումը ա՛լ չը կրնար խնդրվիլ վիճաբանութեանց բացումէն ետքը:

Է. ԳԼՈՒԽ

Առաջարկութիւնք

Յօդ. 61. — Երեսփոխանի մըբութ ո՛ր և է առաջարկութիւն՝ օրինական թէ պարզ՝ գրաւոր պէտք է ըլլայ: Ատենապետին կը տրվի որ ժողովին հաղորդելէն ետքը՝ յոյն խնդրին ձեռն. հաս գիւանին նախաքննութեանը կը յանձնէ (յօդ. 9 և 10):

Այս գիւանը հակիրճ անգեկագիր մը կը բերէ, որոյ եզրակացութիւնն է կա՛մ պարզապէս մերժում, կա՛մ օրաձգում, կա՛մ նկատառում:

Սակայն, եթէ գիտնայ այս գիւանը թէ սւրիշ գիւան մը արդէն այնպիսի խնդրով մըբութալ է որ կտպակցութիւն ունի այդ առաջարկութեան հետ, անդէն ու բերանացի կը խնդրէ ժողովէն որ այն գիւանին յղվի առաջարկութիւնը:

Յօդ. 62. — Եթէ ձեռնհաս գիւանը պարզապէս մերժման կամ օրաձգման եզրակայէ, ժողովը կ'անցնի իր օրակարգին: Եթէ նկատառման եզրակայէ, նախ զանի կ'օրոշէ ժողովը: Եթէ նկատառումն ընդունի կ'անցնէ զանի խընդ-

բոց տօժարին մէջ ուրկ' ըստասէ իր օրակարգը և ելք կուտայ առաջարկութեան՝ պարզ որոշման հզանակաւ, եթէ պարզ է առաջարկութիւնը:

Յօդ. 63. — Առաջարկութեան մը հեղինակը՝ երբ վէճն անգամ բացված ըլլայ, կրնայ զանի միշտ ետ առնուլ: Բայց եթէ ուրիշ երեսփոխան մը զանի բռնէ, վիճարանութիւնը կը շարունակվի:

Յօդ. 64. — Ժողովէն մերժեալ կամ օրաձգեալ առաջարկութիւնք չեն կրնար մէյ մալ ներկայանալ երեք նիստէ առաջ՝ եթէ նկատուղութեան առնված են վեց նիստէ առաջ՝ եթէ առաջին որոշմամբ մերժեալ են:

Յօդ. 65. — Վարչութեան կողմէն ներկայեալ օրինական ծրագիր կամ առաջարկութիւն՝ անգամոց մէկուն ձեռօք Մ. Դիւանին վրայ կ'աւանդվի յետ ընթերցման, եթէ ընթերցում ըլլայ:

Այս ծրագիրները պատճառաբանեալ են, և եթէ կարելի է՝ տպեալ և երեսփոխանաց ջրւեալ, որպէս են նաև յատուկ մասնաժողովէ մը աւանդեալ ռոհմանագրական կամ կանոնադրական ծրագիրք կամ յօդուածք:

Ատենապետը՝ ոոյն խնդրոց յատկացեալ՝ բեմական նախաձեռնութեան դիւանին կը յղէ

շօրինական ծրագիրը կամ առաջարկութիւնը, խնդիրն ուսումնասիրելու և նախապատրաստական քննութիւնն ընելու համար (յօդ. 9 և 10) :

Նախաձեռնութեան դիւանին տեղեկագիրը Մ. Դիւանին վրայ կ'աւանգվի յետ ընթերցման, եթէ ընթերցում ըլլայ Ատենապետը կ'առաջարկէ և ժողովը կ'որոշէ վիճարանութեան օրը :

Յօդ. 66. — Ի՛շ մէկ ծրագիր օրինաց՝ բաց ատիպող գէպերէ՝ չը դրվիր վերջնական քուէի, եթէ երեք որոշումէ չ'անցնի՝ իրարմէ գոնէ մէկ շաբաթ միջոցով :

Առաջին որոշումը յատկապէս ծրագրին ընդհանրութեանը վրայ կ'ըլլայ ժողովին կը հարցվի միթէ կ'ուզէ երկրորդ որոշման անցնիլ :

Երկրորդ որոշումը կ'ըլլայ ամեն մէկ յօդաւած քուէի դնելով, նաեւ անոնց վերաբերեալ բարեփոխութիւնները, եթէ կան, ժողովը կ'որոշէ միթէ կ'ուզէ երրորդ որոշման անցնիլ :

Երրորդ որոշումէն ետքը՝ որ ծրագրին բովանդակութեանը և մասնաւոր արամագրութեանց վրայ կ'ըլլայ, վերջնական քուէի կը նշանարկվի որն որ կը կնքէ զորոշումը :

Ժողովը կրնայ այս վերջնական քուէէն առաջ՝ Խմբագրութեան դիւանին չ'յղել ծրագիրը,

որպէս զի գլխոց և յօգտւածոց դասակարգութեանը նայի և օրէնսդրական սնին ու յատկաբանութեանց ուշադրութեամբ վերաքննութիւնն ընէ։ Այս յղումն իրաւունքն է եթէ Հանճատ գիւանը խնդրէ։

Գրական վերաքննութենէն ետքը մէյ մ'ալ կը կարդացվի Ժողովին, և բացված վիճաբանութիւնը մի միայն խմբագրութեան վրայ կրնայ ըլլալ։

Յօդ. 67. — Բարեփոխութիւնք խմբագրեալ կը տրվին Ատենայեաին։

Ժողովը քըւէ չի տար ո՛չ մէկ բարեփոխութեան վրայ եթէ՝ բացատրվելէն ետքը՝ չ'ունենայ երկրորդող մը։

Յօդ. 68. — Երկրորդ որոշման միջոցին առաջարկված բարեփոխութիւնը՝ նախաքննիչ գիւանին կամ մասնաժողովին յղել իրաւունք է եթէ աեղեկաբերը խնդրէ։

Երկրորդ որոշման փակումէն ետքը ներկայեալ նոր բարեփոխութիւն կամ յաւելւածական յօդուած՝ երրորդ որոշման բացումէն առաջ հազարդված պէ՛տք է ըլլայ նախաքննիչ գիւանին կամ մասնաժողովին։

Յօդ. 69. — Եռեակ քըւէարկութեամբ բարդ որոշման տնօրէնութիւնը պիւտճէի խնդրոց և տեղական օրինաց համար չէ, ասոնք միակ քըւէարկութեամբ և պարզ որոշման եղանակաւ կը տնօրինվին։ Այլ Սահմանադրական Կոնստիտուցիոն համար է որ ընդհանուր ազգին մէջ իբրև օրէնք պիտի իշխեն։ Ինչպէս ընտրական օրէնք, հանգանակութեան օրէնք, դատարարական օրէնք, իրաւանց ու պարտեաց արգար սկզբունքէն բղխեալ այն տրամադրութիւնք՝ որ կայսերական ընդհանուր օրինաց համաձայն՝ ազգային վարչութեան ընթանալու շաւիղը կը գծեն և անհատից յարգն ու պատկառանքը կը պահանջեն։

Յօդ. 70. — Այն օրինաց համար՝ որք ըստիպողութեան պատահառով պարզ որոշման եղանակին եթարկեալ են (յօդ. 59), Բարձրաշնորհը՝ իբրև գործադիր իշխանութեան Պետ՝ իրաւունք ունի երկրորդ որոշում մ'ալ խնդրելու զոր պատճառաբանեալ գիտողութեամբ կը յայտնէ ժողովին։

Յօդ. 71. — Եթէ երեք որոշմանց մէկուն մէջ մերժվի օրինական ծրագիր մը, երեք նիստէ առաջ չը կրնար դարձեալ երեւիլ ժողովին օրակարգին մէջ։

Յօդ. 72. — Ժողովին որոշմանց արգիւնքը Ատենապետը կը հռչակէ սա բառերով՝

«Ազգային ժողովն ընդունեց»,
կամ՝ «Ազգային ժողովը չ'ընդունեց».

Յօդ. 73. — Ազգային ժողովին վերջնական վճիռը նոյն ժամէն գործադրելի է.

Ատենապետը՝ ժողովին կամքը առնելէն ետքը՝ յանուն ժողովին ստորագրելով կը հրամայէ վճռագիրը, նիստին օրէն թվականեալ, զոր և ատենադպիր մը կ'ստորագրէ:

Վճռագիրը Ատենապետին ձեռօք Բարձրաշնորհ Սրբազանին կը արուի, զոր ինքն ալ ստորագրելով՝ նախագահական հրամանմամբ գործադրութիւնը կ'ապահովէ:

Օրինակը Պատրիարքարանի գիւանին մէջ արձանագրուելով օրինաց գրքին մէջ, վճռագիրը կը պահվի Ազգային ժողովին թանգարանին մէջ.

Ասկէ ութ օրէն՝ Բարձրաշնորհ Սրբազանը պատրիարքական կոնգանու կը ժանուցանէ Առաջնորդաց զազգային որոշումը, ի հրահանգ ժողովոց և խորհրդոց:

Յօդ. 74. — Եթէ հաստատված օրինաց մէջ սահմանագրական այնպիսի կէտեր կան, որ Բ. Դրան վաւերացմանը կը կարօտին, այնպիսեաց

համար՝ Բարձրաշնորհ Սրբազանը կա՛մ պատաս-
խանատուութիւնը յանձն կ'առնու իբրեւ միջնորդ
յարաբերութեանց Ազգին և Տէրութեան, և
գործադրութիւնը կը հրամայէ պատրիարքական
իշխանութեամբ, սպասելով զայդ վաւերացումը.
կամ՝ բացառութիւն կը խնդրէ ժողովէն, փու-
թացնել խոստանալով զայդ վաւերացումը:

Ո՛րն և ըլլայ իր որոշումը՝ Բարձրաշնորհը
կը յայտնէ զանի ժողովին գո՛նէ յաջորդ նիս-
տին մէջ:

Յօդ. 75. — Ժողովն իր որոշումէն չը կըր-
նար գառնալ կամ զանի փոփոխել. եթէ որոշ-
եալ խնդրին հեղինակին կողմէն, վարչութեան
կամ Պատրիարքին կողմէն գործադրութեան ան-
տեղութիւն պատճառելով ստիպողութիւն չը
խնդրվի, որոշումէն գոնէ երեք ամիս ետքը.
(տե՛ս ստիպողութեան յօդուածները):

Եթէ ստիպողութիւնը մերժվի. արդէն ո-
րոշեալ խնդիրը մէյ մա՛լ չը կրնար ներկայվիլ
նոյն ատենական շրջանին մէջ:

Ը. ԳԼՈՒԽ

Բեմական յարաբերութիւնք ժողովին

Յօդ. 76. — Ժողովին **աւղղակի** և **ներքին** յարաբերութիւնքը իւր Գործադիր իշխանութեան և իւր Վարչութեան հետ են, որոյ անգամք՝ իւրենց վերապահեալ նստարանին վրայ բաղմամբ՝ ժողովին մէջ ձայն ունին, բայց ո՛չ քըւէ եթէ երեսփոխան չեն։ — Նոյնպէս և իրենց համարաւորութեան խնդրին մէջ ձայն ունին, բայց քըւէ ո՛չ՝ թէև երեսփոխան։

Ժողովին գիւտնը առանց թուղթի գործ ո՛չ կ'ընդունի Վարչութենէն, ո՛չ կը յղէ Վարչութեան (*).

(*) Զրահանգ. — Վարչութիւնը չը կրնար և չունի իրաւասութիւն խնդիր յղել ժողովին ի քննութիւն աւտարտամ կերպով կարծիք հարցնել, զի քննութիւնը տեղեկագիր կը պահանջէ և ժողովը տեղեկութիւն առլու տեղ չունի, իրմէ վեր մարմին չը կայ պաշտօնական, իր քննութեանց ու վէճերուն նպատակը՝ միայն վճռի մը հասնիլ է։ Իրեն եկած թուղթերը, իր գիւտնին վրայ աւանդեալ վճիռ կ'սպասեն և ո՛չ տեղեկագիր։

Վարչութեան ընելիքը խնդրանք մըն է կամ առաջարկութիւն, որոյ համար ստիպողութիւն կրնայ խնդրել։ Ստորնազոյն գիւտնէ մը պաշտօնական թուղթ չը յղվիր բարձրագոյնին՝ այլ կը մատուցվի, ինչպէս բարձրագոյնէն չը մատուցվիր ստորնազոյնին՝ այլ կը յղվի։

Յօդ. 77. — Վարչութեան անգամք՝ անհնիր իր մասին մէջ առանձին՝ իբրեւ պաշտօնեայ ժողովին՝ պատասխանատու են անոր, և Գործադիր իշխանութեան Պետը՝ ընդհանուր պատասխանատու, ըստ Սահմանադրութեան:

Այս պատասխանատուութենէն ընդհանուր կերպով կը գերծվի Սահմանադրութեան պատուիրած տարեկան համարատուութեամբ:

Սահմանադրութեան պատուիրած համարատուութիւնը՝ չիմանար եղած անցած գէշ մը մասնաւոր գործողութեանց ցանկը՝ այլ տեւական և ընդհանուր վերակերպութիւնները, եղծմանց ու անկանոնութեանց տուլեն առնելու համար նոր հաստատված օրէնքն ու կանոնները, ազգային գործոց անձնիր ճիւղին իր մասին մէջ ինչքայլ տուած յառաջագէտ և ո՛ր աստիճան բարգաւաճեալ ըլլալը, վերջապէս չ'իմանար պաշտօնէին պաշտօն վարած ըլլալը գիտնալ, այլ այն պաշտօնին պարտականութիւնը կատարած կամ ո՛ր աստիճան կատարել կրցածը կ'ապասէ իմանալ: Քանզի պաշտօն և պարտականութիւն մի և նոյն բան չ'իմանար Սահմանադրութիւնը:

Համարատուութեամբ հասկցածն այն է Սահմանադրութեան, ինչ որ Վարչութեան իւրաքանչիւր մասին համար՝ ո՛չ իբրեւ պաշտօն,

այլ իբրեւ պարտականութիւն գծած է իր յօդաւածին մէջ, ժամանակին համար պահանջելուն անպատեհութեամբ ։

Սոյն աչօք կը քննեն դիւանները, սոյն աչօք կը դատէ ժողովն զՎարչութեան համարատուութիւնքը ։

Եթէ ժամանակին չ'աւանգդին այդ համարատուութիւնք Մ. Դիւանին վրայ, հոնգերձ ազգային ելումտից տարեկան պիտոճէով, պատահաւանաւ կը մնան Վարչութեան անգամք և զլիտուրապէս գործադիր իշխանութեան պետը, որուն այս մասին հարցում կ'ուղղի Դիւանէն (յօդ. 1) ։

Յօդ. 78. — Վարչութեան իւրաքանչիւր մասին տարեկան համարատուութիւնքը՝ ատենական չըջանին երկրորդ նիստին մէջ՝ տպեալ կ'աւանգդին ժողովին դիւանին վրայ (յօդ. 6) ։

Ատենապետը զանոնք գիւաններուն կը յղէ իբրեւ ստիպող խնդիր (յօդ. 9, 10, 11) ժողովին կարծիքն առնելէն ետքը ձեռամբարձով առանց վէճի ։

Դիւաններէն տեղեկագիր քանի որ հասնի, տեղեկագրերը կ'ընթեռնու և կ'աւանգէ Մ. Դիւանին ։ Ատենապետը կ'առաջարկէ և ժողովը կ'որոշէ իւրաքանչիւրին վիճարանութեան օրը ։

Յօդ. 79. — Համարատութեանց քննութեան
արդեամբ, ժողովը կ'ամ կը գովէ կ'ամ կը պար-
տաւէ վարչութեան ընթացքը, և իր դատաւճի-
ռը գաղանի քըւէով կը յայտնէ:

Համարատութեան չընդունելութիւնը՝ ան-
վստահութիւն կ'ենթադրէ ժողովին կողմէն
համարատու ճիշդին վրայ, որ պարտաւորեալ կը
գտնվի հրատարակու.

Յօդ. 80. — Վարչութեան անգամաց հրա-
ժարականը կամ ուղղակի ժողովին կը տրվի
կամ Պատրիարք Սրբազանին, որ եթէ ընդունի
կը հաղորդէ զանի ժողովին, որ կը հաստատէ
զայն ընդունելութիւնը և նոր ընտրելեաց ցանկը
կը խնդրէ (տե՛ս յօդ. 47):

— Ժողովին տրված հրաժարականը եթէ
պատճառաբանեալ է, ժողովն իրաւասութեան
գիւանին եզրակացութեանը վրայ ևն աւարձով
առանց վէճի կ'ամ կ'ընդունի կամ գործադիր
իշխանութեան կը յղէ ի տնօրէնութիւն:

Յօդ. 81. — Ո՛ր և է պտրագայի մէջ երբ
ժողովին կողմէն անվստահութեան ցոյց կամ
կասկած նշմարէ, վարչութեան այս կամ այն
մասը միշտ իրաւունք ունի վստահութեան քըւէ
պահանջելու:

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի միթէ կը տեսնէ՞ այդ քըւէին պէտքը։ Այդ քըւէն յաջորդ նիստին կը մնայ, որոյ արդիւնքը Գործադիր իշխանութեան շը դաշիր։

Յօդ. 82.— Ո՛ր ժամանակ ըլլայ երեսփոխան մը կրնայ հարցապնդում ուղղել Վարչութեան մը և է մասին կամ Պատրիարք Սրբազանին. բայց դրաւոր պէտք է տայ իր այդ խնդրանքն Ատենապետին։— Այդ խնդրանք կը բացատրէ համառօտիւ հարցման նիւթը և կ'ըսէ որ՞ւ ուղղեալ ըլլալը. Ատենապետը կ'ընթեռնու դանի Ժողովին։

Երեսփոխանէ առ երեսփոխան հարցապնդում արդիւնեալ է։

Յօդ. 83.— Վարչութեան անդամներէն անի որում անկ է պատասխանել իր կարծիքը տալէն ետքը, Ժողովը կը վճռէ ձեռամբարձով առանց վէճի միթէ կամի՞ լսել այդ հարցապնդումը, և կ'որոշէ օրը։

Իրաւունք է դռնփակ նստել եթէ խնդրէ հարցապնդեալ պաշտօնեայն։

Հարցապնդումն լմննալէն և միջադէպը դոց վեղէն ետքը, Ժողովը կը դառնայ իր օրակարգին

Յօդ. 84.— Պատրիարք Սրբազանին համար անվըտահալութեան քըւէ չ'առաջարկվիր, և մշ

իսկ ինք կրնայ վատահալածեան քըւէ պահանջել: Իր անկումը չը կրնար տեղի ունենալ այլ մի. այն ալն ճամբով որով հասած է յիշխանութիւն (յօդ. 13, 50):

Բայց կրնայ ամբաստանուիլ երեսփոխանաց կողմէն Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը համար, կամ անոր գործադրութեան տնօգտութեանը համար:

Երբոր կանոնաւոր (յօդ. 55) ամբաստանադիր մ'աւանդվի Մ. Դիւանին վրայ, Ատենապետը զանի կը հաղորդէ ժողովին և անոր կարծիքն առանց վէճի առնելէն ետքը կը յլէ Ատենապետաց դիւանին նախաքննութեանը:

Այս դիւանն իր տեղեկագրով կա'մ պարզապէս մերժման կ'եղրակայէ կամ նկատառման:

Տեղեկագրին եղրակացութեան վրայ ժողովը կ'արտասանէ իր վճիռը ձեռամբարձով առանց վէճի, և ըստ այնմ կա'մ կ'անցնի իր օրակարգին եթէ մերժումն արտասանէ, կա'մ ելք կուտայ ամբաստանութեան եթէ նկատառումն արտասանէ:

Այս ետքի պարագային մէջ յատուկ մասնաժողով մը կ'ընտրուի (յօդ. 7) ամբարտաանութիւններ քննելու համար:

Երբ այս քննիչ մասնաժողովին տեղեկագրերը տպեալ և երեսփոխանաց ջրհալ աւանդվի Դի-

ւանին, յետ ընթերցման եթէ ընթերցումն ըլլայ, Ատենապետը ժողովին կամքն առնելով առանց վէճի կը յզէ զայս տեղեկագիրը Ատենապետաց գիւանին, ի վերաքննութիւն։

Վերաքննեալ տեղեկագրին եկած օրը ժողովը կ'որոշէ վիճաբանութեան օրը, և կը գատէ զամբաստանութիւնը։

Այս դատական նիստը գտնափակ է։ Ատենապետը զանի կը գումարէ երեսփոխանաց օրինական մեծամասնութեան ներկայութեամբը (յօդ. 50), և եպիսկոպոսաց երիցագոյնին նախագահութեամբը։

Քըւէն գաղտնի է, և ամբաստանողք քըւէ չունին։

Եթէ ամբաստանութիւնն իրաւացի գատվի ժողովէն, Դիւանը կ'առաջարկէ անվստահութեան քըւէն, որ պարտաւոր իշխանութեան անկումը կ'ենթադրէ։ Որոյ արդեամբ և յանուն ժողովին Դիւանը նախագահ եպիսկոպոսին հետ կը խնդրէ Պատրիարք Սրբազանէն իր հրաժարականը, զոր կը պարտաւորի տալ։

Եթէ ամբաստանութիւնն անիրաւի գատվի ժողովէն, Դիւանը կ'առաջարկէ վստահութեան քըւէն որ անպարտ իշխանութեան հաստատու-

թիւնը կ'ամրապնդէ, և որոյ արդեամբ զոր Դիւանը կը հաղորդէ Պատրիարք Սրբազանին, ամբաստանողք կը պարտաւորին ներում խնդրել Նորին Սրբազնութենէն դռնբաց նիստի մէջ։

Սոյն օրինակ կրնայ ամբաստանվիլ և Վարչութեան անձնիւր ճիւղ, և ժողովը սոյն նամբով կը գիտէ իր գատավճռին։

Յօդ. 85.— Վարչութեան անդամք ալ կրնան ամբաստանել Պատրիարք Սրբազանը, բայց պէտք է նախ հրաժարին կամ դադրին պաշտօնէ. և չեն կրնար ամբաստանել երբ արդէն Նորին Սրբազնութեան կողմէն վարչական փոփոխման մ'առաջարկութիւն աւանդեալ է Դիւանին։

Յօդ. 86.— Եթէ Պատրիարք Սրբազանը Վարչութեան մասնակի կամ ամբողջակի փոփոխումն առաջարկէ ժողովին, պատճառաբանեալ կ'ընէ զայդ առաջարկութիւնը, և ժողովը իրաւասութեան գիւանին եղրակացութեան վրայ՝ կ'ընդունի կամ կ'օրոճգէ զառաջարկութիւնը, ձեռամբարձով առանց վէճի։

Զօրանգումը սա բառերով կը պատճառարանէ, ժողովն զՊատրիարք Սրբազանին ուշադրութիւնը վերստին հրաւիրելով առաջարկեալ փոփոխման

վրայ՝ կը յապագէ զիւր հանութիւնը •

Յօդ. 87. — Եթէ Պատրիարք Սրբազանք զիւր հրաժարականը առ, պատճառաբանեալ պէտք է ըլլայ այդ հրաժարագիրը • Ժողովը՝ յետ ընթերցման՝ Առնեապետաց գիւանին նախաքննութեանը կը յանձնէ հրաժարագիրը, և այս գիւանին եզրակացութեանը վրայ՝ պատճառները քննելով կ'ընդունի կամ չ'ընդունիր առաջարկեալ հրաժարումը • Եթէ չ'ընդունի, պատճառաբանեալ կը հաղորդէ զիւր որոշումը՝ Պատրիարք Սրբազանին, որում միայն կը մնայ որոշել իր ընելիքը •

Յօդ. 88. — Կեդրոնական Վարչութեան արտաքին յարաբերութիւններէն ծագած խնդիրները անուղղակի կուգան կ'ելնեն Ժողովին ատենը՝ Պատրիարք Սրբազանին միջնորդութեամբը •

Այս նամբով եկած թուղթերը՝ կամ հրամանագիր է • Դռնէն, կամ կոնդակ վեհաշնորհ կաթողիկոսէն, կամ խնդրագիր Գաւառական ժողովներէն և Առաջնորդներէն, և կամ տղերոս գիր հասարակութեան կողմէն, Պատրիարք Սրբազանին ուղեալ • որ ատենց մէջէն Ժողովին ներկայեցիկները կը հաղորդէ անոր՝ կցելով մի-

անգամայն վարչութեան կարծիքը նոյն խնդրին վրայ և պարտ ու պատշաճն իմացնելով :

Ժողովն ըստ պատշաճին՝ կամ վարչութեան կը յղէ ի տնօրէնութիւն, կամ իր գիւանաց նախաքննութենէն կ'անցնէ խնդիրը, կամ մասնաժողովէ մը և կամ Ասենապետաց գիւանէն, և ասանց տեղեկագրին վրայ կը վիճէ, կ'որոշէ իր պատասխանը և կը հաղորդէ իր նախագահին առ ի տալ որում անկ է :

Յօդ. 89. — Հասարակութեան կողմէն Աղգային Ժողովին մատուցուելու հանրագիր, աղերսագիր, ստորագրեալ ըլլալու է. ստորագրողաց երկիրը, արհեստն ու բնակարանը նշանակեալ, կամ գոնէ շորսինը՝ եթէ շատուր են :

Ստորագրութիւնք վաւերացեալ ըլլալու են տեղին Թաղական Խորհուրդէն :

Եթէ այդ վաւերացումը զլացեալ է, այդ զլացումը նշանակելու են ստորագրողք աղերսագրին աւարար :

Հանրագիր թէ աղերսագիր նախագահ Սըրբազանին պէտք է ուղղի և անոր տրվի կամ Պատրիարքարանի գիւանատան՝ մէկ կամ քանի մը անձանց ևեռօք :

Ժողովարանին բակը խռնեալ բազմութեամբ բերված աղերսագիր ո՛չ նախագահը կրնայ ըն-

գումնել ո՛չ Ատենապետը :

Երեսփոխանի մը արգիլեալ է միջնորդ կանգնիլ բաղմութեան և ժողովին մէջտեղ . պարագային ծանուութեան համեմատ ենթակայ կ'ըլլայ 102 յօդուածին տնօրինած պատիժներէն մէկուն :

Յօդ. 90. — Աղերսագիրներն իրենց եկած կարգովը կը սօմարագրէ Պատրիարքարանի գիւանապետը աղերսագրոց սօմարագրքին մէջ, նշանակելով աղերսագրին կարգին թիւը . ըստ տօրագրողին երկրը, արհեստն ու բնակարանը նոյնպէս և խիստ համառօտ կերպով աղերսին տւարկան :

Տօմարագրեալ աղերսագիր Նախագահին կողմէն գիւանապետին ձեռք կ'աւանդվի Մ. Դիւանին, և Ատենապետը՝ ժողովին համառօտ մը ծանուցանելով նիւթը՝ կը յղէ Յարաբերութեանց գիւանին, ժողովին կարծիքն առնելէն ետքը ձեռամբարկով առանց վէճի :

Եթէ նոյն խնդիրին վերաբերեալ խնդրով մ'ըզբաղած է յատուկ մասնաժողով մը կամ ուրիշ գիւան մը, ուղղակի հսն կը յղէ : Զայս յղումը Յարաբերութեանց գիւանն ալ կրնայ ընել :

Ո՛ր և է երեսփոխան կրնայ լիովին ծանօթութիւն տառու աղերսագիրներէն, անոնց քըննութեանն զբաղող գիւանին գիմեւով:

Յօդ. 91. — Ամէն մէկ աղերսագիր՝ տեղեկագրի մը և օրոշման մը նիւթ է քննիչ գիւանին մէջ:

Տրված որոշումն՝ իբրեւ պատասխան՝ իմաց կը արվի աղերսագրողին, աղերսագրին կարգին թըւահամարովը, որոյ առջև նշանակեալ է այդ օրոշումը:

Քննիչ գիւանը կամ մասնագիտովը ժողովին առեմապետը կը բերէ այն աղերսագիրները զորս Վարչութեան յղել կ'եզրակայէ, և զանոնք որ օգտակար կը գտնէ ժողովին քննութեանն ենթարկել:

Առաջնութիւն կամ օտիպոյութիւն կրնայ խնդրվիլ աղերսագրի մը քննութեան համար. ժողովը կ'որոշէ սոյն պարագային մէջ՝ ևեւամարտեով առանց վէճի:

Երեք տմսի մէջ գտնէ՝ Վարչութիւնը կը ծանուցանէ աղագային օրագրի միջոցով ի՛նչ եւք որ առաւ ժողովէն իրեն յղեալ աղերսագրոց:

Թ. ԳԼՈՒԽ

Ներքին եւ արտաքին քաղկաղութիւն
Ազգային ժողովին

Յօդ. 92.— Ժողովին բարեկարգութիւնը
յանուն ժողովին՝ Նախագահ Սրբազանը կը հա-
ղայ, անձամբ կամ իւր փոխանորդին ձեռք։

Փոխանորդ Հօր կը վերաբերի նաև ժողովա-
րանին նիւթական պիտոյից հոգը։

Յօդ. 93.— Ո՛չ ոք օտար՝ ո՛չ մէկ պատ-
ճառանօք՝ չը կրնար մտնել երեսփոխանաց բաղ-
մոծ շրջապատին մէջ։

Յօդ. 94.— Ժողովուրդին ունկնդրութեան
իրաւունքը լիովին վճարված է ասենագրու-
թեանց հրատարակմամբ, որ իբրև արձագանգ
ժողովին՝ համօրէն ազգին լսողութեանը կը հաս-
նի։ Ներկայութեամբ սահմանեալ ունկնդրութեան
թոյլտուութիւնը չնարհ մըն է ժողովին կողմէն,
զոր Նախագահը կամ Ատենապետը կը տնօրինեն
վերնատունը տիկնանց յատկացեալ է։

Դասը՝ եկեղեցական ունկնդրաց, գաւառական
և թաղական ժողովականաց ու Խորհրդականաց,
նախկին երեսփոխանաց, ազգային լրագրատպեալ
պատաւաւոր օտարազգիաց յատկացեալ է, զորոնք

բարապանք կ'ընդունին ու կը տեղաւորեն :

Նիստին բոլոր տեւողութեան ատեն՝ ունկընդիրք լուռ կենալու են ու նստած :

Հաւանութեան կամ դժգոհութեան ձայն բարձրացնողը իսկոյն դուրս կը հանվի ունկընդրութեան տեղէն՝ բարեկարգութեան պահապան բարապանոց ձեռօք, հրամանաւ Նախագահին կամ Ատենապետին :

Յօդ. 95. — Եթէ ժողովը ազմկայոյց ըլլայ, և Ատենապետը կամ Նախագահը չը կարենան հանդարտութիւնը վերահաստատել, կ'ազդարարեն թէ նիստը գաղթեցնելու պիտի պարտաւորին :

Երկրորդ ապարդիւն ազգէն ետքը՝ նիստը կը վերնայ կէտ ժամի չափ : — Կէտ ժամէն՝ նիստու վիճարանութիւն գարձեալ կը շարունակուին :

Եթէ ազմուկը նորէն սկսի, Ատենապետը ժողովին իմաց տալէն ետքը՝ կրնայ վիճարանութիւնը փոկեալ յայտարարել, և անմիջապէս քէտարկութեան ձեռնարկել, եթէ տեղի կայ :

Եթէ ազմուկը մէյ մ'ալ սկսի աւ քէտարկութիւնը խափանէ, կամ ժողովին մէջ բռնութեան գիժոյններ ըլլան, իսկոյն կը վերնայ նիստը :

Յօդ. 96. — Պատրիարք Սրբազանին հօգնէ հսկել Ազգային ժողովին ներքին և արտաքին ապահովութեան :

Առ այս պէտք եղած միջոցները ձեռք կ'առնու, հարկաւոր դատած հրամանները կուտայ, և ըստ հարկին՝ պահապան զօրութիւն կը խնդրէ ստիկանութենէն, իր հրամանին տակ գործելու:

Պատրիարքական իշխանութեան սահմանը՝ թէ՛ Ազգին և թէ՛ տէրութեան առջև՝ իր ուխտըն ու պատասխանատուութեան սահմանն է:

Ժ. ԳԼՈՒԽ

Պատժական Կանոն

Յօդ. 97.— Ազգային Ժողովին կանոնադանց անգամոց տնօրինվելու բարեկարգական պատիժները՝ չորս աստիճան՝ ասոնք են.

- | | | |
|------|---|----------------------------------|
| Խիստ | } | 1. Ի կարգ կոչում: |
| Մեղմ | | 2. Ատենադրութեամբ ի կարգ կոչում: |
| | } | 3. Յանդիմանութիւն: |
| | | 4. Պարտաւանօք յանգիմանութիւն: |

Մեղմ պատիժները Ատենապետը կը տնօրինէ. խիստ պատիժները Ժողովը կ'արտասանէ:

Յօդ. 98.— Ի կարգ կը կոչվի այն ատեն նախնին «ը կարգէն խոտորի, ա՛յն անգամը որ

28 յօդուածին պատուիրանքը չը յարգելով կամ
ո՛ր և է կերպով բարեկարգութիւնը խանգարէ:

Յօդ. 99. — Ատենագրութեամբ ի կարգ կը
կոչվի տ'յն անգամն որ մի և նոյն նիստի մէջ
երկու անգամ, կամ երկու յաջորդ նիստերու
մէջ ի կարգ կոչվեցաւ:

Յօդ. 100. — Ատենապետն ինքնին անկախ
հեղինակութիւն ունի ի կարգ կոչելու:

Խօսքը կը շնորհվի այն ատենաբանին որ ի
կարգ կոչեալ՝ կը հպատակի Ատենապետին
հեղինակութեանն ու կը խնդրէ զինքն արգարա-
ցընել:

Անի որ խօսելու արտօնութիւնը չառած զին-
քըն ի կարգ կոչել տուաւ, խօսք չունի զինքն
արգարացնելու համար, այլ միայն ատենանին վեր-
ջերը, եթէ Ատենապետը չը հաճի:

Եթէ Ատենապետը ետ չառաւ ի կարգ կոչումը
ատենագլորք զանի կը նշանակեն ատենագրու-
թեան մէջ:

Յօդ. 101. — Երբոր ատենաբան մը մի և
նոյն նիստի մէջ երկու անգամ ի կարգ կոչվի,
ժողովը կրնայ Ատենապետին առաջարկութեան
վրայ արգիլել զանի խօսքէ աշխուհեաւ այն նիս-
տին մէջ:

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վեճի:

Յօդ. 102. — Յանդիմանութիւն կ'արատա-
ռանվի այն անդամին գէմ.

1. Որ տտենագրութեամբ ի կարգ կոչումէն
եռքը չդառնար ի կարգ և ի պարտականութիւն.

2. Որ մի և նոյն նիստի մէջ երեք անգամ
կամ յաջորդապէս երեք նիստի մէջ ի կարգ
կոչման պատժին արժանանայ.

3. Որ ժողովին մէջ ազմկայոյզ տեսարան
մը յարուցանելու նախաձեռնէ, կամ օրէնսդրա-
կան աշխատանքէ հաւաքապէս ձեռնպահութիւն
թելագրէ.

4. Որ իր պաշտօնակցաց մէկուն կամ մէկ
մասին գէմ նախատինք կամ գրգռիչ սպառնա-
լիք ուղղէ.

Յօդ. 103. — Պարսաւանօք յանդիմանութիւն
կ'արատասանվի այն անդամի գէմ.

1. Որ պարզ յանդիմանութեան գիմագար-
ւութիւն ընէ.

2. Որ բռնութեանց գիմէ կամ ունկնդրաց
յարձակման ձայնառու ըլլայ.

3. Որ հայհոյէ կամ ընկերին ձեռք վերցնէ.

4. Որ զժողովն տնարգէ, կամ տնօր մէկ
մասը, կամ Ատենապետը.

Յօդ. 104. — Պարտաւանօք յանդիմանու-

Թիւնը հարկ կը դնէ յանցաւոր երեսփոխանին Իսկոյն առեանը Թոյլու գուրս ելնել և զգուշանալ երեւիլէ մէյ ժալ Կոյն նիստին մէջ ։

Եթէ չ'եւնէ, Նախագահը հրաման կ'ընէ . եթէ այս հրամանին տնհնազանգութիւն ըլլայ, նիստը կը զերնայ, և յանցաւորին մեկնելէն ետքը կրնայ գարնեալ շարունակվիլ . բայց տնհնազանգ յանցաւորը յաջորդ նիստին մէջ խօսելու իրաւունք կը կորուստնէ ։

Յօդ. 105 .— Յանդիմանութիւնները Թէ պարզ և Թէ՛ պարտաւանօք Ժողովը կ'արտասանէ ևնամբարձով տուանց վէճի, Ասեռապետին յանուն կանոնադրութեան առաջարկութեանը վրայ, և Նախագահը կը գործադրէ ։

Երեսփոխանը որու գէմ առաջարկվի այս բարեկարգական պատիժներէն մէկը կամ միւսը, միշտ իրաւունք ունի իր արգարացման համար խօսելու կամ յանուն իւր խօսեցնելու իր պաշտօնակցաց մէկը ։

Ժողովին արտասանած պատիժները ատենագրութեանց մէջ կ'արձանագրվին, իսկ այս վճիռներուն գէմ հետեւի յանգդնողին անունը, եթէ ըլլայ այդ աստիճան կանոնադանց, հասարակաց Թերթերով ալ կը տարածայնի, ի հրապարակ

տալով տառնագրութեան այն քաղաւածը ուր
պատիժը յիշեալ է :

Յօդ. 106. — Կ'ընկնի երեսփոխանութենէ
այն անդամը որ ժողովարանին մէջը կամ շուրջը
սնիր մը գործէ, կամ իր օրէնսդրական պաշ-
տօնին տեւան տառն պատժական տտեանի մը
կողմէն դատապարտութիւն մը կրէ, որ զրկէ
զինքը՝ իբրեւ բարոյապէս անբաւական՝ ընա-
րելութեան իրաւունքէն, ըստ Սահմանագրու-
թեան :

Պաշտօնանկութիւնը ժողովէն կ'արատանվի՝
յեւ օրինաւոր ապացոյցման :

ԺԱ. ԳԼՈՒԽ

Բացակայութիւն

Յօդ. 107. — Բացակայութեան հզօր և
քանաւոր պատճառներ են՝

1. Ճամբորդութիւն .
2. Հիւանդութիւն .
3. Հրգեհ թաղին մէջ .
4. Մանր հիւանդ տան մէջ .

Յօդ. 108. — Նախագահ Սրբազանին ներկայութիւնը միշտ կարեւոր է ժողովին շուքն ու պատկառանքն աւելցնելու համար, և երբեք անհրաժեշտ՝ ժողովին ներքին և արտաքին ապահովութեանը համար:

Երբոր բանաւոր պատճառով կամ ազգային կարեւոր ու ռաիպող գործով մը զբաղեալ՝ ըստիպվի բացակայութեան, իր տեղ առօրեայ Նախագահ մը կը ցուցնէ:

Յօդ. 109. — Մայր գիւտնին անդամաց ներկայութիւնը միշտ հարկաւոր է ատեանին բացման ճիշտ որոշեալ ժամուն, մանաւանդ Ատենապետինն ու խմբագիր ատենագրիինը անհրաժեշտ է, մէկը ատեանը բանալու համար, միւսը ատենագրութեան վրայ դիտողութեանց պատասխանելու համար:

Երբոր Ատենապետը հզօր պատճառով մը ստիպվի բացակայութեան, պարտաւոր է բաւական ժամանակ առաջ իմաց տալ երկու գերատենապետաց միանգամայն, զի եթէ մէկն ալ նմանապէս անյաղթելի ուժի մը տակ գտնուի՝ կարենայ միւսին իմաց տալու միջոց ունենալ:

Նմանօրինակ կը պարտին իրարու իմաց տալ և ատենագրիք:

Ժողովին պատուարժանութեանը գպչելը անտեղութիւն է՝ դիւանին անգամոց բացակայութեան երեսէն՝ առօրեայ դիւանով ատեան բանալու հարկին տակ գտնվիլ (յօդ. 2)։

Յօդ. 110.— Հրաժարեալ կը համարվի ա՛յն երեսփոխանը .

1. Որ առանց բանաւոր պատճառի երկու յաջորդ նիստերու բացակայ մնալով, երրորդին անկամբ չը պատասխանէ նախագահական յառուկ կոչմանը . ասի՝ իր յանձնառած պաշտօնին անհագութիւն ըրաւ երեք անգամ։

2. Որ՝ առանց բանաւոր պատճառ յայտնած ըլլալու՝ ատենական չըջանի մը երեք անբաւական նիստերու մէջ անուանական կոչման չը պատասխանէ . ասի՝ Աշգին գործը ետ մնալու պատճառ եղաւ երեք անգամ։

Այս դասի անդամները՝ եռապատիկ պարտադանց՝ 102 յօդուածին խստութեանը կը հանգիպին, որ բացակայութեան վերագրելով այսքան կը ծանրանայ և կ'ըլլայ վերջնական բացակայութիւն, զոր Ժողովը կը վճռէ և եռամբարձով առանց վէճի՝ Ատենապետին յանուն կանոնադրութեան առաջարկութեանը վրայ (*)

(*) Հրահանգ.— Դիւանը պատժատեսար մ'ունի տամա-

Պարտազանցութեամբ հրաժարեալ համարե-
լոց անունները՝ ատենադրութեանց մէջ նշանակ-
վելէն զատ՝ հասարակաց թերթերն ալ կը տանին
ընտրողաց ահանջը:

Յօդ. 111. — Թէ՛ կանոնին հրաժարցուցած,
թէ՛ ինքնին հրաժարողաց և թէ՛ վախճանեալ ե-
րեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնները ատենա-
կան աարւոյն վերջը կ'ըլլան ընդհանուր ընտրու-
թեանց ատեն:

Սակայն եթէ ժողովէն պակասը անդամոց
թիւը օրինական թիւին քառորդն անցնելով՝ իսկա-
կան թիւին ամբողջութիւնը խորեւ սպառնայ (յօդ.
49), ժողովը կրնայ՝ երբ որ ըլլայ՝ պատահական
ընտրութիւն հրամայել, նախագահ՝ Սրբազանին
կամ Դիւանին առաջարկութեանը վրայ:

Բաձե, որոյ մէջ անձիւր պատիժ իբրեկու էջն աւելի
գէտէ գէտ. հան կը նշանակեն ատենադպիրք անձիւր
նիստին մէջ տեղի ունեցած պատիժը, նոյնպէս և բացա-
կայութիւնքը: Ամէն նիստին վերջերը, նոյն տետրը աչ-
քէ անցնելով՝ եթէ կայ պարտազանցութեան աստիճանը
հասած անուն՝ ցանկը կուտան Ատենապետին, որ զանի
կը կարգայ և ժողովը կ'արտասանէ անոնց հրաժարեալ
համարումը:

Եթէ գիււանին մէջ պատահի հրաժարումը, անմիջապէս յաջորդ նիստին կ'ըլլայ ընտրութիւնը (տե՛ս յօդ. 5) :

ՎԵՐՋԻՆ 807. — Եթէ ատենական շրջանի մը մէջ երկու անգամ միայն՝ յաջորդապէս թէ՛ ընդմիջապէս՝ նիստը բոլորովին տնքաւական մնալով տեղի չ'ունենայ կամ վերնայ, սոսկ օրոշող մասին բացակայութեան երեսէն, և երրորդին՝ եթէ երեսփոխանք նախագահական յատուկ կոչնագրին խուլ մնան ու նիստը դարձեալ տնքաւական թողուն (յօդ. 52), բացակայ մեծամասնութիւնը՝ իբրև եռապատիկ պարտազանց՝ ըստ կանոնի հրաժարեալ կը համարվի (յօդ. 110) :

Եթէ այդ անակնկալ ալ ո՛չ անկարելի դէպը տեղի ունենայ, նախագահ Սրբազանը անհրաժեշտ հարկին մէջ կը գտնուի սախպողական ատեան բանալու ո՛ր և է թըռով ներկայ անդամոց, որք կը հաստատեն մեծամասնութեան բացակայութիւնը, կ'արտասանեն 110 յօդուածին տնօրինած արժանահաս վճիռը, և զ'ատենագրուութիւնը կ'աւարտուրեն :

Հետեւեալ օրը սախպողական ատենանին վճիռն հրատարակելով, միանգամայն և բացակայից տեղ նոր ընտրութեանց հրահանգները տալով ընտրող

Ժողովոց, Պատրիարք Սրբազանը՝ իբրև աւանդա-
պահ ազգային գործադիր իշխանութեան՝ անմի-
ջապէս կը հոգայ զ'Ազգային Ժողովին ամբող-
ջացումը:

ԽՐԱԳԻՐ

ՌՈՒՍԻՆԵԱՆ

ԸՆԿԱԼԵԱԼ ՄԻԱԶԱՅԸ ՀԱՒԱՆՈՒԹԵԱՄԻ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

Ի Յիսւս Ե. 4 Հոկտեմբեր 1874

ԱՅԵՆԱԳԻՐ

ԱՅԵՆԱՊԵՑ

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՅԱԻԵԼԵԱԼ ԵՒ ԲԱՐԵՓՈԽԵԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Ա.

(Ը. Նիսս 1876 ամի. երես 138)

Մանրակշիռ խնդրոց լուծման ժամանակ,
թեր ու դէմ քուէ տուողաց անուններն տառ-
նագրութեանց մէջ յայտնուպէս պիտի նշա-
նակուին:

Բ.

(ԻԱ. Նիսս 1878 ամի. երես 496)

Վարչութիւնն փոխանակ վարչական գործոց
տեղեկագրի մը, որ մինչև ցարգ համարատուա-
թեան համար գործածուած ձեւն էր, պարտի
հարկ տեսած տառն կամ գէթ Ազգային Ժողո-
վոյ նոր շրջանին բացման միջոցին հրատարակել
ՍՊԻՏԱԿ ՏԵՏՐ անունով, սլաշտօնական գրու-
թեանց տետր մը, այն գրութեանց միայն որ
կրնան ի լոյս գալ անփութ:

Երեսփոխանք միշտ ազատ են անցեալ եղե-
լութեանց համար պաշտօնական գիւաններուն

դիմել և ճշմարտութեան վերահաս ըլլալու համար պէտք եղած հետազոտութիւնն ընել ըստ պատշաճից օրինաց, որով առիթ կ'ունենան եթէ կամք ընեն՝ հարցում կամ հարցապնդում ուղղել որ և է գործոց վրայ և այս կերպով ալ համարաւթիւն կատարել:

Գ

(Դ. Նիս 1878 ամի. երես. 114-120)

Յօդ. 1.— Ազգային ժողովոյ տարեկան շրջանի բացման նախագահական ճառին որ գրաւոր կերպով պէտք է ըլլայ, ժողովը կը պատասխանէ ուղերձով մը, զոր Ատենապետաց Դիւանը կը ծրագրէ և ժողովը վիճարանութեամբ կը խմբագրէ իւր երրորդ կամ չորրորդ նիստին մէջ, ուր Ս. Պարրիալքը փոխանորդով մը կը նախագահէ ժողովին: Սոյն ուղերձը Մայր Դիւանին միջոցաւ կը ներկայացուի Ս. Պատրիարքին:

Յօդ. 2.— Իւրաքանչիւր ատենի սկիզբն ատենական գործողութեանց համար առ առաւելն մէկ ժամ կը զոհուի. ի լրման ժամուն՝ անկատար մնացած գործողութիւնք յաջորդ նիստին կը ձգուին, բացի ժողովով օտարազականութիւն տրուած խնդիրներէն որ առ ժամայն կը լուծուին:

Յօդ. 3.— Դիւաններուն կամ մասնաւոր
յանձնախումբերու քննութեան յանձնուած անձ-
նիւր խնդրոյ համար պայմանաժամ կ'որոշուի
տեղեկագրութեան զոր ժողովը Ասենապետին
առաջարկութեան վրայ ձեռամբարձով կը սահ-
մանէ առանց վիճաբանութեան և ըստ յանձ-
նարարեալ խնդրոց ցուցակը ժողովարանին մէջ
յարաժամ ի տես ամենից կը տրուի Ասենապե-
տին խնամօք:

Յօդ. 4.— Որ և է դիւան կամ յանձնա-
խումբ պարտաւոր է իր քննութեան յանձնուած
խնդրոյն տեղեկագիրը պայմանեալ ժամանակին
բերել և կամ շկրնալ բերելուն պատճառը դը-
րաւոր բացատրել ժողովին: Պայմանաժամին
տեղեկագիր կամ բացատրութիւն չբերող դիւան
կամ յանձնախումբ ազդարարութիւն կ'ընդունի
Դիւանէն յատենի ժողովոյ. և երկրորդ անգամ
պայմանաժամ որոշուելով, եթէ դարձեալ պար-
տաւանց դանուի, դժգոհութեան քուէ կը տրուի
ժողովէն, և տեղն ուրիշ մը կ'ընտրուի:

Յօդ. 5.— Ա. Իւրաքանչիւր երեսփոխան
իրաւունք ունի երբ որ ուզէ որ և է գործի կամ
խնդրոյ մը վրայ հարցումն կամ հարցապնդումն
ընել Ազգ. վարչութեան: Հարցումը տեղեկութիւն
ստանալու կամ եղելութիւն մը ստուգելու հա-

ժողովը պատասխանը պարզ տեղեկութիւն է.
իսկ հարցապնդումը քննադատական ձգտում ունի
և պատասխանը մինչև տարուան ժը համարանշան
ութիւն է :

Բ. Հարցում կամ հարցապնդում գրաւոր
կ'արձանագրուի Մայր գիւմնին որ տաճնական
գործողութեանց կարգը կը հաղորդէ զայն ժո.
Ղովին և կը յղէ առ որ ուղղելի է ի պատաս-
խանատութիւն, որ պարտաւոր է ՀԵՏԵԻՆԻԱԼ
ՆԻՍՏԻՆ կարծիքը յայտնել, եթէ հարցման կամ
հարցապնդման հեղինակն ստիպողութիւն չը
խնդրէ և կամ ժողովն չընդունի ստիպողութիւն
իսկ հակառակ պարագայի մէջ վարչութիւնը
պարտաւոր է նոյն նիստին վերջերը յայտնել
կարծիքն, ի պատասխանի հարցման կամ հար-
ցապնդման :

Գ. Վարչութեան կարծիքը կամ ուղղակի
պատասխան է հարցման կամ հարցապնդման
նիւթ եղող խնդրոյն և կամ առժամանակեայ՝
կատարելապէս պատասխանելն անկարելի կամ
անպատշաճ ըլլալուն յայտարարութիւնը : Սոյն
վերջին պարագայի մէջ վարչութիւնը պարտա-
ւոր է պոյմանաժամ ցոյց տալ և պատրաստ
գանուիլ նոյն ժամանակ պատասխանելու, եթէ

հարցումն կամ հարցապնդումն կը կրկնուի :

Դ. Վարչութեան կարծիքը կամ պատասխանը լսուելէն ետքը՝ Ատենապետն հարցման խնդիրը կը գոցէ իբր միջադէպ և կ'անցնի օրուան կարգին : Իսկ եթէ հարցապնդում կը կատարուի, վարչութեան հաւասնութեամբ օրը կ'առաջարկէ վիճաբանութեան և ժողովը զայն կը սահմանէ ձեռամբարձով առանց վիճաբանութեան :

Ե. Որոշեալ օրը հարցապնդման վիճաբանութիւնը տեղի կ'առնենայ. հարցապնդող և հարցապնդեալ՝ որքան անգամ որ պէտք ըլլայ, իսկ ուրիշ երեսփոխանի ըստ կանոնի մինչև երկու անգամ խօսելէն ետքը վիճաբանութիւնը կը փակուի և պատճառաբանեալ օրակարգի մը քուէարկութեամբ վերջ կը տրուի հարցապնդման խնդրոյն, եթէ ժողովն պատշաճագոյն չը դատէ պարզ և անխառն օրակարգն քուէարկելով փակել միջադէպը :

Յօդ. Ե.— Ազգ. ժողովն չորս անգամով ելև՝ մտից յանձնախումբ մը կ'ընտրէ իւր մէջէն, որ ազգային պիւտճէին մէջ Ազգ. ժողովոյ համար սահմանուած գումարը վարչութենէն ընդունելով՝ կը հոգայ ժողովին ապագրական, կահ կա-

բառեաց և ուրիշ ամէն կարգի ծախքեր, և աս-
րեզլիսին հաշիւը կը ներկայացնէ Ազգ. Ժողովին:

Յօդ. 7. — Ազգ. Ժողովին կանոնական նիս-
տերուն օրն ու տեղին՝ պատշաճ տեսած ատեն՝
Ս. Նախագահը Մայր Դիւանին հետ կանխառ-
խօրհրդակցելով կ'որոշէ հարկ եղած փոփոխու-
թիւնը:

Դ

(ԺԱ. եւ ԺԲ. Նիս 1880 ամի.

երես 242 եւ 331)

Յօդ. 1. — Ժողովատեղին Գում Գարուէն
փոխադրեալ է ի Ղալաթիա:

Յօդ. 2. — Առանց օրինաւոր պատճառի
երեք անգամ բացակայ եղող երեսփոխանին
անունը՝ Դիւանը կը ծանուցանէ Ժողովին և
կոչնագրին մէջ ալ յատկապէս կը յիշեցնէ ի-
րեն՝ որ երբորդ բացակայութիւնն ունեցած է
արդէն և եթէ չորրորդ անգամ ալ բացակայ
մնայ ըստ օրինի հրաժարեալ պիտի համարուի:

Ե

(ԺԹ. Նիս 1880 ամի. երես 475-477)

Յօդ. 1. — Ժողովոյ գումարման յատկաց-
եալ Ուրբաթ օրերն Հինգշաբթիի փոխուած է:

Յօդ. 2.— Փոխանակ կէս օրէն յետոյ գումարուելու՝ փորձի համար կէս օրէն 3 ժամ առաջ պիտի գումարուի ժողովը:

Յօդ. 3.— Բացակայութիւն և հրաժարում նշանակող գրութիւնք ատեանի բացումէն մինչև կէս ժամ առաջ պիտի աւանդուին Ատենապետին:

Յօդ. 4.— Առաջարկութիւն, հարցում, հարցապնդում, խնդրագիր, անդեկագիր և այլն նշանակող գրութիւնք ատեանին բացումէն մինչև մէկ ժամ առաջ պիտի աւանդուին Ատենապետին:

ՍՈՆԵՏԱՆԱԳԻՐԱԳԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԳԱԻԱՌԱՑ ՀԱՄԱՐ

Յառաջարակ

Թե ի՞նչպէս կը կազմուին Գրաստակրն
Ընդհանուր ժողովները, գաւառական վարչա-
թեան կրօնական և Բազմաքանիւն ժողովները,
եւ ի՞նչ է անոնց պաշտօնը, ի՞նչպէս կ'ընտրուի
Անապիստը և ի՞նչ է անոր պաշտօնն ու պար-
տիքը, եւ այլն. սոյն տրամադրութիւնները կը
պարունակին Ազգային Սահմանադրութեան մէջ:
Բայց ըստ որում Սահմանադրութիւնը կեդրոնա-

կան վարչութեան մասը գծած է, և Գաւառական վարչութեան համար տրամադրած է լինել յար և նման կեդրոնական վարչութեան, ուստի կեդրոնական վարչութեան կրօնական և Գաղափարական Խառն ժողովը պատշաճ դատեց, Սահմանադրութեան հետեւելով, և կեդրոնական վարչութեան վերաբերեալ մասերը իբաց թողով, գաւառացի համար սոյն Սահմանադրական Հրահանգը պատրաստել, որպէս զի Սահմանադրութեան դրոշմագրութիւնը գիւրամայ գաւառացի ազգայնաց:

Սոյն Սահմանադրական Հրահանգին այն մասերը, որ Սահմանադրութեան տրամադրութեանց հետեւութիւնն են, կեդրոնական վարչութեան Խառն ժողովը փորձառութեամբ պիտի վերաքննէ, երբ հարկը պահանջէ, և երբ այս փորձառութեան արգենաց գաւառական վարչութիւնք եւս մտադիր լինելով՝ տառջարկեն զայն կեդրոնական վարչութեան, և վերաքննեալ մասերը դարձեալ պիտի հրատարակէ: Բայց մինչեւ որ կեդրոնական վարչութիւնը սոյն Հրահանգին ամբողջին, կամ յաւելեալ և կամ յապաւեալ մասանց նորոգ հրատարակութիւն չընէ, 'սոյն Հրահանգը ամբողջ պիտի դորձագրուի, հրատարակուի:

ըտեղութեան թուականէս սկսեալ . և իւրաքան
չիւր Առաջնորդ եւ գաւառական վարչութիւն
պարտաւոր են ըստ այնմ վարուելու :

14 Սեպտեմբեր 1872

Ի Պատրիարքարանի Հայոց

Ի Կ. Պօլիս

Ն Ա Խ Ա Դ Ա Հ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԺ Կ. ՊՕԼՍՈՅ

ՄԿՐՏԻՉ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՄԵԱՆ

Դիւան Կրօնական Ժողովոյ

Ատենադպիր

Ատենադպետ

Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

ԹԱԴԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Դիւան Բաղաժական Ժողովոյ

Ատենադպիր

Ատենադպետ

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶՅԱՆՑ

ՍՆՆԵՐՍՐԻՄ

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա

Ընտրութիւն Դաւառական Ընդհ. Ժողովոյ

1. Ամեն Առաջնորդական լիճակ իւր Դաւա-
ռական Ընդհանուր Ժողովը պիտի ունենայ, Սահ-
մանադրութեան համեմատ :

2. Դաւառական Ընդհանուր Ժողովոյ անդամոց

Թիւը 21 էն մինչեւ 70 կրնայ ըլլալ, այսինքն 21, 28, 35, 42, 49, 56, 63, 70:

3. Իւրաքանչիւր Առաջնորդական վիճակ իւր Ընդհանուր Ժողովոյ անդամաց Թիւը իւր բնակչաց Թուոյն համեմատ ինք կ'որոշէ, և Կեդրոնական վարչութիւնն ալ կը հաստատէ:

4. Գաւառական Ընդհանուր Ժողովոյ տեղամաս 1/7 ը եկեղեցական դասէն, 2/7 ը Թեմերէն, և 4/7 ը առաջնորդանիստ քաղաքէն և կէս (1) աւուր միջոց հեռաւորութիւն ունեցող տեղերէն կ'ընտրուին:

Եթէ Թիւը 21 է, 3 ը եկեղեցական պիտի ըլլայ, 6 ը Թեմական և 12 ը առաջնորդանիստ քաղաքէն:

Եթէ Թիւը 28 է, 4 ը եկեղեցական, 3 ը Թեմական, 16 ը առաջնորդանիստ քաղաքէն:

Եթէ Թիւը 35 է, 5 ը եկեղեցական, 10 ը Թեմական, 20 ը առաջնորդանիստ քաղաքէն:

Եթէ Թիւը 42 է, 6 ը եկեղեցական, 12 ը Թեմական, 24 ը առաջնորդանիստ քաղաքէն:

Եթէ Թիւը 49 է, 7 ը եկեղեցական, 14 ը

(*) Կէս աւուր միջոց՝ ձիով երեք ժամու համարայ կը հաշուքվի:

Թեմական, 28 ը առաջնորդանիստ քաղաքէն,
Եւ ալլն ։

5. Առաջնորդական վիճակին մէջ դանձուղ
այն ամեն աղգայինք՝ որ կառավարութեան
սուրք կը վճարեն և 25 տարիքն լրացուցած
են, ընտրող ըլլալու իրաւունք ունին ։

6. Ընտրելի են այն ամեն աղգայինք՝ որ
80 տարիքն լրացուցած են, առաջնորդանիստ
քաղաքին մէջ կամ անկէ կէս աւուր միջոց
հեռաւորութիւն ունեցող տեղ մը կը բնակին,
որ ժողովի օրերը գիւրութիւն ունին ներկայ
դանտելու, կարգալ գրեւ գիտեն, և նոյն դա-
ւառին աղգային գործոց հմուտ անձինք են ։

7. Այն անձինքը՝ որոնց յիմար ըլլալը
ժանուցուած է, կամ Աղգին ու կառավարութեան
գործոց մէջ քրէական յանցանք գործած և դա-
տապարտութիւն կրած են, ոչ ընտրելի կրնան
կրնան ըլլալ և ոչ ընտրող ։

8. Առաջնորդը կամ առաջնորդական ֆո-
խանորդը և կամ՝ առաջնորդական Տեղապահը
նախ և յառաջ Գործադիր յանձնաժողով մը կը

կազմէ (*), որ ընտրութեան գործողութիւնները կատարել տայ, և հսկէ անոնց վրայ. այս Յանձնաժողովը 3 էն մինչև 7 անձինքէ կրնայ բաղկանալ: Առաջնորդը կամ Փոխանորդը կ'անուանէ այս Յանձնաժողովոյ անդամները՝ խորհրդակցութեամբ առաջնորդանիստ քաղաքին մէջ գտնուող ազգային ժողովին, որուն հետ որ Առաջնորդը կը ածարինէ վիճակին գործերը:

Բ

Ընտրութիւն եկեղեցական անդամաց

9. Եկեղեցական անգամ կրնան ըլլալ նոյն վիճակին մէջ գտնուող եպիսկոպոս, վարդապետ և քահանայ, վանահայրները և վանական վարդապետք, որոնք եկեղեցական պաշտօն վարելէ ըստ օրինի դադարեալ չեն:

10. Առաջնորդը կամ Փոխանորդը քաղաքին և մինչև կէս աւուր միջոց հեռաւորութիւն սնեցող տեղերուն մէջ գտնուող եկեղեցական-

(*) Եթէ զաւտոյի մը մէջ ըստ օրինի կազմեալ Գաղաքական ժողով կայ, և Ընդհանուր ժողովոյ բոլոր անդամք կամ ոմանք հրաժարեալ են, ու անոնց տեղ նորոգ ընտրութիւն պիտի ըլլայ, ան ատեն ընտրական գործողութեանց հսկելու պաշտօնը Գաղաքական ժողովին է, կամ անկէ ընտրեալ Գործադիր յանձնաժողովի մը:

ները իր քով ժողովի կը հրաւիրէ, որ քուէարկութեամբ եկեղեցական անդամոց ընտրութիւնը կատարեն:

Սոյն ժողովին ներկայ գտնուիլ չկրցող եկեղեցականք իրենց քուէն նամակաւ կրնան ղրկել առ Առաջնորդն կամ Փոխանորդն:

Վիճակին մէջ գտնուող Վանահարք տի՛ իրենց միաբան վարդապետներովն հանդերձ իրաւունք ունին քուէարկութեան մասնակցելու, թէև հեռի ըլլան առաջնորդանիստ քաղաքէն:

Գ.

Ընտրութիւն Աշխատհական անդամոց

11. Եթէ առաջնորդանիստ քաղաքին մէջ մեկ եկեղեցի կայ, (և նոյն քաղաքին մօտ կէս աւուր միջոցով գիւղ կամ քաղսք չկայ), նոյն քաղաքէն ընտրելի Գաւառական Ընդհանուր Ժողովոյ անդամները՝ նոյն եկեղեցւոյ ժողովրդեան կողմէն կ'ընտրուին:

Եթէ նոյն քաղաքին մէջ մէկէն աւելի եկեղեցի կայ, իւրց ժողովուրդը միայն մէկ եկեղեցւոյ սեպհական է, և միւսները սեպհական ժողովուրդ չունին, գարձեալ նոյն եկեղեցւոյ ժողովուրդն է ընտրողը:

Իսկ եթէ առաջնորդանիստ քաղաքին մէջ

մէկէն աւելի եկեղեցի կայ, և իւրաքանչիւր եկեղեցի իրեն սեպհական ժողովուրդ ունի, պէտք է որ առաջնորդանիստ քաղաքին ընտրելիք բաշխուին նոյն եկեղեցեաց վրայ, անոնց իւրաքանչիւրին ժողովրդեան թուոյն համեմատ:

Եւ եթէ առաջնորդանիստ քաղաքը կէս աւուր միջոց հեռաւորութիւն ունեցող գիւղ կամ քաղաք ունի իր մօտ, ան ատեն ընտրելիք՝ քաղաքին և նոյն գիւղերուն ընակչաց թուոյն համեմատ՝ պիտի բաշխուին քաղաքին և գիւղերուն եկեղեցեաց վրայ:

Եկեղեցի չունեցող գիւղ մը իրեն ամենէն աւելի մօտ գիւղին կամ քաղաքին եկեղեցիին հետ ընականարար միացեալ կը համարուի, և անոր հետ պիտի մասնակցի ընտրութեան:

12. Իւրաքանչիւր եկեղեցւոյ աւագերէցը կամ ուրիշ եկեղեցւոյ մը նոյն եկեղեցւոյ թաղական կամ Եկեղեցւոյ պաշտօնեաներուն հետ Ընտրադական ժողով կը կազմէ, նոյն եկեղեցւոյ ժողովրդէն 3-4 արժանաւոր անձինք հետ առնելով. և անոնց հետ խորհրդակցութեամբ կիրակի օր մը առաւօտեան ժամերգութեան ատեն կը ծառայանէ նոյն եկեղեցւոյ ժողովրդեան, որ յաջորդ կիրակի օրը Գաւառական Ընդհանուր ժողովոյ

անգամոց ընտրութիւնը պիտի ըլլայ, և անոնք որ ընտրող են, կարող են մասնակցիլ ընտրութեան, կամ անձամբ բերելով իրենց քուէն, և կամ փակեալ մասնակաւ շրկելով: Ընտրութեան և ընտրելութեան հանգամանքներն ալ պիտի բացատրէ:

(Եթէ գիւրութիւն ունին, պէտք է Ընտրողաց և Ընտրելեաց ցանկեր պատրաստել, և եկեղեցւոյ բակը կախել: Կամ թէ սա կերպով ծանուցում մը կախել թէ՝ «յաջորդ կիրակի առաւօտեան ժամերգութենէն ետքը քուէարկութիւն պիտի ըլլայ Գաւառական Ընդհանուր ժողովոյ անգամոց ընտրութեան համար, ուստի սուրբ եկեղեցւոյս ժողովրդէն անոնք որ ընտրութեան իրաւունք ունին, այսինքն 25 տարեկանէն վեր են և Տէրութեան տուրք կուտան, կը հրաւիրուին գալ կիրակի՝ յետ աւարտման եկեղեցւոյ ներկայ զըտնուիլ եւ իրենց քուէն անձամբ տալ: Եւ ներկայ գտնուիլ չկրցողը նամակաւ կրնայ զրկել իր քուէն»):

13. Յաջորդ կիրակի առաւօտ սուրբ եկեղեցւոյ ժամերգութեան ատեն դարձեալ աւագերէցը կամ ուրիշ եկեղեցական մը՝ նոյն օրը յետ աւարտման ժամերգութեան քուէարկութիւն ըլլալիքը կը ծանուցանէ:

Յետ աւարտման ժամերգութեան՝ աւագերէցը կամ լսնոր տեղ ուրիշ եկեղեցական մը Ընտրողական ժողովը կազմեւիւմ, տուփ մը կամ օնտուկ մը կը դնեն մէջ տեղ. նախ նոյն սընտուկին պարապ ըլլալը կը քննեն. յետոյ կը սկսին քուէ բերողներէն քուէներն ընդունիլ կարգաւ:

Ով որ անձամբ քուէ կուտայ, իր անունը կ'ստորագրէ որոշեալ թղթի մը վրայ, որուն ճակատը նշանակուած պիտի ըլլայ ի՛նչ բանի համար քուէարկութիւն ըլլալը. իսկ անոնք որ զիր շփեան՝ իրենց հաճութեամբը անունին տրձանագրել կուտան աւագերէցին կամ ուրիշ մէկուն, սր Ընտրողական ժողովոյ մէջէն է, կամ անոր հաճութեամբը հոն նոտած:

Երբ նամակաւ քուէ դայ, Ընտրողական ժողովը կը բանայ նամակը, և կը քննէ զրկողին ստորագրութիւնը կամ կնիքը թէ բուն տիրոջն է, յետոյ անոր քուէն (առանց բանալու) օնտուկը կը նետէ:

Քուէ բերուած կամ զրկուած միջոցին Ընտրողական ժողովոյ պարաքն է քննել թէ, քուէ բերող կամ զրկողը Ընտրող ըլլալու իրաւունքն ունի՞, այսինքն 25 տարեկանէն վե՞րէ և

Տէրութեան տուրք կուտա՞յ. կամ թէ ծանուցեալ յիմար՝ և աղգային կամ կառավարութեան գործոց մէջ քրէական յանցանօք դատապարտեալ մէկը չլլա՞յ:

14. Քուէներն ընդունելէն ետքը, որոշեալ ժամուն կ'սկսին քուէհամարը:

Նախ սնտուկին մէջ որչափ քուէ ըլլալը կը համրեն. յետոյ ստորագրեալ և արձանագրեալ անունները և նաժանկները կը համրեն, այս երկուքը իրարու հաւասար պիտի գան, որ կասկածելի չըլլայ քուէարկութիւնը:

Քուէհամարի գործողութիւնը կ'սկսի. աւագերէցը կամ ուրիշ մը մէկիկ մէկիկ քուէները սնտուկէն կը հանէ և կը կարդայ. զրադիր մ'ալ կարդացուած անունները կը գրէ. և մէկ անուն մը քանի տեղամ որ կարդացուի, այնչափ անգամ խաչ (+) նշան մը կամ թուանշան կը գնէ այն անունն առջև:

Քուէթղթին մէջ եթէ ուզուած թիւէն աւելի անուն գրուած ըլլայ, աւելին չկարդացուիր. մինչև որոշեալ թիւը կարդալու և ընդունելու է. անկէ անդին գրուածներն անընդունելի են:

Քուէթղթին մէջ եթէ ուզուածին չափ անուն գրուած չըլլայ, ընդունելի է, զրուածները

պիտի կարգացունին :

Քուէարկութեան և քուէհամարի գործողութիւնները հրապարակաւ կ'ըլլան, և ժողովուրդէն ուղողը կրնայ ներկայ գտնուիլ :

15. Քուէհամարի գործողութենէն յետոյ ամենէն շատ քուէ ստացող անձանց անունները կը գրուին կարգաւ, և քուէարկուած թուոյն կէսէն աւելին ստացողը ընտրեալ կը համարուի. օրինակի համար եթէ 100 քուէարկու ըլլայ, 51, 52, 53, և այլն քուէ ստացողը և աւելի թիւ ստացողները ամենքն ալ ընտրեալ են. իսկ 50, 49, 48, և այլ թիւ ստացողները ընտրուեալ չեն :

Երկրորդ անգամ քուէարկութեան պիտի հրաւիրուի ժողովուրդը ճիշդ առջինին նման, 8 օր առաջ ծանուցանելով և 8 օրէն յետոյ քուէարկութիւն ընելով, (այս 8 աւուր միջոցը կրնայ նուազիւ 1, 2 կամ 3 օրի, եթէ այսչափ կարճ միջոցի մէջ կարելի ըլլայ քուէարկու ժողովրդեան ծանուցանել երկրորդ անգամ ըլլալիք քուէարկութիւնը) : Բայց այս անգամ քուէ տրուողները որոշեալ անուանց վրայ պիտի տան : Օրինակի համար քանի ընտրելի ետ մնացած են, նոյն թուոյն կրկնապատիկը կարգաւ պիտի առ-

Նուին ընտրեալներէն անմիջապէս ետքը եկող առաւել քուէ ստացող անուններէն, և այս ցանկին վրայ քուէ պիտի տրուի:

Եթէ եկեղեցւոյ ժր ժողովուրդը միակամ այս երկրորդ քուէարկութիւնը չուզէ, և ընտրմէջներին ալ բողոքս չըլլայ, համեմատաբար առաւել քուէ առնողներէն կ'ընտրեն մնացեալ անդամները:

Ընտրական գործողութիւնները աւարտելէն յետոյ, ներկայ գտնուող Ընտրողական ժողովը տեղեկագիրը կը շինէ, որուն մէջ պիտի ծանուցանէ 8 օր առաջ քուէարկութեան ծանուցումը լլալը, 8 օր ետքը ժամ այս ինչիմ քուէներն ընդունիլը, քանի հատ անձամբ բերուիլը և քանի հատ նամակաւ, և ժամը այս ինչին քուէհամարն լլալը, և քուէից արդիւնքն ինչ լլալը. և սոյն տեղեկագիրը ստորագրելով կը դրիէ առ Առաջնորդն կամ Փոխանորդն:

16. Այսպէս պիտի ընտրեն նաև թեմերը իրենց ինկած գաւառական ժողովոյ անդամները: Միայն թէ երբ մէկ, երկու կամ երեք հայլն գիւղ միասին մէկ անձ ընտրելու հրաւիրուին, առնելը մէկտեղ կուգան մէկ գիւղին մէջ ընտ-

լուծիւն ընելու, թէ որ մօտ են իրարու, իսկ
թէ որ հեռու են իրարմէ, ամենքը զայս զանա-
քուէարկութիւն և քուէհամար կ'ընեն, և ար-
դիւնքը յետոյ իրենց մէջ կը միացնեն և տե-
ղեկագորով կը ղրկեն առ Առաջնորդն կամ Փո-
խանորդն:

17. Երբ առաջնորդը տեսնէ որ ընտրու-
թիւնները մեծ մասամբ կատարուած են, և մը-
նացեալներն ալ հետզհետէ կատարուելու վրայ
են, հրաւեր կ'ընէ Գաւառական ժողովոյ ըն-
տըրեալ անդամոց, և ընտրեց մեծագոյն մա-
սին ներկայութեան տաեանը կը բանայ, նախ
Գործադիր յանձնաժողովոյ կողմէն պատրաստեալ
ընտրութեան տեղեկագիրները կը կարգացունին,
և անոնց օրինաւորութիւնը հաստատուելէն ետքը
ըստ օրինի Գաւառական ժողովն իր գիւանը կը
կազմէ, մէկ տաեանապետէ և մէկ ատենադպրէ,
և ի հարկին տասնց ալ մէկ կամ երկու փոխա-
նորդներ աւալով:

18. Այս ամեն գործողութիւնները Գաւա-
կան ժողովոյ դիւանն ի գիր առնելով կը ղրկէ
առ կեդրոնական վարչութիւնն, որ օրինաւորու-
թիւնը ստուգելէն ետքը կը վաւերացնէ, և
Միջազան Պատրիարքն ալ յատուկ կոնդակաւ կը

ժանուցանէ նոյն ընտրութիւնը այն վիճակին
ժողովրդաց ։

Բ.

Պաշտօն Գաւառական Ընդհանուր Ժողովոյ

1. Գաւառական Ընդհանուր Ժողովոյ պաշ-
տօնն է՝

ա) Ընտրել իր գաւառին վարչութեան Կրօ-
նական և Քաղաքական Ժողովները, ընտրել իր գա-
ւառին առաջնորդը, և այս ընտրութիւնները կատա-
րելուն պէս՝ ստորագրեալ հանրագրով ներկայաց-
նել Կեդրոնական վարչութեան ի վաւերացումն ։

բ) Հսկել Առաջնորդին և Գաւառական վար-
չութեան վրայ, և բառնալ անհամաձայնութիւնը,
եթէ ասոնց մէջ ծագի ։

գ) Որոշեալ Ժամանակի մէջ համար պա-
հանջել իր Գաւառական վարչութենէն ։

դ) Գաւառական ազդային սնտուկին հաշիւը
քննել, և յետագայ տարուան մէջ ըլլալիք
ծախքը որոշել ։

ե) Գաւառական ազդային սնտուկին համար
իր գաւառի Ժողովրդէն առնելիք տուրքը որո-
շել ։

զ) Լուծել այն խնդիրները, որ Գաւառական
վարչութիւնը իր ձեռնհասութենէն վեր համա-

րելով, Ռնգհանուր ժողով կը հրաւիրէ։

Ե) Աղգալին Սահմանագրութեան և Կեդրոնական վարչութենէն սահմանեալ օրինաց և հրահանգաց անթերի գործագրութեանը հսկել։

2. Գաւառական ժողովոյ պաշտօնը 10 տարի կը տեւէ, և երկու տարին անգամ մը մէկ հինգերորդ մասը կը նորոգուի։

Առաջին անգամին ընդհանուր վիճակաւ կ'որոշուի այս մասնակի փոփոխութիւնը, ըստ օրինակի Կեդրոնական Երեսփոխանական ժողովոյ։

3. Գաւառական ժողովը սովորաբար ամէն երկու տարին կը բացուի իր վարչութենէն համարառութեան համար՝ գարնանամուտին կամ յարմար եղած ժամանակին, և ուրիշ անգամ ի պահանջել հարկին։

4. Առաջնորդը կը գումարէ Գաւառական ժողովը։

Սովորականէն զատ Գաւառական ժողով կը գումարի Առաջնորդին կառօքը, Կրօնական և Քաղաքական ժողովաց մէկուն համահանուրութեամբը, կամ Գաւառական ժողովոյ անգամաց մեծագոյն մասին խնդրանքը, որ յատուկ հանրադրով մը կը պահանջուի։

Գ.

Գաւառական վարչութեան
Կրօնական եւ Քաղաքական Ժողովները

1. Գաւառական Կրօնական Ժողովը կը
բաղկանայ 5էն մինչև 7 եկեղեցականներէ :

Ուր որ 5 եկեղեցական չգտնուի, երեքով
կը կազմուի Կրօնական Ժողովը :

2. Գաւառական Կրօնական Ժողովոյ պաշ-
տօնն է՝

ա) Գաւառին աղգային Կրօնական գործոց
ընդհանուր տեսչութիւնը:

բ) Գաւառին մէջ Կրօնական զգացումը
զարգացնել :

գ) Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանա-
թիւնն և աւանդութիւնքն անխախտ պահել :

դ) Եկեղեցականաց վրայ հսկել :

ե) Գաւառին աղգային վարժարանաց այցե-
լութիւն ընելով՝ կամ այցելու կարգելով՝
Քրիստոնէական վարդապետութեան ուսուցման
վրայ հսկողութիւն ընել, դասատուներն ընտրել՝
և քննութիւններն ընել :

զ) Արժանաւոր և բանիբուն քահանաներ
հասցնել:

3. Կրօնական ժողովոյ սմէն տեսակ տեղեկագիրները միշտ անգամաց մեծագոյն մասին կողմէն ստորագրեալ պիտի ըլլան :

4. Մինչև որ եկեղեցւոյ մը քահանաներն ու թաղական խորհուրդը նոր քահանայ ձեռնադրել տալու կարևորութիւնը չտեսնեն և ստորագրեալ տեղեկագրով գաւառական կրօնական ժողովոյ խնդիր չընեն, և ընծայացուին արժանաւորութիւնը չի հաստատուի, ձեռնադրութեան հրաման չտրուիր :

5. Գաւառական Քաղաքական ժողովը կը բաղկանայ 5 էն մինչև 7 աշխարհականներէ :

6. Գաւառական Քաղաքական ժողովոյ պաշտօնն է .

ա) Գաւառին ազգային քաղաքական գործոց ընդհանուր տեսչութիւնը :

բ) Գաւառին ազգայնոց բարեկեցութեանը և անգործութեանը հոգ տանիլ :

գ) Ազգին ձեռօքը հաւաքումը որոշուած արքունի տուրքը արգարութեամբ բաշխել և հաւաքել :

դ) Իր տեսչութեան տակ գտնուող Խորհրդոց կողմէն մատուցուած ազգօգուտ առաջարկութիւնները ուշադրութեամբ քննել, և անոնց

կարևորութիւնը յայտնուելէն ետքը՝ հաստատել
կամ՝ դործագրութեան արգելքները բառնալու
շանք ընել՝

7. Քաղաքական ժողովը ինք կը տնօրինէ թէ
Տեղական կառավարութեան և թէ կեդրոնական
վարչութեան և թէ իր առաջնորդական վիճակին
մէջ գտնուած Թաղական խորհրդոց հետ յարա-
բերութեան վերաբերեալ և ուրիշ իրեն եկած
գործերը. Ուսումնական եւ Տնտեսական եւ Թա-
ղական գործերէն զատ, որոնք սեպհական Խոր-
հրդոյն կը յանձնէ. եւ մինչեւ որ Խորհրդոյն
կարծիքը չառնու, չկրնար գործագրութեան
ձեռնարկել։

Եւ թէպէտ կրնայ իրաւացի պատճառներով
հերքել մէկ Խորհրդոյ բրած որոշումը, բայց
ինքնին ուրիշ տնօրէնութիւն չկրնար ընել նոյն
նիւթին վրայ, եւ կը պարտաւորի գործնալ
նոյն Խորհրդոյն յանձնել գործը։

8. Քաղաքական ժողովը չկրնար նաեւ փո-
խել կամ չլծել թէ՛ իր ընտրած տեսուչ խոր-
հարդներէն եւ թէ՛ Թաղական խորհուրդներէն
մէկը, քանի որ չտեսնէ զայն Սահմանադրու-
թեան հիմնական սկզբանց հակառակ ընթացքի
մէջ. Բայց երբ տեսնէ անոնց մէկը այսպիսի
ընթացքի մէջ, առաջին անգամին բացա-

արութիւն կուզէ նոյն խորհրդէն, երկրորդ անգամին անոր դրով ազգարարութիւններ ընելով ի կանոնապահութիւն կը հրաւիրէ, իսկ երրորդին՝ զայն կը լուծէ. և եթէ Ուսումնական կամ Տնտեսական խորհուրդներէն մէկն է, ինք նորը կ'ընտրէ. և եթէ Թաղական խորհուրդներէն մէկն է, առժամանակեայ Թաղական խորհուրդ մը կը կարգէ և նոր ընտրութեան հրահանգը ի միասին կը ղրկէ։ Միայն թէ այս մասին ունեցած պատահանները պիտի բացատրէ Փառաւական Ընդհանուր Ժողովոյ ներկայացնելու երկամեայ տեղեկագրին մէջ։

9. Քաղաքական Ժողովը գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ կ'ընտրէ Ազգին կողմանէ առաջնորդանիստ քաղաքին Քառավարութեան Ժողովոց անգամակից ԸԼԼալու անձինքը, պէտք եղած թուոյն համեմատ. և Առաջնորդին կամ անոր բացակայութեանը Փոխանորդին միջոցաւ Տեղական կառավարութեան կը ներկայացնէ, և մէկ օրինակն ալ կեդրոնական վարչութեան կը ղրկէ։

Թեմերուն մէջ՝ ուր որ պէտք կայ, սոյն ընտրութիւնը Թաղական խորհուրդք կ'ընեն։

10. Փառաւական Խառն Ժողովին կը պատ-

կանի ընտանեկան յարաբերութեանց վերաբերեալ դատերը քննել և վճռել, և ազգայնոց մէջ ծառած վէճերը խաղաղել:

11. Գաւառական Կրօնական ժողովը կրօնական խնդրոց համար Կեդրոնական վարչութեան կրօնական ժողովին հետ, և Գաւառական Քաղաքական ժողովն ալ քաղաքական խնդրոց համար Կեդրոնական վարչութեան Քաղաքական ժողովին հետ, նոյնպէս խառն խնդրոց համար Գաւառական Խառն ժողովը Կեդրոնական վարչութեան Խառն ժողովոյ հետ յարաբերութիւն ունին, և ի հարկին Կեդրոնական վարչութեան կը դիմեն:

12. Գաւառական վարչութիւնը իր գաւառին ազգային հանրական և անհատական խնդրոց համար տեղական կառավարութեան հետ յարաբերութիւն ունի. բայց Ա. Դրան դիմելու հարկին մէջ՝ Կեդրոնական վարչութեան կը դիմէ:

Եթէ առաջնորդական վիճակի մը մէջ գրտնուի քաղաք կամ դիւղ, որ քաղաքականապէս ուրիշ առաջնորդական վիճակին տեղական կառավարութեան ներքեւ ըլլան, երկու Գաւառական վարչութիւնք այս մասին իրարու հետ յարաբերութիւն կ'ունենան:

13. Գաւառական վարչութիւնը յարաբերու-

թեանց համար օրինաւոր գիւանատուն պիտի ունենայ, և Յեղեղեան կառավարութեան քով ալ Քափու քէհեասի:

14. Կրօնական և Քաղաքական ժողովոց պաշտօնը 2 տարի կը տևէ, և վերընտրելի չեն: Բայց եթէ Կրօնական ժողովոյ համար բաւական թուով եկեղեցական չ'զտնուի, նախորդ եկեղեցական հայրերը վերընտրելի կրնան ըլլալ:

15. Գաւառական վարչութեան Կրօնական և Քաղաքական ժողովներն իրենց երկամեայ համարատուութեան տեղեկագիրը, հանդերձ գաւառական Ուսումնական և Տնտեսական խորհրդոց տեղեկագրերով, երբ ներկայացնեն գաւառական Ընդհանուր ժողովոյ, անոնց վաւերացեալ մէկ օրինակն ալ պիտի ղրկեն առ Կեդրոնական վարչութիւնն:

Դ.

Գաւառական վարչութեան

Ուսումնական եւ Տնտեսական Խորհուրդները

1. Գաւառական Քաղաքական ժողովը կ'ընտրէ Ուսումնական խորհուրդը Յէն յինչև 5 ուսումնական և ուսումնասէր անձերէ. և այս ընտրութիւնը կը ժանուցանէ Կեդր. վարչութեան

Ուսումնական խորհրդոյ, որպէս զի կարենայ անոր հետ յարաբերութիւն ունենալ իր պաշտօնին վերաբերեալ խնդրոց վրայ:

2. Գաւառական Ուսումնական Խորհրդոյ պաշտօնն է.

ա) Դաստիարակութիւնը ընդհանրացնել գաւառին ամեն կարգի ազգայնոց մէջ:

բ) Մանկանց և աղջկանց հասաւոր ուսուցանել իրենց կրօնքը, լեզուն և պատմութիւնը և այլ կարեւոր ուսումներ:

գ) Գաւառին վարժարանաց բարեկարգութեանը հսկել, ըստ հրահանգի կեդրոնական վարչութեան:

դ) Վարժարան շուներոյ գիւղերուն մէջ վարժարան բանալ տալ:

ե) Դաստիարակութեան ընդհանրանալուն համար կազմուած ազգագուտ ընկերութիւնները քաջալերել և անոնց ձեռնառու ըլլալ:

զ) Գաւառին մէջ գտնուող գաստիարակաց կացութիւնը լաւցնելու և ապագայն անդորրեւելու խնամ տանիլ:

է) Գաւառին թեմերուն մէջ նախակրթութեան յաջողակ գաստիարակներ հասցնելու ջանք և փոյթ ունենալ:

3) Գաւառական Ուսումնական խորհուրդը կը հսկէ այն վանօրէից ուսումնական ընթացքին և վիճակին վրայ, որոնց մասնաւոր մատակարարութիւնը միաբանութեան՝ և ընդհանուր տեսչութիւնը կեդրոնական վարչութեան Վանօրէից խորհրդոյն կը վերաբերի. բայց երբէք չի կըրնար միջամտել. այլ եթէ գիտողութիւն ունենայ, կ'ուղղէ առ Գաւառական Քաղաքական Ժողով, և անոր միջոցաւ առ կեդրոնական վարչութեան Վանօրէից խորհուրդն, որ պատշաճը կը անօրինէ:

4. Գաւառական Ուսումնական խորհուրդը որոշեալ ժամանակի մէջ և ի հարկին, համար կը պահանջէ զաւտուին մէջ գտնուած թաղական խորհուրդներէն, իրենց վարժարանաց վիճակին և ընթացքին վրայ. և իր տեղեկագրովը կը հաղորդէ Գաւառական Քաղաքական Ժողովին:

5. Քաղաքական Ժողովը կ'ընտրէ Տնտեսական խորհուրդը Յէն մինչև 5 անտեսագէտ և հաշուագէտ անէերէ. և այս ընտրութիւնը կը ծանուցանէ կեդրոնական վարչութեան Տնտեսական խորհրդոյ, որպէս զի կարենայ անոր հետ յարաբերութիւն ունենալ իր պաշտօնին վերաբերեալ խնդրոց վրայ:

6. Գաւառական Տնտեսական խորհրդոյ պաշտօնն է ։

ա) Գաւառին մէջ գտնուած ազգային բուր հաստատութեանց և անոնց կալուածներուն մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնն ընել ։ անոնց պայծառութեանն և ապահովութեանը անխոնջ հսկել և հոգ տանիլ ։

բ) Սոյն ազգային հաստատութեանց և կալուածոց կալուածադրերուն օրինակը կեդրոնական վարչութեան Տնտեսական խորհրդոյ հաղորդել ։

գ) Գաւառին մէջ ազգային կալուածոց գրնումն և վաճառումն իր հաւանութեամբը որոշել, և Գաւառական Քաղաքական ժողովոյ հանձնութեամբը և Առաջնօրդի կնքով հաստատել տալ ։

Սահմանադրապէս միւսքեմիլիութիւնը ռուսած բանը Հայոց ազգին համար վերցուած ըլլալով, նոյն պաշտօնը գաւառին մէջ Գաւառական Տնտեսական խորհուրդը կը վարէ ։

Ազգային սեպհականութեան վերաբերեալ ամենայն գնումն և վաճառումն, և գրամական փոխառութիւն ըստ օրինի կանխաւ պիտի ծանուցուի կեդրոնական վարչութեան Տնտեսական խորհրդոյ ։

Գաւառական Տնտեսական խորհուրդը և Քաղաքական Ժողովը ստիպողական պարագայի մէջ որ և է գնումն կրնայ ընել, յետոյ կեդրոնական Տնտեսական խորհրդոյ ծանուցանելու պարտաւորութեամբ։ Բայց որ և է վաճառում և փոխառութիւն չկրնար ընել, առանց կանխաւ ծանուցանելու կեդրոնական Տնտեսական խորհրդոյ և առանց տնոր հաւանութիւնն առնելու։

դ) Հսկել գաւառին մէջ ազգային որ և է շինութեանց կամ վերանորոգութեանց։ որոնց չկրնար ձեռնարկուիլ առանց գիտութեան Գաւառական Տնտեսական խորհրդոյ, և հաճութեան Գաւառական Քաղաքական Ժողովոյ։

ե) Գաւառապետին քաղաքին մէջ գտնուած Հիւանդանոցին տեսչութիւնն ընել, կամ իր կողմէն յատուկ Հոգաբարձութեան մը յանձնել։

զ) Կտակաց տնօրէնութիւն ընել, կամ իր կողմէն յատուկ Հոգաբարձութեան մը յանձնել։ և այս մասին ճշդիւ գործադրութեան հսկել ըստ հրահանգի կեդրոնական վարչութեան։

է) Գաւառական սնտուկին եւ տնտեսական տեսել, որոշեալ ծախքերն ընել և եկամուտները հաւաքել։ Առանց Գաւառական Քաղաքական Ժողովոյ որոշման նոր ծախք չընել։

Գաւառական սննտակիւն մուտքն են՝ Գաւառին ընդհանուր տուրքը. Առաջնորդական հասոյթք, պտղի, նշանառք հրամանի. և առանց մասնաւոր տեղ մը որոշելու՝ գաւառին անուանը եղած կտակ կամ նուէր. Ելքն են. Առաջնորդական թոշակ, Կեդրոնական սննտակիւն յատկացեալ տարեկան տուրքը (մաւքաթա), Դիւանատան ծախք և կարօտեալ թաղերու նպաստ և զանազան ուրիշ պատահական ծախք:

7. Գաւառական Տնտեսական խորհուրդը կը հսկէ այն վանօրէից սեպհականութեանց և կաշուածոց և այլ նիւթական վիճակին վրայ, որոնց մասնաւոր մատակարարութիւնը միաբանութեան և ընդհանուր տեսչութիւնը Կեդրոնական վարչութեան վանօրէից խորհրդոյն կը վերաբերի. բայց երբէք չի կրնար միջամտել, այլ եթէ դիտողութիւն ունենայ, կ'ուղղէ առ Գաւառական Գաղաքական ժողով, և անոր միջոցաւ առ Կեդրոնական վարչութեան վանօրէից խորհուրդն, որ պատշաճը կը տնօրինէ:

Գաւառին մէջ գտնուած այն վանքերը՝ որ յատուկ միաբանութիւն չունին և չեն կրնար ունենալ, տոնք ուղղակի Գաւառական Տնտեսական խորհրդոյ իրաւասութեան ներքեւ են. և

անոր կողմէ կարգեալ և Գաւառական Քաղաքական ժողովէն հաստատեալ տեսչի մը միջոցաւ կը մատակարարուին և հասոյթը այն գիւղօրէից եկեղեցւոյ և վարժարանի ծախուց կը յատկանայ, որոնց ժողովրդեան պտղիի արգիւնքը յիշեալ վանքը կը վաճեւէ։ Այո տեսակ վանօրէից տնօրէնութեանը վերաբերեալ խորհուրդները կեդրոնական վարչութեան վանօրէից խորհրդոյն հաւանութեամբը ի գործ կը դրուին։

8. Տնտեսական խորհուրդը որոշեալ ժամանակին մէջ և ի հարկին, համար կը պահանջէ գաւառին մէջ գտնուած Թաղական խորհուրդներէն, իրենց անտեսական և ելումտից դործոց վրայ. և իր տեղեկագրովը կը հաղորդէ Գաւառական Քաղաքական ժողովին։

9. Ուսումնական և Տնտեսական խորհրդոց պաշտօնը 2 տարի կը տեւէ, և ամէն երկու տարին անգամ մը կ'իստակէս կը նորոգուին, և վերընտրելի են։

10. Այն գաւառներուն մէջ՝ որոնք բնակչօք սակաւաթիւ և դրիւք փոքր են, Գաւառական Քաղաքական ժողովը, եթէ կրնայ, ինք կը վարէ Ուսումնական և Տնտեսական խորհրդոց պաշտօնը, բայց կեդրոնական վարչութեան հաւանութիւնը կանխաւ առնելով։

Ե.

ԴԱՆԱՏԱԿԱՆ ՎԱՐՋՈՒՔԵԱՆ ԹԱՊԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՔ

1. Թաղական խորհուրդ կը կազմուի այն
Թաղին կամ գիւղին մէջ, ուր եկեղեցի կայ,
և նոյն եկեղեցին ալ իրեն սեպհական ժողովուրդ
ունի:

2. Խրաքանչիւր Թաղական խորհուրդ իր
Թաղին ժողովրդեան կողմէ կ'ընտրուի զաղանի
քուէարկութեամբ, ըստ հրահանգի ընտրութեան
Դաւառական Ընդհանուր ժողովոյ:

3. Թաղական խորհուրդներն ըստ տեղւոյն
Յէն մինչև 7 անդամներէ կը բաղկանան, և իրենց
պաշտօնն է.

ա) իրենց Թաղին ժողովրդեան ազգային
գործոց մատակարարութիւնը:

բ) եկեղեցւոյ պայծառութեանը խնամ տանիլ:

գ) Մանկանց և տղջկանց գոտոխարսկու-
թեանը համար վարժարան ունենալ և անոնց
յառաջադիմութեանը ջանք ընել:

դ) Թաղին տղքատաց խնամ տանիլ:

ե) Թաղեցւոց մէջ պատահած վէճերուն
քննութիւնն ու խաղաղարարութիւնն ընել:

4. Թաղական խորհուրդն իշ իշխանութեան ներքե գտնուած վարժարանաց վրայ Հոգաբարձութիւն կը կարգէ 3 էն մինչև 5 ուսումնական և ուսումնասէր անձերէ. սոյն Հոգաբարձութիւնը վարժարանաց տեսչութիւնը կը վարէ, ծախքը հոգաւով եկեղեցւոյ սնտուկէն յատկացած տմսականաւը և ժողովրդէն ըրած դպրոցական հանգանակութեամբը:

Սոյնպէս աղջկանց վարժարանը Տիկիներէ կազմեալ Խնամակալութեան մը կրնայ յանձնել, յար և նման Հոգաբարձութեան:

Թաղական խորհուրդը ընտրեալ Հոգաբարձութիւնը և Խնամակալութիւնը կը ժանուցանէ Գաւառական Ուսումնական խորհրդոյ, որպէս զի անոր հետ դպրոցական խնդրոց վրայ յարաբերութիւն ունենան:

5. Թաղական խորհրդոյ տնօրէնութեան տակ է եկեղեցւոյ սնտուկը, որոյ մուտքն են թաղին ժողովրդեան կողմէն տրուած թաղական տուրքը, եկեղեցւոյ և դպրոցի կալուածոց եկամուտները, եկեղեցւոյ հասոյթները, կտակաւ կամ ուրիշ կերպիւ եղած նուէրները և այլն: Ելքն են եկեղեցւոյ և վարժարանի ծախքը, գաւառական սնտուկին յատկացեալ տուրքը, ու աղքատաց տրուելիք օգնութիւնները:

6. Նորընտիր Թաղական խորհուրդ մը մինչև որ Փաւսառական վարչութեան Քաղաքական ժողովէն չի վաւերանայ և Առաջնորդին կոնգակով չի հաստատուի, պաշտօնի չի ձեռնարկեր. այսպէս նաեւ երբ հրաժարի, իւր հրաժարականը պիտի մատուցանէ Քաղաքական ժողովոյ, հաշիւն ալ Տնտեսական խորհրդոյ ներկայացնելով :

7. Եթէ Թաղական խորհուրդ մը սահմանեալ ժամանակէն յառաջ հրաժարի, Փաւսառական վարչութեան Քաղաքական ժողովը առժամանակեայ խորհուրդ մը կը կարգէ անմիջապէս, և նոր ընտրութեան հրահանգն ալ ի միասին կը ղրկէ :

Թաղական խորհուրդ մը երբ հրաժարի կամ լուծուի, վարժարանաց Հոգաբարձութիւնը կամ Խնամակալութիւնը կը շարունակեն իրենց պաշտօնը, առժամանակեայ և կամ նորընտիր Թաղական խորհրդէն ստանալով եկեղեցւոյ ոընտուկէն յատկացեալ ամսականը :

Իսկ եթէ Հոգաբարձութիւնը կամ Խնամակալութիւնը հրաժարին կամ լուծուին, Փաւսառական վարչութեան Քաղաքական ժողովոյ պարագնէ անմիջապէս առժամանակեայ Հոգաբարձութիւն

մը կամ Խնամակալութիւն մը կազմել, եթէ Թաղական Խորհուրդը չուզէ կամ չի կրնայ նորն ընտրել անմիջապէս:

8. Թաղական Խորհրդոց, ինչպէս նաև Հոգարարձութեանց և Խնամակալութեանց պաշտօնը 4 տարի կը տևէ, և վերընտրելի են:

Ձ.

Առաջնորդ

1. Առաջնորդի ընտրութեան ատեն կեդրոնական վարչութիւնն Ազգին մէջ գտնուած բոլոր անպաշտօն և առաջնորդական արժանիք ունեցող եկեղեցականաց ընդհանուր ցուցակը կը հազարդէ դաւառին:

Գաւառական կրօնական և Քաղաքական Ժողովները յիշեալ ցուցակին մէջէն իրենց գաւառին համար ամենէն աւելի յարմարաւոր երեք տնէինքը կը զատեն, և այս ընտրելեաց ցանկը կը ներկայացնեն Գաւառական Ընդհանուր Ժողովոյ:

Ժողովը կ'ընտրէ զԱռաջնորդը գաղտնի քուէարկութեամբ և բացարձակ աւաւելութեամբ քուէից:

Գաւառական կրօնական և Քաղաքական Ժողովոց պատրաստած ընտրելեաց ցանկէն գուրս անձի վրայ ալ քուէ կը արուի, բայց պէտք է որ

այն անձին անունը նշանակուած ըլլալ, կեդրոնական վարչութեան ընդհանուր ցուցակին մէջ ։

Ընտրութիւնը կատարուելէ ետեւ տեղեկագիրը կը շինուի, զոր Գաւառական Ընդհանուր Ժողովոյ անդամք կ'ստորագրեն, և տեղւոյն խառն Ժողովոյ միջոցաւ Սրբազան Պատրիարքին կ'առարկուի ։

Կեդրոնական վարչութեան խառն Ժողովը սոյն ընտրութեան օրինաւորութիւնը քննելէ և ստուգելէ ետեւ Պատրիարքական կոնդակաւ կը հաստատէ զԱռաջնորդը, և Ա. Իրան իմաց տալով պաշտօնական հրամանագիրը կ'ընդունի ։

Մինչև որ Կեդրոնական վարչութեան կողմանէ Առաջնորդին ընտրութեան օրինաւորութիւնը չը հաստատուի և չվաւերանայ, Առաջնորդն եթէ քաղաքին մէջ ալ գտնուի, պաշտօնին չի կրնար ձեռնարկել ։

2. Առաջնորդը Գաւառական Ժողովոց նախագահն է, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ, և տեղական կառավարութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է ։

Իր պարտաւորութիւնն է գաւառին մէջ Ազգային Սահմանադրութեան և Կեդրոնական

վարչութենէն սահմանեալ օրինաց և հրահան-
գաց անթերի գործադրութեանը հսկել :

3. Առաջնորդն իրեն եկած գործերը ո՛ր ժո-
ղովոյ և խորհրդոյ կը վերաբերին նէ, այն ժողո-
վոյն և խորհրդոյն կը յանձնէ քննութեան և ո-
րոշման համար : Կրօնական և Քաղաքական ժո-
ղովոց մէջ որոշուած գործոց վրայ Առաջնորդին
առ անհրաժեշտ կառավարութիւնն մատուցած
թաղերիները և կամ՝ ուրիշ պաշտօնական գրու-
թիւնները, և թէ առ ազգային կեդրոնական
վարչութիւն ուղղեալ գրութիւնները վաւերական
չեն կրնար ըլլալ, եթէ որոշեալ ժողովոյն կող-
մէ ալ կնքեալ կամ ստորագրեալ չ'ըլլան :

Իսկ երբ ստիպողական դործ մը պատահի ,
որոյ տնօրէնութեանը համար կարելի չ'ըլլայ
մինչև ժողովոյն գումարման օրը սպասել , և
կամ արտաքոյ կարգի ժողով գումարել , Առաջ-
նորդը կրնայ պէտք եղածը ինքնին տնօրինել ,
իր վրայ առնելով պատասխանատուութիւնը :
Բայց պարտաւորեալ է եղելութիւնը արձանա-
գրել տալ կանոնաւոր կերպիւ . և ո՛ր ժողովոյն
կը վերաբերի նէ , անոր յաջորդ նիստին ներկա-
յացնել վաւերացման համար :

4. Առաջնորդն իր բացակայութեան տուն ,

ժր ազգային ժողովոց մէջ տրուած որոշումները պարունակող թուղթը դեռ չըստորագրած, կարող է անոնց վրայ իր դիտողութիւններն յայտնելով խնդիրը կրկին քննութեան յանձնել: Իսկ այս վերաքննութենէն ետքը՝ պարտաւորեալ է նոյն թղթերը ստորագրել, եթէ տրուած որոշումը Սահմանադրութեան տրամադրութեանցը անհամաձայն չգտնէ:

5. Առաջնորդը կրնայ գաւառին մէջ գրեւորուող և Սահմանադրութեան սկզբանցը համեմատա չվարուող եկեղեցական մը, վարժապետ մը, Եկեղեցւոյ, Վանքի, Դպրոցի, կամ Հիւանդանոցի դորձակալ մը, պաշտօնէն հանելու առաջարկութիւն ընել ձեռնհաս ժողովոյն կամ խորհրդոյն:

6. Առաջնորդը գաւառական նտուկէն իրեն յաակացեալ ամսական կ'ունենայ, և ինք կը տեսնէ Առաջնորդարանին ներքին ծախքը:

7. Առաջնորդը իրեն յատուկ փոխանորդ մը կ'ունենայ, զոր Խառն ժողովը կ'ընտրէ և Առաջնորդը կը հաստատէ:

8. Առաջնորդը ըստ օրինաց Տէրութեան, արքունի ժողովոյ անդամ է. հոն գաւառին վերաբերեալ որ և է ազգային հանրական և

անհասական խնդրոյ վրայ իր կարծիքը յայտնելէ և հանրագրի վրայ իր ստորագրութիւնը դնելէ յառաջ՝ Գաւառական վարչութեան հաճութիւնը պիտի առնու. ի բաց առեալ այն սովորական խնդիրները, որոց վերաբերեալ տնօրէնութիւնը արդէն Գաւառական վարչութեան կողմէն նշանակուած կ'ըլլան:

Եթէ արդէն չի նշանակեալ խնդրոյ մը համար՝ պատասխանատուութիւնը վրան առնելով կարծիքը և ստորագրութիւնը տալ, Գաւառական վարչութեան յառաջիկայ նիստին պիտի իմացնէ:

Ճիշդ տրտման պիտի վարուին նաև այն Հայ անգամները, որ արքունի ժողովոյ մէջ կը նըստին ի դիմաց ազգին:

Եթէ Առաջնորդը իր վիճակէն բացակայ ըլլալ, Առաջնորդական փոխանորդը կամ տեղապահը կը բազմի արքունի ժողովոյ մէջ:

Թեմերուն մէջ տեղական կառավարութեան ժողովոյ անդամ է այն եկեղեցականը, որ տեղւոյն Թաղական Խորհրդէն ընտրեալ և գաւառական Դաղաքական ժողովէն վաւերացեալ է այս պաշտօնին համար, զոր կը վարէ յար և նման Առաջնորդին:

9. Առաջնորդը իրուեալք չունի ինքնին լուծել և փոխել Գաւառին հրօնական և Քաղաքական ժողովները և անոնց վերաբերեալ խորհուրդները: Բայց երբ տեսնէ թէ ասոնցմէ մէկը Սահմանադրութեան սկզբանցը հակառակ ընթացքի մէջ է, առաջին անգամին բացատրութիւն կուզէ այն ժողովէն կամ խորհուրդէն, երկրորդին իմաց կուտայ անոր ապօրինաւոր ընթացքը և ի կանոնապահութիւնը կը հրաւիրէ զայն. իսկ երրորդին՝ Գաւառական Ընդհանուր ժողովոյն կը գիմէ, եթէ ամբաստանելին հրօնական կամ Քաղաքական ժողովն է, կամ Քաղաքական ժողովոյն կը գիմէ՝ եթէ Ուսումնական և Տնտեսական և Թաղական խորհուրդներէն մէկն է. և պատճառները ցուցնելով՝ ամբաստանեալ ժողովոյն կամ խորհրդոյն լուծումը կ'առաջարկէ:

Եթէ Առաջնորդը իր գաւառական Ընդհանուր ժողովին դէմ ալ դանդատ ունենայ, կը գիմէ առ հեզրոնական վարչութեան Խառն ժողովն:

Է.

Ամբաստանութիւն Առաջնորդի վրայ

1. Առաջնորդը կ'ամբաստանուի Գաւառական Ընդհանուր ժողովէն կամ նոյն գաւառին հրօնական և Քաղաքական ժողովներէն կամ ասոնցմէ մէկէն: Ամբաստանող կամ բողոքող ժո-

շովը կեդրոնական վարչութեան կը հաղորդէ իր ամբաստանութիւնը կամ ըողոքը :

2. Կեդրոնական վարչութիւնը նախ բացառութիւն կը պահանջէ առաջնորդէն . և երբ իրաւախոհութեան միջոցները պակիս , ամբաստանութեան նիւթին և այլ պարագայից նըկատմամբ , եթէ արժան գատէ , առ ժամանակեալ : կը հեռացնէ Առաջնորդը նոյն տեղէն . եւ Գաւառական վարչութիւնը առաջնորդական տեղապահ մը կը նշանակէ և Կեդրոնական վարչութիւնը զայն կը վաւերացնէ : Առաջնորդական թռչակին կէսը կը շրկուի Առաջնորդին և միւս կէսը Տեղապահին կը յատկանայ :

Իսկ երբ Կեդրոնական վարչութիւնը նկատէ որ ամբաստանութիւնը ծանր է , և ամբաստանողը կամ ամբաստանեալն ալ քննութիւն ընելու վրայ կը պնդէ , Գաւառական Ընդհանուր Ժողով գումարելու և քննութիւն ընելու հրահանգը կուտայ , և ի հարկին իր կողմէն ալ տեսուչ կը ջրկէ :

3. Եթէ Առաջնորդն Ընդհանուր Ժողով չի գումարէ , թէ Գաւառական Ընդհանուր Ժողովոյ գիւանը , և թէ Կրօնական կամ Քաղաքական Ժողովոյ գիւաններէն մէկն կամ երկուքն ի միտսին , և թէ Կեդրոնական վարչութեանէն նշանակ-

եալ Տեսուչը ըստ օրինի կրնան հրաւիրել Գաւառական ընդհանուր ժողովը :

Եթէ Գաւառական ընդհանուր ժողով գումարել անհնար ըլլայ, Կեդրոնական վարչութիւնն իր կողմանէ քննիչներ կը կարգէ, և անոնց միջոցաւ ամբաստանութիւնը կը քննէ, և ըստ այնքով արգարութիւնը կը վճռէ :

4. Գաւառական ընդհանուր ժողովին ներկայացեալ ամբաստանութիւնը քննելու համար՝ ժողովն իր մէջէն կ'ընտրէ 3 եկեղեցական և 3 աշխարհական խառն Յանձնաժողով մը, (որ իր մէջ բողոքող անձանցմէ մարդ պիտի չունենայ), և երբ ամբաստանութիւնը հաստատուի, ու Առաջնորդին հրաժարումն անհրաժեշտ դատուի, այս եղելութեանց բովանդակ տեղեկագիրը Գաւառական ընդհանուր ժողովոյ անգամաց մեծագոյն մասէն ստորագրեալ, կը շրկուի առ Կեդրոնական վարչութիւնն :

Սոյն տեղեկագրին մէկ օրինակն ալ նոյնպէս Գաւառական ընդհանուր ժողովոյ մեծագոյն մասէն ստորագրեալ՝ կը մատուցուի Առաջնորդին, և մատուցուած թուականէն մինչև մէկ կամ ըստ հեռաւորութեան տեղւոյն երկու ամիս՝ Առաջնորդն իրաւունք ունի բողոքելու կամ թրդիտողութիւնները ներկայացնելու Կեդրոնական

վարչութեան :

Եթէ Առաջնորդը չի բոլորէ, և որոշեալ պայմանաժամն անցնի, ինքնին իր պաշտօնէն դադարեալ է :

Իսկ եթէ բոլորէ կամ գիտողութիւն ներկայացնէ Կեդրոնական վարչութեան, այն ատեն մինչև Կեդրոնական վարչութենէն առնելիք որոշման օրը՝ առաջնորդական պաշտօնը վարելէ դադարեալ է, բայց իւր անունը Ս. Պատարագի մէջ յիշուելէ դադարած չէ: Այս միջոցին առաջնորդական փոխանորդը կը վարէ առաջնորդական պաշտօնը:

Ե. Կեդրոնական վարչութեան Խառն ժողովը տեղեկագիրը լսելէն և Առաջնորդին բոլորքը կամ գիտողութիւններն առնելէն վերջը, անմիջապէս քննիչներ կը շրջէ ի նոյն գաւառ, անոր մերձակայ վիճակաւորներէն, կամ այլուստ՝ եկեղեցական և աշխարհական գասէն, որ պաշտօն կ'ունենան նոյն գաւառին Ընդհանուր ժողովոյ և Առաջնորդին ներկայութեանը ամբաստանութեան կէտերը վերաքննելու :

Եթէ ամբաստանեալ Առաջնորդ մը եպիսկոպոս է, գնացող եկեղեցական քննիչին մէկն եպիսկոպոս ըլլալու է :

Նոյնպէս գնացող եկեղեցական քննիչը նոյն վիճակին առաջնորդութեան ընտրելի չի կրնար ըլլալ այն անգամին համար։

Քննչաց ծախքը գաւառական սնտուկին կը վերաբերի։

Քննիչները վերաքննութեան արդիւնքը կը տեղեկագրեն առ կեդրոնական վարչութիւնն։

Կեդրոնական վարչութեան խառն ժողովը նոյն տեղեկագրին վրայ իր վճիռը կուտայ, որ եթէ առաջնորդին տնկմանը կը վերաբերի, կը հաշորդէ առ քննիչ պաշտօնեայս և առ գաղարեալ առաջնորդն։

Ծ. Դադարեալ Առաջնորդն անմիջապէս իր վիճակէն կ'ելլայ, կեդրոնական վարչութեան նշանակած տեղն երթալու։

Եթէ գաղարեալ Առաջնորդը վերաքննութիւն պահանջէ ի կ. Պօլիս, ուղղակի պարտաւոր է կ. Պօլիս գալ, և վերաքննութեան օրինաւոր փաստերը ներկայացնել։

Եթէ միջոց անցնի, և ապա գաղարեալ Առաջնորդ մը բողոքէ, անընդունելի պիտի ըլլայ Այս միջոցը առ առաւելն չորս տմիս է։

Եթէ գաղարեալ Առաջնորդ մը ըմբոստանայ և վեր ի վայր յաւելէ վիճակը, այսպիսին արքու-

նի հրամանաւ կը հանուի իր տեղէն, և որոշեալ տեղ մը կը զբոսի:

Երբ Առաջնորդ մը գաղարի իր պաշտօնէն կամ հրաժարի և կամ վախճանի, Գաւառական վարչութեան Խառն ժողովը անմիջապէս եպիսկոպոս կամ վարդապետ և կամ քահանայ տեղապահ մը կը կարգէ, և յետոյ անոր միջոցաւ կը հրաւիրէ Գաւառական Ընդհանուր ժողովը նոր Առաջնորդ մը ընտրելու, այս մասին կեդրոնական վարչութենէն առած հրահանգին համեմատ:

Մինչև նոր Առաջնորդի մը ընտրութիւնը՝ եթէ Գաւառական վարչութիւնը առաջնորդական տեղապահ մը անմիջապէս չի նշանակէ, կեդրոնական վարչութիւնը զայն կը կարգէ:

7. Երբ Առաջնորդի մը վրայ եղած ամբաստանութիւնները ծանր ըլլան, և չի կրնայ արդարանալ, եթէ յանցանքը եկեղեցւոյ դէմ է, առաջնորդական պաշտօնէն դադարեցնելն զատ՝ եկեղեցւոյ օրինաց համեմատ ալ կը պատմուի:

Իսկ եթէ Ազգային Սահմանադրութեան և կեդրոնական վարչութենէն սահմանեալ օրինաց և հրահանգաց դէմ է, իր յանցանացը համեմատ արգէն վարած պաշտօնէն դադարեցնելն զատ՝ ու

րոշեալ ժամանակ մ'ալ ազգային որ և է պաշտօն վարելէ կը զրկուի։

Եւ եթէ ժողովուրդ հովուելու և անոր օգտին ու յառաջագիմութեան նպաստելու անբաւական լինելն հաստատուած ըլլայ, առաջնորդական պաշտօն վարելէ բոլորովին զրկուելու վճիռ կ'ընդունի։

8. Եթէ ի դաւառին կամ ի Պօլիս հղած վերաքննութիւնը Գաւառական Ընդհանուր Ժողովոյ աննպաստ ըլլայ, և Առաջնորդին ու անոր մէջ համաձայնութիւնն անկարելի, այն ատեն Կեդրոնական վարչութիւնը կը լուծէ Գաւառական Ընդհանուր Ժողովը և անմիջապէս վերականգնել կուտայ։

Եթէ վերականգնել Գաւառական Ընդհանուր Ժողովը գարձեալ իր առաջնորդը չուզելուն վրայ պնդէ, այն ատեն Կեդրոնական վարչութիւնը առժամանակ մը վիճակէն կը հեռացնէ Առաջնորդը։ Առաջնորդական Թշակին կէսը Առաջնորդին կը զրկուի։

Ը.

Միջամտութիւն Կեդրոնական վարչութեան

1. Երբ Առաջնորդ մը կամ Գաւառական վարչութիւն մը Սահմանադրութեան և Կեդրո-

նական վարչութենէն սահմանեալ օրինաց և հրահանգաց հակառակ ընթացքի մէջ գտնուին և իրենց պաշտօնն ու պարտաւորութիւնը չի կատարեն, կեդրոնական վարչութիւնն իրաւունք ունի ազդարարութիւն ընել անոնց և բացատրութիւն պահանջել:

Կեդրոնական վարչութիւնն ի հարկին մեր-
ձեցայ տալնորդներէն կամ վանականներէն
կամ այլուստ՝ եկեղեցական և աշխարհական
տեսուչ կը շրկէ հոն:

2. Եթէ Առաջնորդը կամ Գաւառական
վարչութիւնը յամառին իրենց ընթացքին մէջ,
տեսչին միջոցաւ Գաւառական Ընդհանուր Ժողո-
վը կը հրաւիրուի, և կեդրոնական վարչութիւնը
կը գազրեցնէ զանոնք իրենց պաշտօնէն ըստ
տեղեկագրի Գաւառական Ընդհանուր Ժողովին:

3. Այսպիսի պարագայի մէջ, եթէ Գաւա-
ռական Ընդհանուր Ժողովն ալ համամիտ գըտ-
նուի Առաջնորդին կամ Գաւառական վարչութեան
Կեդրոնական վարչութիւնը զայն ալ կը լուծէ.
և իր կողմէն զրկուած Տեսչին միջոցաւ առժա-
մանակեայ վարչութիւն մը կը կազմէ, առաջ-
նորդական տեղապահ մօտ կարգելով ցնոր
ընտրութիւն Գաւառական Ընդհանուր Ժողովոյ:

Կեդրոնական վարչութիւնն այսպէս պիտի
վարուի, երբ թէ այսպիսի և թէ ուրիշ պարա-

դաշի մէջ դաւառական Լնդհանուր ժողով դու-
մարել առն անհնար ըլլայ իրեն, կամ թէ ժո-
ղովը ցրուած է կամ բնաւ չեղած ըլլայ:

4. Եթէ Առաջնորդը կամ Կառավար-
վարչութիւնը և կամ Կառավարական Լնդհանուր
ժողովը՝ որ կեդրոնական վարչութեան միջոցա-
պաշտօնէ գաղութ կամ լուծուած են, Սահմանա-
դրութեան հիմնական սկզբանց, Հայրաստանեայց
եկեղեցւոյ վարդապետութեան և օրինոց, Ազգա-
յին իրաւանց և արտօնութեանց հակառակ վար-
ուած ըլլան, և ազգային սեփականութեանց ու
մատակարարութեան մէջ նենդութեամբ բռն-
ուած, կամ ազգային յառաջագիմութեան ար-
գելք եղած են դիտմամբ և դիտութեամբ,
վերջապէս Ազգի և եկեղեցւոյ դէմ դիտմամբ
միասնակար գտնուած ըլլան, վերընտրելի չեն
իրենց պաշտաման համար. ի բաց առեալ ժողո-
վոց այն մասը՝ որ փոքրամթիւ է, եւ բողոքարկու
մեծագոյն մասին դէմ:

5. Իսկ երբ վերընտրելի չըլլալու շափ-
ժանր վիճակ մը չունենան, և ընտրուելէն յետոյ
դարձեալ ըստ առաջնոյն շարունակեն այն ըն-
թացքին, որոյ համար առաջին անգամ պաշ-
տօնէ գաղութեան կամ լուծուեցան, կեդրոնական
վարչութիւնը իր Ա. Բ. Գ. ազգարարարութիւն-
ներն ընելէ ետքը, կը լուծէ զանոնք իրենց պաշ-
տօնէն՝ վերընտրելի չըլլալու պայմանաւ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ ՎԻՃԱԿԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ

ՍԱՀՄԱՆԵԱԼ ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՊԱՏԿ. ԽԱՌՆ ԺՈՂՈՎԷՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Աղետանդրիա

ՀԵՏԵՐԱԿԱՆ ԺԱՂՈՎ

ԹԻԻ 1

15 Յուլիս 1907

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ. Կեդր. Վարչութեան Պատկ. Խառն
Ժողովոյ հրահանգաց համաձայն՝ Աղետանդրիոյ
Թեմական ժողովի ընտրութիւնը կատարելու
պաշտօնով ըստ օրինի կազմուած Հնչ-
րոդական ժողովս, իւր առաջին նիստին մէջ
իսկ՝ միաձայնութեամբ պաշտօն դատեց՝ իբր
ընտրողական միապատաստութեանց առա-
ջին խաչը՝ ծանօթացնել Աղետանդրիոյ արգոյ
հայ հասարակութեան այն կանոններն եւ
օրինական տրամադրութիւնները որոնց հա-
մաձայն ճշդի պիտի ունենան այսուհետեւ մե-
քեմին վարչական եւ ընտրական բոլոր գործո-
ղութիւնները, եւ որոնց շնորհիւ Եզիպտոսի
ամբողջ առաջնորդական վիճակը կ'օժտուի
վերջապէս առանձնայատուկ միաձոյլ կազմա-
կերպութեամբ մը՝ հիմնուած Ազգային Սահ-
մանադրութեան ընդհանուր սկզբանց վրայ
եւ պաշտօնացուած ճշդական հանգամանի-
ններուն:

Առ այս ժողովս կը փութայ ի յոյս ըն-

ծայել Ազգ. Կեդր. Վարչութեան Պատկ. Խառն
Ժողովէն մեր վիճակին համար սահմանուած
ՎԱՐՁԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՐ՝ անոր սկիզբը դնելով
նաեւ Ա. Բ. եւ Գ. երեք յարակից վաւերա-
թղթեր որոնք, բաց ի իրենց պարունակած
կարեւոր մեկնութիւններէն եւ կարգադրու-
թիւններէն՝ իմ/նիմ այս վարչական վերա-
կազմութեան օգտաշատ գործին հիմնաքար
եւ պատեական յիշատակարանը կը կազմեն:

Հիմա որ Աղեփսանդրիոյ Հայ Հասարա-
կութիւնը՝ Կեդր. վարչութենէն պատրաստուած
եւ գործադրութեան հրամայուած այս Վար-
չական Հրահանգին մէջ կը գտնէ այլեւս
պսակուծ իր այնքան առիթներով միահա-
մուռ արտայայտած բաղձանքներուն, վստահ
ենք որ՝ անխառն քերկրութեամբ պիտի ող-
ջունէ զայն, եւ ամէն ո/իւր կարգին կատար-
եալ օրինապահութեամբ, խոհեմութեամբ
եւ համերաշխութեամբ պիտի ջանայ դիւրա-
ցնել շուտով իրականացուծ այս ազգօգուտ
գործին, որ արդարեւ բարգաւաճումի եւ
միաբանութեան նոր թուական մը կը խոս-
տանայ բանալ եզրիպտուի Հայ գաղութին
համար:

Առաջնօրէի եզրիպտուի
Նախագահ Հերոդ. Ժողովոյ
ԾԿՐՏԻՁ Ծ. ՎՐԴԳ. ԱՂԱՒՆՈՒՆԷ

Ա.

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԳԻՐԸ
ԵԳԻՊՏՈՍԻ ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Գ. ՊՕԼԻՍ

5 Մայիս 1907

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ
Ազգ. Գեղր. Վարչութեան
Համար 97

Գերազնորհ Յ. Մկրտիչ Մ. Վրդ. Աղաւնուհի
Առաջնորդ Վիճակիճ
Եզիպոսոի

Եզիպոսոի ազգային գործերը տեղական հան-
գամանաց համաձայն օրինաւոր աւելութեան
մէջ գնելու և ըստ այնմ Գաւառական Վարչու-
թիւնն կազմակերպելու համար յատոնց ի վեր
զգալի եղած էր Սահմանագրական յառուկ Հրա-
հանգի մը պէտքը, որ հիմնուած լինելով հան-
գերէ Սահմանագրութեան ոգւոյն և սկզբանց
վրայ, կարենար միանգամայն պաաշտել Եզիպ-
ոսոի վիճակին բացառիկ դրից և զօհացում տար
անոր պէտքերուն:

Այս վերջին ժամանակներու Աղեքսանդրիոյ

մէջ ծագած թեմական զանազան խնդիրներն և տեղի ունեցած իրողութիւններն աւելի անհրաժեշտ հարկ մը յառաջ բերին վարչական կազմակերպութեան գործն ի գլուխ հանելու, և Ազգ. Կեդրոնական Վարչութիւնն յանձնած լինելով Բարձր. Պօղոս Նուպար Փաշայի ուսումնասիրել իրաց վիճակն և պէտք եղած ծրագիրն պատրաստել, Խառն Ժողովն Նորին Բարձրութեան կողմէ մատուցուած ծրագիրն նկատողութեան առաւ, և անոր սահմանած սկզբունքներն օրինաւոր և ընդունելի գտնելով, ընդունեց ծրագիրն, և հետևեալոր ծրագրին սկզբանց վրայ՝ սահմանեց վարչական Հրահանգ մը Եղիպտոսի վիճակին համար, գործադրութեան հսկողութիւնը յանձնելով գարձեւել Ն. րին Բարձրութեան խնամոց և հոգածութեան:

Ահաւասիկ նոյն վարչական Հրահանգն ներփակեալ կ'աւարկենք Ձեր Գերապատուութեան և կը յանձնարարենք որ Ն. Բարձրութեան հետ բանակցութեամբ և անոր խորհրդոց համաձայն ձեռնարկէք նոյն Հրահանգով սահմանուած վարչական մարմինները կազմակերպելու իրենց բոլոր ճիւղերով, ստանալով թէ՛ Դահլիճի Քաղաքական Ժողովին և թէ Ազգ. քսանդրիոյ Թաղական Խորհրդին գործակցութիւնն, և վիճակային գործեւ

ըը դնելով այն վարչական ուղղութեան մէջ զոր
Հրահանգը կը տրամադրէ, փութաք տեղեկա-
գրել մեզ կատարուած ընտրութիւնները՝ ըստ
օրինի հաստատուելու համար:

Հարկ չէ ըսել թէ այս մտօք գրուած է կարե-
ւորը նաեւ Բարձր. Պօղոս Փաշայի և Աղեքսանդ-
րիոյ Ատենապետ Վսեմ. Արքահամ Բարթող Փա-
շայի, որոց հաշտրդուած է նաեւ մի մի օրինակ
Հրահանգէն:

Մնամք աղօթարար
Պատիարկ և. Պօղոս
(Ստոր.) ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ.

Բ.

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 7 Յունիս 1907

Ընդ նախագահութեամբ Գեր. Տ. Մկրտիչ
Ծ. Վարդապետ Աղաւնունիի, Առաջնորդ Եգիպ-
տոսի, և Ատենապետութեամբ Վսեմ. Պօղոս
Փաշա Նուպարի, զուգարուեցաւ Աղեքսանդրիոյ
ազգայիններու ժողով մը որուն ներկայ էին.

Վսեմ. Միհրան Խան Դալֆեան

Արթին Պէյ Բէիզեան

Միքայէլ Պէյ Րէիզեան
Ասատուր Պէյ Շէրիտեան
Ազն. Տ. Գէորգ Սարգիսեան
Տօքթ. Փամկոչեան
Յակոբ Իզմիրլեան
Գէորգ Իփէքեան
Տիգրան Կամսարական
Միքայէլ Կիւրեան
Գէորգ Մէրամէթեան
Գառնիկ Զպուքեան
Միհրան Տամատեան
Պերն Օհանեան
և Յարութիւն Մանուկեան :

Խոհ հրաւիրեալներէն զբաղման պատճառաւ բացակայ գտնուած են . Վսեմ . Արրահամ Փաշա Բարթող և Տեաքք Անտոն Արիմիոֆ, Սահակ Արրահամեան, Վահան Խորասանեան, Արմենակ Կամսարական, Կարապետ Մեղքոնեան, Լեւոն Մկրտիչեան, Յարութիւն Մօրուքեան, Յովհաննէս Շնորհքեան, Լեւոն Պէրպէրեան, Այամ Արչակեան, Տօքթ. Թէօֆիլ, Յակոբ Ուղուրեան և Լեւոն Նիզամեան :

Առաջնորդ Հայրը ասեանը բացուած հաշակեց ժամը 11ին և յայտարարեց թէ Կ. Պօլսոյ Ամեն . Սրբազան Պատրիարք Հօր կողմէ նորին

Վսեմութիւն Պօղոս փաշա Նուպարի ուղղուած պաշտօնագրի մը վրայ, թեւագրութեամբ Նաբին Վսեմութեան՝ ժողով հրաւիրած է այսօր Աղեքսանգրիոյ ծանօթ ազգայիններէն իբր 28 անձինք, որոնցմէ ներկաներուն իր շնորհակալութիւններն ուղղեց հրաւերին պատասխանած ԸԼԼալնուն համար:

Ապա խօսք առաւ Վսեմ, Պօղոս փաշա Նուպար և հետեւեալն ուղղեց ներկայ ազգայնոց.

«Տեարք,

«Նորին Ամենապատուութեան Կ. Պօլսոյ Պատրիարքին կողմանէ քանիցս կրկնուած փափաքին համակերպելով, ընդունեցայ Աղեքսանգրիոյ ազգային գործոց միջամտել, հոն յառաջ եկած գծաւորութիւններն հարթելու և ձեզ բաժնոջ երկպառակութիւններուն վերջ տալով լուծման մը յանգեալ համար: Թոժարութեամբ յանձն առի այս պաշտօնը, նա մանաւանդ շատ լաւ յիշատակ մը պահած ԸԼԼալու համար այն տարիներէն երբ Աղեքսանգրիոյ կը բնակէի ուր ձեր վստահութիւնը վայելած ԸԼԼալով Աղեքսանգրիոյ Ազգ. Վարչութեան ատենապետութիւնը ինձ յանձնուած էր:

«Ինչպէս որ արդէն յայտարարած էի ձեզ, վերջին ընտրութիւններն՝ ըստ իմ կարծեաց՝ օրինաւորապէս կատարուած չլլալով, աւել գիմում չէի կրնար փորձել՝ մինչև որ այդ ընտրութիւնները չլնջուէին։ Այդքանդրիոյ ժողովուրդը զայս հասկնալու իմաստութիւնը ունեցաւ, ինչ որ գիւրացուց գոհացուցիչ արդիւնք մը ձեռք բերելը, որ այսօր ձեզ պիտի հաղորդեմ։ Արդարեւ կըրցայ նորին Ամենապատուութեան գնահատել տալ ձեր թեմին մասնաւոր դիրքը, որոյ անցեալին մէջ վայելած տեսակ մը վարչական անկախութիւնը մինչև տատնան մը իրաւունք կուտար ապագային համար ալ մասնաւոր կազմակերպութեան մը։

«Ազգ. կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովը նպատաւոր ընդունելութիւն ընելով գիմումիս և ի նկատի առնելով յառաջ բերած փաստերս, հաճեցաւ սահմանել հրահանգներ զորոս ուրախ եմ ձեզի հաղորդելու և որոնք ձեր թեմին նոր կազմակերպութեան հիմը պիտի ըլլան։

«Ինչ որ արդէն գոհունակութեամբ հաստատեցի, դուք ևս պիտի տեսնէք թէ կ'։ Պօլսոյ Խառն Ժողովը այնպիսի կազմակերպութիւն մը կը շնորհէ, ձեզ որ յուսամ թէ ամենուն գոհացում

պիտի տայ և Աղեքսանդրիոյ Հայ հասարակութեան մէջ խաղաղութիւնը և միաբանութիւնը պիտի վերահաստատէ :

«Այս նոր կազմակերպութիւնը Եղիպտոսի առաջնորդական լիճակին միութիւնը պահպանելով հանդերձ, կտտարեւել անկախութիւն և ինքնորինութիւն կը շնորհէ ձեզ, առանց Գահիրէի թեմին հետ ձեր ունեցած կապերը խզելու : Արդարեւ ցաւալի պիտի ըլլար եթէ տեսակ մը հերձուած յառաջ դար Եղիպտոսի Հայոց մէջ, որոնց բարգաւաճումը և յառաջդիմութիւնը սերտ համերաշխութեան և համաձայնութեան պէտք ունի :

«Քաղց է ինչ յուսալ թէ Աղեքսանդրիոյ Հայ ժողովուրդին համար միաբանութեան շրջան մը կը բացուի ասով և ի խորոց սրտի մ'աղթանքներ ընելով անոր բարգաւաճման համար՝ տհա կը հաղորդեմ ձեզ Պատրիարքարանին Հրահանգները» :

Յանձնարարութեամբ նորին Վսեմութեան, Առաջնորդարանի գլխանապետը կարգաց յօդուած առ յօդուած կ. Պօլսոյ Աղգ. Կեդր. Վարչութեան Խառն Ժողովէն ընդունուած և վաւերացուած Եղիպտոսի թեմին համար գործադրելի Ազգային Վարչական Ծրագիրը :

Սոյն ընթերցման աւարտումէն յետոյ ներ-

կայք իրենց ամենախորին շնորհակալութիւններն յայտնեցին Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի որ բարեհաճութիւնն ունեցած էր միջամտելու Ամեն. Ս. Պատրիարք Հօր մօտ, և խնդրեցին Նորին Վրսեմութենէն որպէս զի շնորհ ընէ ներկայ ժողովոյ երախտագիտական խորին զգացմանց թարգմանը հանգիստանալ Նորին Ամենապատուութեան քով :

Վերոյիշեալ հրահանգներուն Թ-րդ յօդուածին գալով ժողովը՝ Նորին Վսեմութեան Պօղոս Փաշայի առաջարկութեան վրայ, և նոյն յօդուածի մեկնութիւնը Նորին Ամեն. Սրբազնութեան վաւերացմանը ենթարկելով՝ կը նկատէ թէ ընտրողութեան համար յօդուածին առաջին երեք պայմաններն անհրաժեշտ են առ հասարակ բոլոր գասակարգերուն և թէ այդ երեք պայմաններէն զառ՝ ընտրողները պէտք է նաև լրացնեն յաջորդող երեք պայմաններէն մին :

Իսկ Թ-րդ յօդուածին տյն հատուածը, որուն տրտմագրութեամբ ամէն ընտրող պարտի յիսուն զրուշ ողջ Ազգային տուրք մը վճարել, մինչև ցարդ գործնականին մէջ գոյութիւն չունենալուն, առ այժմ անկարելի պիտի ըլլայ օոյն պայմանը գոհացնող ընտրողներ գտնալ. ուստի ժողովը պարտք զգաց գարձեալ Ն. Վ.

Պօղոս Փաշայի բարեացակամ միջամտութեանը գիմել որպէս զի գէթ այս առաջին ընտրութեանց համար Պատրիարքարանը զերծ կացուցանէ ընտրողները յիշեալ տուրքի վճարումէն։ Վսեմ. Պօղոս Փաշա նուպար, ժողովոյ այս միահամուռ բաղձանքին վրայ յանձն առաւ հետագրաւ գիմել Ամեն. Ս. Պատրիարք Հօր, խնդրելու համար որ, լոկ այս անգամուան ընտրութեանց համար այդ բացառութիւնը շնորհէ, պայմանաւ որ, յառաջիկային, ընտրութեանց վերաբերեալ ամէն պայմաններ, և ի մասնաւորի յիսուն զրուշ ողջ գումարի տուրքը՝ կէտ առ կէտ պիտի գործադրուին։

Նոյնպէս ժողովոյ բաղձանաց վրայ Վսեմ. Պօղոս Փաշա յանձնառու եղաւ առաջին թղթատարով գրել Ազգ. Պատրիարքարանին և խնդրել որ ըստ Հրահանգի ընտրուելիք Գաղաքական ժողովոյ անդամոց թիւը եօթի բարձրացուի, նշանակուած հինգը բաւարար չըլլալով տեղական պահանջումներուն և գործերուն։

Յետ որոյ ներկայից առաջարկութեամբ և միաձայն հաւանութեամբ Ընտրողական ժողով մը կազմուեցաւ հետեւեալ Պատ. անձերէն, պաշտօն տրուելով իրենց շարժիլ և գործել ըստ նոր կազ-

մական կանոնագրի և ըստ հրահանգաց Աղգային
Պատրիարքարանի :

Անդամք Ընտրողական Ժողովոյ

Վսեմ. Աբրահամ Փաշա Բարթոյ

Տ. Տ. Միքայէլ Պէյ Իէիզեան

Յակոբ Էֆէնտի Լուզուրեան

Խաչիկ » Զաքէեան

Սոյն յորսն կազմելով մահուրդ Թաղ.
Խորհուրդը, եւ անոնցմէ զառ մահել՝

Վսեմ. Միհրան Խան Գալփաեան

Տ. Տ. Տօքթ. Մ. Ժամկոչեան

Գէորգ Իփէքեան

Յակոբ Ազնաւորեան

Գէորգ Սարգիսեան

Միհրան Տամատեան

Պերճ Օհանեան

Յովհաննէս Շնորհքեան

Սահակ Աբրահամեան

և Յակոբ Իզմիրլեան :

Առեանք փակուեցաւ ի ժամ 1 :

[Ստորագրութիւնք Անկախից]

Գ.

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՄԻԱՆԸ ԵՂԱՍԾ ՀԱՐՑՄԱՆՑ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՒ

Ազգ. Կեդր. Վարչութեան Պատկ. Խառն
Ժողովը առ Գեր. Առաջնորդ Հայրն ուղղեալ
134 համար եւ 14 Յունիս ամսաթիւ իր
պաշտօնագրով՝ հետեւեալ կերպով կը պար-
զաբանէ սահմանեալ Վարչական Հրահանգին
յուսարանութեան կարօս կէտերը. միանգա-
ւայն իւր բարձր հանձնարարը տալով Քաղ.
Ժողովոյ անդամոց թիւը 7ի բարձրացնելու
առաջարկին .

«Ստացանք տարւոյս Յունիս 19 թուականա-
ջեր ուղղած գրութիւնը, և ընդ նմին Ազգ. ք-
սանգրիոյ մէջ Ձեր նախագահութեան և Բարձր.
Պօղոս Փաշայի Առեւտրապետութեան ներքեւ գու-
մարուած ժողովի մը առեւտրութեան օրինակն,
որմէ տեղեկացանք որ այս ժողովին հաղորդուեր
է նորին Բարձրութեան կողմէ՝ Եզրպատտի վիճա-
կին համար կեդր. Վարչութեան Խառն Ժողովոյ
կողմէ սահմանուած Վարչական Հրահանգն և
գնահատուելով անոր օգտակարութիւնն, Ընտ-

րողական ժողով մը կազմուեր է գործադրութեան ձեռնարկելու համար. — միայն թէ՛

1. Վնտրողութեան պայմանաց վերաբերող հրահանգին 9րդ յօդուածը մեկնուելով այնպէս հասկցուեր է որ ընտրողաց համար նշանակուած վեց պայմաններէն առաջին երեքը պահանջելի են առ հասարակ ամեն դատակարգի ընտրողներէ իսկ մնացեալ երեք պայմաններէն մին միայն պէտք է ունենան. — նաև ,

2. Վստ որում մինչե ցարդ Աղեքսանգրիոյ մէջ ազգային տուրքը չէ կրցած հաստատուիլ , և առ այժմ անկարելի պիտի լինի դոնել ընտրողներ որ ըստ հրահանգի տարին 50 դրչ . օղջ դրամ Ազգ . տուրք վճարած լինին , ուստի հարկ դատուեր է հրահանգին նշանակած պայմանը այս առաջին անգամ ի բաց թողուլ և յառաջիկային գործադրութեան դնել անվրէպ . —

3. Հարկ դատուեր է Քաղաքական ժողովոյ անգամոց թիւը 5 էն 7ի վերածել :

Այս խնդրոյն նկատմամբ Բարձր . Պօղոս Փաշա ևս իր կողմէ կարեւորն գրած և առաջարկած լինելով մեզ՝ Ազգ . Կեդր . Վարչութեան Խառն ժողովը նկատողութեան առաւ եղած առաջարկութիւնները , և ճիշդ գտաւ հրահանգին 9 րդ

յօդուածին նկատմամբ տրուած մեկնութիւնն և
ընդունեց, ինչպէս ընդունեց նաև Քաղաք. Ժու-
ղովոյ անդամոց թիւը բարձրացնելու առաջարկն,
և 5էն 7 ի վերածնց. իսկ տրոց վճարման պայ-
մանին գալով, արգէն թարձր. Պօղոս Փաշա
կանխառ առաջարկած լինելով մեզ վճարումը
պայման չգնել տյա առաջին ընտրութեան պա-
հուն, սոյն առաջարկութիւնն ընդունուած և
մեր կողմէ հեռագրուած էր նորին Բարձրութեան
որ աուրք վճարելու կարողութիւնն ու յանձնա-
բարութիւնը միայն պայման դրուի տյա ան-
գամ, ինչ որ Աղգ. Կեդր. Վարչութեան Խառն
Ժողովն ալ հաստատեց իր համամտութեամբ։»

ՎԱՐՁԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

ՎԻՃԱԿԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ

1. — Եգիպտոս միակ առաջնորդական վիճակ կը կազմէ Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքութեան ներքեւ և մէկ Առաջնորդի մը ձեռք կը կառավարուի:

2. — Եգիպտոսի Առաջնորդութեան կեդրոնը Փահիրէի մօյրաքաղաքն է, բայց Ազեքսանդրիա ալ Առաջնորդանիստ կեդրոնն է և Առաջնորդը պարտաւոր է փոփոխակի երկու քաղաքներու մէջ բնակիլ պարագայից համեմատ:

3. — Երկու քաղաքներէն դուրս գտնուող Եգիպտոսի հայաբնակ տեղերը երկուքէն մէկին հետ կապակցեալ պիտի նկատուին կառավարչական յարաբերութեանց հիմամբ բաշխուած:

4. — Եգիպտոսի Ազգային Վարչութիւնը կազմակերպուած է Ազգ. Սահմանադրութեան սկզբանց համեմատ, տարրերութեամբ այն կէտերուն որ տեղական պահանջից համաձայն սոյն հրահանգին մէջ պիտի նշանակուին:

5. — Եգիպտոսի Փառաւական Ընդհանուր Ժողովը կը բաղկանայ երեսուն և հինգ անդամներէ, որոց հինգը եկեղեցական և երեսունը

աշխարհական։ Աշխարհականները կէս առ կէս, այսինքն տասնէհինգական անգամ Գահիրէի և Ալեքսանդրիոյ երկու թեմերուն կողմէ կ'ընտրուին։ Իսկ եկեղեցականներէն երեքը Գահիրէէն և երկուքը Ալեքսանդրիայէն կ'առնուին։

6.— Թէ Գահիրէի և թէ Ալեքսանդրիոյ թեմերը Գաւառական Ժողովոյ յիշեալ տասն և հինգ անգամները կ'ընտրեն իրենց քաղաքին մէջէն։ Բայց այս թիւէն մաս պիտի հանեն իւրենց թեմին մէջ դանուող հայաբնակ տեղերուն այն պարագային մէջ երբ այն տեղերը գոնէ երեսուն ընտրող անձ և մատուա մ'ունին։

7.— Ընդհ. Ժողովոյ եկեղեցական անգամներ են երկու քաղաքներուն ժխատէր քահանաներուն երիցագոյնները, բուական է որ ծերուն թեամբ անկարացած կամ օրինական պատճառներով զրկուած չլլլան։

8.— Ընդհ. Ժողովոյ աշխարհական անգամները կ'ընտրուին սղղակի ժողովրդին քուէարկութեամբ, և սահմանադրական հրահանգին ցուցուցած ձևով։

9.— Գահիրէի և Ալեքսանդրիոյ թեմերուն մէջ ընտրող են հետեւեալ պայմաններու պատասխանող Հայ դպրափառ եկեղեցւոյ զաւակ ազգայիններ, որոնք

ա) Իրենց կենաց քսանհինգ տարին լրացուցած են :

բ) Տարեկան կէս Եգ. ոսկի ազգային տուրք կը վճարեն :

գ) Սահմանագրութեան 67րդ. յօդուածով նշանակուած զրկութեւն զերծ են :

դ) Եգիպտոսի մէջ ծնած և տեղացի են :

ե) Երեք տարիէ ի վեր ընտանիքով Եգիպտոս հաստատուած են :

զ) Հինգ տարիէ ի վեր պետական պաշտօնով Եգիպտոս կը բնակին և կամ առևտրական տուն հիմնած են. (*)

10. — Գաւառական ընդհ. Ժողովը թէ՛ համագումար նիստեր կը գումարէ ի Գահիրէ և թէ իւրաքանչիւր թեմերուն անդամներով թեմական նիստեր կը գումարէ ի Գահիրէ և յիշգրտանդրիա. նախագահութիւնը և հրահրելու իրաւունքը ամէն առթի մէջ Առաջնորդին կը պատկանի :

(*) Սոյն վեց պայմաններէն առաջին երեքը պահանջելի են առ հասարակ ամէն ընտրողներէ. իսկ այդ երեք պայմաններէն զատ՝ բաւական է լրացնել յօշորդող երեք պայմաններէն մին միայն՝ ընտրողի հանգամանք տւնինալու համար (Տե՛ս Բ. և Գ. վաւերաթէղթերուն մէջ) :

11. — Երկաքանչիւր թեմերուն աշխարհա-
կան անդամներուն մէջէն կ'ընտրուին մէկ Ատե-
նապետ և մէկ Ատենադպիր։ Համագումար նիս-
տերու մէջ Ատենապետութիւնը կը վարէ Գահ-
բէի և Ատենադպրութիւնը Ազեքսանդրիայինը։
Առանց բացակայութեան փոխադարձաբար կը
պաշտօնավարեն միմեաները։

12. — Համագումար նիստերը կը զամար-
ուին հետեւեալ խնդիրներուն համար։

ա) Ընտրութիւն Առաջնորդի։

բ) Ընտրութիւն գաւառական երեսփոխանի
Կ. Պօլսոյ Կեդրոնական Ընդհ. Ժողովին։

գ) Ընտրութիւն պատուիրակի ընտրողական
Ժողովոյ էջմիածնի, եթէ Պատրիարքարանէ հը-
րահանգ տրուի։

դ) Առաջնորդի հետ տեղի ունեցած անհա-
մաւայնութեան կամ Առաջնորդին գէմ տեղի
ունեցած ամբաստանութեան նախաքննութեան և
Պատրիարքարանի հրահանգին վրայ։

ե) Առաջնորդարանի ելմապայքի կազմու-
թիւն։

զ) Գնումն կամ վաճառումն Ազգային կալ-
ուածոց։

է) Պետական կառավարութեան և հայ հա-
սարակութեան միջև յարաբերութեանց կէտերու
կամ օրինական փոփոխութիւններու նկատմամբ

խորհրդակցութիւններ :

բ) Եզիպտոսի տեղական գործոց և բարեպաշտական, կրթական և բարեգործական հաս. տատութեանց մասին կազմուելիք հրահանգներ, և այլ նմանօրինակ խնդիրներ որ Եզիպտոսի Հայ աղղափառ հասարակութեան ամբողջութեան կը պատկանին :

13. — Ընդհ. Ժողովոյ համագումար նիստերը տեղի կ'ունենան վերոյիշեալ առիթներուն պատահած ատեն : Ամէն առթի մէջ պէտք է որ իւրաքանչիւր տարի գոնէ մէկ նիստ գումարուի, և երկու թեմերուն գործերուն վրայ տեղեկութիւններ արուին և խորհրդակցութիւններ կատարուին :

14. — Գահիրէի և Ալեքսանդրիոյ թեմական նիստերը կը գումարուին հետեւեալ խընդիրներու համար :

ա) Ընտրութիւն հինգ (*) անգամէ բազկացած Քաղաքական Ժողովոյ :

բ) Հրաժարական Քաղաքական Ժողովոյ :

գ) Համարառութիւն Քաղաքական Ժողովոյ :

դ) Ամբաստանութիւն կամ գանգատ Քա.

(*) Ալեքսանդրիոյ համար՝ Քաղաք. Ժողովոյ անգամոց թիւը բարձրացուցած է եօթնիւ (Տե՛ս Բ. և Գ. վտերաթղթերուն մէջ) :

շաքական ժողովոյ գէմ։

ե) Թեմական եւմասցոյցի հաստատութիւն։

զ) Որ և է ծանր խնդիր զոր Քաղաքական ժողովն հարկ կը սեպէ Թեմական ժողովին հանել, կամ իբր Գաւառական Ընդհ. ժողովին տարուելիք խնդիր կուզէ նախաքննութեան ենթարկել։

15.— Թէ՛ Գաւառական և թէ՛ Քաղաքական ժողովներու ընտրելի են Հայ աղղափառ Եկեղեցւոյ զաւակ աղգայիններ, որք երեսուն տարեկան են, և տարեկան մէկ Եզ. Ոսկի աղգային տուրք կը վճարեն, և ընտրողութեան համար հրահանգին սահմանած պայմաններն ունին և ըստ Սահմանադրութեան ընտրելութեան իրաւունք կը վայելեն։ Գաւառական ժողովին Աանապետները և Ատենագայիները չեն կրնար Քաղաքական ժողովի անգամ լինել։

16.— Քաղաքական ժողովները կը միացնեն իրենց վրայ թեմին նկատմամբ Քաղաքական ժողովոյ և քաղաքին նկատմամբ Թաղական Խորհրդոյ գործառնութիւնները, և կը կատարեն միանգամայն թեմին վարչութիւնը և քաղաքին հաստատութեանց և կալուածոց մատակարարութիւնը։

17.— Քաղաքական ժողովներ, եթէ հարկ դատեն, երկու օժանդակ Հոգարարութիւններ

կրնան հաղմել Եկեղեցւոյ և վարժարանի համար իւրաքանչիւրը երեքական անդամէ, որք ընտրողութեան պայմանները պիտի ունենան ըստ հըրահանգի: Քաղաքական ժողովոյ անդամներէն ոմանք կրնան Հոգաբարձութեանց մէջ ալ դրուել: Ժառանգական և վիճակագրական և ազգահամարի գործերը Եկեղեցւոյ Հոգաբարձութեան կը պատկանին:

18.— Հոգաբարձութիւններ պատասխանատու են Քաղաքական ժողովին և Քաղաքական ժողովը պատասխանատու է Քեմական ժողովին:

19.— Առաջնորդը կ'ընտրուի Օսմանեան հպատակ կուսակրօն եկեղեցականներուն մէջէն, ուրիշ դաւառական Առաջնորդաց համար սահմանուած սովորական հրահանգին համաձայն, Պատրիարքարանէ ստացուած արտօնութենէ ետքը, և Պատրիարքարանէ տրուած եռանուն բաց ցանկի վրայ:

20.— Առաջնորդական ընտրութիւնը կը վաւերացուի Ազգ. կեդր. վարչութեան խառն ժողովէն, և կը հաստատուի հայսերական հրովարտակով և Պատրիարքական կօնգակով և տեղական իշխանութեանց ուղղուած ընծայական յանձնարարագրով:

21.— Գաւառական և թեմական և վարչա-

կան ժողովոց ընտրութիւններն ալ կը վաւերացուին Պատրիարքական կոնգրեկով։ Իսկ Հոգաբարձութեանց ընտրութիւնը կը վաւերացուի Առաջնորդէն։

22.— Առաջնորդն երկու թեմերուն մէջ ալ կ'ընտրէ մի մի եկեղեցական Առաջնորդական Փոխանորդ վարչական ժողովին հանձնաժամբ։ Փոխանորդները Առաջնորդին բացակայութեան կը վարեն Առաջնորդական գործերը, իրենց տրուած հրահանգին համեմատ և նշանակուած սահմանին մէջ։

23.— Կրօնական ժողովոյ պատկանեալ գործերը Առաջնորդը կը կարգադրէ փոխանորդին և թեմական ժողովոյն եկեղեցական անդամներուն հետ ժողով գումարելով։ Իսկ եթէ ժանդակչիս մի իրողութիւն կամ վերաքննութեան առիթ պատահի, երկու թեմերուն փոխանորդները և եկեղեցական անդամները ի միասին ժողովի կը գումարէ։ Կրնայ նաև ի հարկին բոլոր Եղիպտոսի եկեղեցականներէն համագումար ժողով գումարել։

24.— Նշանագրութեան և պատկազրութեան հրամաններն կը տրուին Առաջնորդէն, որ կրնայ փոխանորդներն ալ արտօնել իւր բացակայութեան հրամանի աւելու։

25. — Դատաւանական Խորհրդոյ վերաբերեալ խնդիրները կը քննուին Քաղաքական Ժողովէն Թեմական Ժողովի Եկեղեցական անդամներուն հետ միասին, Առաջնորդի կամ փոխանորդի նախագահութեամբ։

26. — Փոխանորդներ ի բացակայութեան Առաջնորդի կը նախագահեն վարչական ժողովներու։

27. — Առաջնորդի մահուան կամ հրաժարման կամ որ եւ է պատճառով դադարման ատեն տաժարեայ տեղապարհ կ'ընտրուի երկու թեմերու վարչական ժողովներուն համախորհուրդ հանութեամբ, եւ կը հաստատուի Աղգ. Պատրիարքարանէ։

28. — Առաջնորդի հրաժարականը մինչեւ որ Աղգ. Կեդր. Վարչութենէ չընդունուի վերջնական եւ լրացեալ շնկատուիր։

Սոյն հրահանգը կը հաստատեմք եւ կը վաւերացնեմք եւ կը հրամայեմք ի գործադրութիւն։

Ի Պատրիարքարանի Կ. Պօլսոյ 2 Մայիս 1907

Պ. Կ. Պօլսոյ

(Ստոր.) ՄԱՂԱՐԻԱ ԱՐԲ.

ՀՐԱՀԱՆԳ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ



ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կոստանդնուպօլիս

10 Մայիս 1893

ԳԻՒԱՆ ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՑ

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՋՈՒԹԵԱՆ

Համար 282

Գերապօքի Սիրեկի

ՆԱԽԱԳԱՀ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ

Խառն ժողովն Դատաստանական Խորհրդոյ կողմէ ծրագրեալ դատավարական հրահանգն իւր մեջէն կազմեալ Յանձնախմբի մը քննութեան յանձնած եւ Յանձնախումբն կատարելով այս աշխատութիւնն՝ բարեփոխեալ հրահանգ մը ներկայացուցած էր :

Խառն ժողովն իւր ապրիլ 21ի նիստին մեջ Դատաստանական Խորհրդոյ դիւանին ներկայութեան յօդուած առ յօդուած քննեցնելով բարեփոխեալ հրահանգն՝ ի նին առսա, եւ քանի մը յաւելմամբ ընդունելով հաստատեց եւ որոշեց գործադրութիւնը :

Արդ՝ ընդ գրոյս կը հաղորդեմք Ձեզ նոյն հրահանգին վաւերացեալ մէկ օրինակն, եւ կը յանձնարարեմք որ Դատաստանական Խորհրդոյ կողմէ անքեքի գործադրութեան դրուի դատավարական գործոց մեջ :

Ողջ լըր 'ի Տէր

ՊԱՏՐԻԱՐԲ Կ. ՊԱԼՍՈՑ

ՆՈՐԻՔ

ՀՐԱՀԱՆԳ

Դատավարութեան



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ



Յօդուած 1. Պատրիարքարանի ձեռնհասութեան պատկանեալ ամէն գառ Գ. Պաշտոյ մէջ կեդր. վարչութեան և գաւառներու մէջ Գաւառական վարչութեան Դատաստանական Խորհրդոց մէջ նախապէս կը քննուի և կը վճռուի:

Յօդ. 2. Դատաստանական Խորհրդոց մէջ անսնուած դատերը անգլոյն վարչութեան Խառն ժողովոյ մէջ կը վերաքննուին: Դատաստանական Խորհրդոյ վճիռներու վերաքննութիւնը երկու կողմերէ մէկուն զրաւօր խնդրանաց վրայ կը կատարուի: Բայց Սրբազան Պատրիարքն ի հարկին կրնայ հրամայել որ այն վճիռ վերաքննուի Խառն ժողովոյ մէջ: Գաւառներու մէջ այս հրամանը կը տրուի Առաջնորդին կամ Փոխանորդին կողմէ:

Յօդ . 3 . Դատաւարանական Խորհրդոյ և Խառն
Ժողովոյ կողմանէ ի բացակայութեան տրուած
որոշումները կրկին անգամ կը քննուին նոյն
Խորհրդոյ կամ Ժողովոյ մէջ եթէ բացակայ
եղող կողմը որոշեալ ժամանակին իր դիտողու-
թիւնը մատուցանէ . Այս երկրորդ անգամուան
որոշումը եթէ Խառն Ժողովոյ կողմէն տրուած
է , վերջնական է , իսկ եթէ Դատաւարանական
Խորհրդոյ կողմէն է՝ կրնայ վերաքննուիլ .

Յօդ . 4 . Բոլոր խնդիր գրաւորապէս կը ներ-
կայանայ վերոնշանակեալ ատեաններուն հառա-
վարութեան կողմէ յանձնարարեալ արգունիալով
և կամ ի Պօլիս Պատրիարքական Փոխանորդին և
ի դաւառս Առաջնորդաց կամ Փոխանորդաց կողմէ
մակազրեալ խնդրագրով . Խնդրազրերուն մէջ
երկու կողմին անունը , մականունը , բնակութիւնը
և հպատակութիւնը , ինչպէս նաև խնդրուած բա-
նին ինչ ըլլալը , և եթէ դրամ է՝ քանակու-
թիւնը , և եթէ ուրիշ արժէքաւոր նիւթ կամ
օթիտ է , անոնց արժէքը ևայլն բացայայտ
գրուած պէտք է ըլլայ .

Յօդ . 5 . Երկու կողմանք կրնան իրենց դա-
տին պաշտպանութեան համար փոխանորդ կար-
գել , իսկ դատարանը ուղած ժամանակ կրնայ

անհամար հարցաքննել երկու կողմերը :

Յօդ. 6. Կինը կարող է իր ամուսնոյն գէժ գատ բանալ ընտանեկան բնակավայրին կամ ամուսնոյն գտնուող տեղւոյն գատարանին առջեւ, իսկ տղը պատաւոր է ընտանեկան բնակավայրին Դատաստանական Խորհրդոյ առջեւ գատ բանալ :

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 7. Խորհրդաց և Ժողովոց նիստի օրերը լրացրաց մէջ հրատարակուած կամ Փոխանորդաբանաց և Առաջնորդարանաց բակը կախուած ծանուցմամբ կը յայտարարուին :

Յօդ. 8. Յիշեալ Ժողովները ամուսնական կամ տնկէ ծագում առած գրամական խնդրաց համար շորս տուժար պէտք է ունենան :

ա) Կոչնադրերու տուժար, կամ եթէ կոչնադրերը տպեալ են, անոնց ըուները, որ պէտք է պարունակէ կոչնադրերուն թուականը, բարապանին անունը, գատարանին որոշեալ օրը և խնդրագոյն համառօտ պարունակութիւնը :

բ) Խնդրագրերու տուժար, որ Ժողովին յղուած ըլլոր խնդրագրերու կամ պաշտօնագրերու թուականը, երկու կողման անունը, մական

նունը, բնակութիւնը, հպատակութիւնը, և բարասանին անունը և մականունը, զորին համառօտութիւնը և ժողովին գալուսն թուականը թուահամարներու կարգով պիտի նշանակուին:

գ) Որոշումներու տումար, ուր ամէն խընգրոց տրուած որոշումները համառօտիւ պիտի նշանակուին և ժողովականներու կողմէ ստորագրուին:

դ) Վճռագրերու տումար, ուր տրուած վճիռները ամբողջովին կ'արձանագրուին:

Յօդ. 9. Այս տումարները պէտք է կազմուած և ամէն մէկ երեսը գրաւոր կերպիւ թուանշանակեալ և կեդրոնական կամ Գաւառական Վարչութեանց կողմէ կնքուած ըլլան և ամէն տումարին քանի երես է բազկացած ըլլալը տումարին սկիզբը և վերջը գրաւորապէս նշանակուած և կնքուած ըլլայ: Անոնցմէ զատ ամէն վեց ամիս նախագահին կողմէ պէտք է տումարները քննուելով վաւերացուին և նորէն շարունակուին, վճռադիրներու տումարին մէջ արձանագրուած վճիռները սրբադրուածին յար և նմանը ըլլալուն դիւանապետը ստորագրութեամբ հաստատուէն վերջ, բոլոր անգամոց ստորագրութեամբ պիտի վաւերացուին: Երկու վճիռներու արձանագրութեան մէջտեղը միայն երկու

առջէն աւելի կամ նուազ պարապ չը պիտի
էգուի, նաեւ լուսանցքի կամ առջի մը վրայ
բառ մը աւելցնել և կամ դրել կամ սրբել ար-
դիւեալ է. եթէ սխալմամբ աւելի կամ պակաս
գրուած է՝ յայնժամ Ասենայեաթին և Ատենա-
գպրին ստորագրութեամբ պէտք է աւելցնել
կամ պակսեցնել:

Յօդ. 10. Վճիռներու արեանագրութեանց,
ինչպէս և այլ պաշտօնագրերու, խնդրագրերու
կամ փաստի վերաբերեալ թուղթերու օրինակը
կրնայ տրուիլ երկու կողմերուն եթէ խնդրուի
և արուելուն մէջ անտեղութիւն չըլլայ:

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՔ

Յօդ. 11. Կոչնագրերը երկու օրինակ կը
գրուին, և պատկանեալ Ատենին կողմէ կը
կնքուին, մէջը՝ գրուելուն թուականը, երկու

կողմին անունը, մականունը, և դատին տես-
նուելու օրը և ժամը նշանակուած պէտք է
ըլլայ՝

Յօդ. 12. Բարապանը կոչնագրին մէկ օրի-
նակը հրաւիրեալ անձին կը հաղորդէ բնակած
թաղին թաղական Խորհուրդներու ձեռամբ, եթէ
հրաւիրեալ անձին գտնուած տեղը թաղական
Խորհուրդ չկայ, կոչնագիրը կը հաղորդուի տեղ-
ւոյն Մ/ս/թարին ձեռամբ։

Յօդ. 13. Եթէ հրաւիրեալ անձը ուրիշ գա-
ւառ կը բնակի, հրաւիրագիրը կ'ուղղուի նոյն
տեղւոյն Առաջնորդին կամ Փոխանորդին որ ըստ
նախորդ յօդուածի տրամադրութեան կը հաղորդէ
կոչնագիրը։

Յօդ. 14. Հեռուոր տեղ դա՛նուող անձանց
զրկուելիք կոչնագրերու պայմանաժամը պէտք
է երկարել իւրաքանչիւր 6 ժամուն համար մէկ
օր հաշուելով, իսկ խիստ հեռի տեղ եղող ան-
ձանց համար դատարանը կ'որոշէ կոչնագրին
պայմանաժամը։

Յօդ. 15. Տեղը յայտնի չեղող անձին ուղ-
ղեալ կոչնագիրը լրագրաց միջոցաւ կը հրատա-
րակուի։

Յօդ . 16 . Դատաւարութիւնք գոնփակ կ'ըլ-
լան . իսկ երկու կողմերու տանելէց քահանայից
ներկայութիւնը պարտաւորիչ է դատաւարութեան
ժամանակ :

Յօդ . 17 . Դատաւարութեան ժամանակ Ա-
տենապետը կը կառավարէ Ատեանը և կը հսկէ
կարգապահութեան , ինքը կը հարցաքննէ երկու
կողմերը երես առ երես կամ ի հարկին զառ
զառ , կը լսէ վկաները և ժողովին որոշումը
կը հաղորդէ : Մէկ կողմին խօսած ժամանակ
միւս կողմին խօսիլ կամ ընդմիջել արգիլեալ
է , անգամներէն մին կրնայ Ատենապետին հա-
ւանութեամբ հարցումներ ուղղել երկու կող-
մերուն :

Յօդ . 18 . Ատենապետին կողմանէ ուղղուած
երեք հարցմանց չպատասխանող կողմը իբր
բացակայ կը նկատուի և անոր դէմ ըստ այնմ
որոշում կը արուի :

Յօդ . 19 . Վկայութիւններ բերելու կամ
պաշտօնական արձանագրութիւններէ ապացոյց
ներկայացնելու համար պաականեալ կողմին
հարկ եղած պայմանաժամը կը արուի , իսկ եթէ
այս արձանագրութիւնք պէտք ըլլալով հանդերձ,
երկու կողմէն մէկը չը կարենայ զայնս ստանալ ,

Ժողովը ուղղակի պատկանեալ տեղէն պաշտօնագրով բերել կու տայ ։

Յօդ . 20 . Եթէ Հեռնհասներու քննութեամբ հասկցուելու կէտեր պատահին , ըստ հարկին Հեռնհասներու կարծիքը կը հարցուի ։

Յօդ . 21 . Հետեւեալ պարագաներուն՝ երկու կողմէն մէկը կամ ամէնը կրնան խնդրել որ Ժողովոյ այս ինչ անդամը իրենց դատաւարանին Հեռնհաս մնայ ։

ա) Եթէ երկու կողմանց մէկուն հետ ազգականութիւն կամ մօտ խնամութիւն ունենայ ։

բ) Եթէ այդ անդամը ուղղակի կամ անուղղակի խնդրոյն մէջ նիւթական շահ ունենայ ։

գ) Եթէ երկու կողմէն մէկուն հետ արդէն անձնական վէճ մ'ունենայ ։

դ) Եթէ ներկայացեալ դատէն առաջ այդ անդամին հետ արդէն գատարանի մը առջև առկախ խնդիր մը ունեցած ըլլայ ։

Այս առսակ Հեռնհաս մնալու առաջարկ պէտք է դրաւոր և վճիռ տրուելէ առաջ ներկայանայ մի և նոյն Ատեանին որ զայն նկատողութեան առնելով , եթէ հիմնաւոր դատէ , այն

ժողովականին ձեռնպահ մնալուն որոշում կուտայ իսկ եթէ անհիմն գտնէ, կր մերժէ խնդրագիրը և կը շարունակէ գաղափարներ :

Յօդ. 22. Դատաւարանական Խորհրդոյ մէջ արգէն կարծիք յայտնող ժողովականը վերաքըն- նիչ Ատենին եթէ անգամակցի, ձեռնպահ պէտք է մնայ :

Յօդ. 23. Մէն մի խնդրոյ դատաւարու- թեան ժամանակ ներկայ գտնուող ժողովական- ներուն ինչպէս նաեւ գաղափարողին, գաղտելիին և վկաներուն (եթէ կան) անունը և մականունը և երկու կողմին և վկաններուն յայտարարութիւն- ները և ներկայացեալ գրութեանց պարունակու- թիւնը գիտնադպիրը համառօտիւ կ'արձանագրէ ամէն գոտին համառ զատ բանաւած ատենա- գրութեան մէջ :

Յօդ. 24. Ներկայ եզող դատախազ կամ գատելի կողմերուն մէկը եթէ ժողովոյն ան- ձամբ ծանօթ չէ, պէտք է անոնց նոյնութիւնը նախ ստուգել և ապա խնդրոյն քննութեան մտնել :

Յօդ. 25. Դատաւարանական Խորհուրդներու կողմանէ տրուած վճիռները խնդրոյն ամէն մա-

սերը քննուելէն վերջը ի Կ. Պօլիս Ամեն. Սըր-
բազան Պատրիարքի և ի դաւառս Առաջնորդաց
կամ Փոխանորդաց կ'ուղղուին տեղեկագրի և ևս վո-
ներկայացեալ խնդրոյն մէն մի կէտին համար
զատ դատ որոշում չը տրուիր, ուստի և անոնց
դէմ վերաքննութիւն ամբողջ խնդրոյն քննուե-
լէն և որոշուելէն վերջը տրուելիք վճռագրին
դէմ միայն կրնայ ըլլալ:

Յօդ. 26. Եթէ Դատաստանական Խորհուրդը
տեղեկանայ թէ իրեն, ներկայացեալ գատը արդէն
ուրիշ Դատաստանական Խորհրդոյ մը առջև կը
քննուի, պէտք է սպասել սոյն Խորհրդոյ կող-
մանէ տրուելիք որոշման:

Յօդ. 27. Դատը լսելէ և երկու կողմանց
բացատրութիւնները տունելէ վերջ՝ Ատենապետը
գատավարութիւնը փակեալ կը հրատարակէ,
յորմէ անմիջապէս ետքը երկու կողմը գուրս
եւլելով՝ եթէ որոշումը անմիջապէս կրնայ
տրուիլ, Ատենապետը խորհրդականաց կարծիք-
ները կը ժողվէ և եթէ խորհրդակցելու հարկ
տեսնուի, Ատենապետը խնդիրը կը պարզէ գա-
տախազին՝ խնդրադրոյն և ապացոյցներուն ինչ-
պէս նաև երկու կողմանց յայտարարութեանց
համառօտ միտքը կրկնելով, եթ կարելի է ըլլայ,

նոյնժամայն որոշումը կը տրուի և երկուց կողմանց կը հաղորդուի. իսկ եթէ կարելի չըլլայ օրոշման մը յանգիլ, ուրիշ օրուան կը ձգուի և երկու կողմանց կը հաղորդուի. այդ որոշեալ օրը խնդիրը կը վճռուի եթէ մի և նոյն ժողովականները ներկայ լինին. հակառակ պարագային՝ այսինքն առաջին նիստին ներկայ եղողներուն մէկուն կամ մէկ քանիին տեղ ուրիշ մը կամ ուրիշներ ներկայ ելած ժամանակ, նորերուն ներկայութեամբ երկու կողմերը լսուելէն վերջը որոշում կը տրուի:

Յօդ. 28. Որոշումները պէտք է պատճառաբանեալ և եկեղեցական օրինաց վրայ հիմնեալ լինին և 23րդ յօդուածին մէջ յիշուած առեւտագրութեան մէջ համառօտիւ նշանակուելէ վերջ պէտք է որոշման մասնակցող ժողովականաց կողմէն ստորագրուին. համակարծիք չեղող փոքրամասնութիւնը կրնայ իւր դիտողութիւնը գրեւով օտարագրել:

Յօդ. 29. Տրուելիք որոշումները ամբողջ ժողովականաց միաձայնութեամբ կամ մեծամասնութեամբ, այսինքն կէսէն մէկ աւելիին կարծիքովը կ'ըլլան. կարծիքները երկու հաւասար մասի բաժնուած ժամանակ նախագահին և

անոր բացակայութեան ժամանակ Ատենապետին կամ նորա փոխանորդին գտնուած կողմը մեծամասնութիւն կը կազմէ :

Յօդ. 30. Եթէ երկու կողմէն մէկուն կամ վկայի մը երդում տալ հարկ տեսնուի, ո՛ր կէտերուն վրայ և ի՛նչ կերպով ըլլուելիքը պէտք է կանխաւ որոշուի և բացայայտ կերպիւ գրի առնուելէ վերջ գործադրուի :

Յօդ. 31. Վնասուց հասուցում պահանջուած ժամանակ եթէ բուն խնդրոյն հետ քննուած և որոշուած չէ, այս ևս առանձին յորջուելու համար վնասուց քանակութիւնը պարունակող հաշիւը կ'ուզուի :

Յօդ. 32. Ստիպողական պարագայից մէջ որոշման առժամանակեայ գործադրութիւնը կրնայ վճռուիլ մի և նոյն տեղեկագրով :

Յօդ. 33. Դատաստանական ծախքերը դատապարտեալ կողմէն կը հատուցուին :

Յօդ. 34. Վճռագրերը առաւաւելն տասն և հինգ օրէն պէտք է պատրաստուին :

Յօդ. 35. Վճռագրի վաւերացեալ օրինակը ի Կ. Պօլիս Պատրիարքական Փոխանորդին և ի գաւառս Առաջնորդին կամ Փոխանորդին կողմանէ

կը հաղորդուի գատապարտեալ կողմին՝ կոչնու-
ղրերու մասին նշանակուած եղանակին համեմատօ

Յօդ. 36. Վեճադրերը ՁՑԴ յօգուածին
համեմատ արուած որոշման յար և նմանը և
պատճառարանեալ պէտք է ըլլան և որոշման
մասնակցող անգամաց կողմէն ստորագրուին օ
Երկու կողմին հաղորդուած պատճէններուն մէջ
ստորագրութիւնները չեն գրուիր և միայն խ-
կական պատճէնը ըլլալուն նախագահը կը ստ-
րագրէ և Խորհրդոյ կնիքովը կը վաւերացնէ օ

Յօդ. 37. Վկայութեան համար եկած ան.
ձերը զատ զատ և երկու կողմին ներկայութեամբ
կը հարցաքննուին և անոնց վկայութիւնը իսկոյն
արձանագրուելով իրենց ստորագրել կը արուի օ

Յօդ. 38 Եթէ ժողովով համոզում գոյացուի
որ երկու կողմէն մէկը կամ վկայ ցուցուած
անձը բանաւոր պատճառաւ անձամբ ժողովոյն
չը պիտի կարենայ ներկայտնալ, այն ժամանակ
Ատեանը իւր անգամներէն մէկ կամ երկուքը
գիւտնադպիրով կուղարկէ այն անձին բնակարա-
նը և պէտք եղած հարցումները կ'ընէ, պատառ-
խանները իրեն ստորագրել աւալով օ

Ի ԲԱՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՏՐՈՒԱԾ ՎՃԻՌՆԵՐ

ԵՒ ԱՆՈՆՑ ԴԷՄ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Յօդ. 39. Կոչնագրով հրաւիրեալ կողմերուն երկուքն ալ եթէ որոշեալ օրը չը ներկայանան Ատենին, այն ժամանակ մինչև որ մէկը դայ և հակառակ կողմին նորէն կանչուիլը խնդրէ, խնդիրը կը յետաձգուի:

Յօդ. 40. Եթէ կոչնագիրը ստորագրող կողմը որոշեալ օրը չը ներկայանայ և ներկայ եղող կողմը ի բացակայութեան որոշում ուղէ, այն ժամանակ եթէ բացակայութիւնը արգելիչ պատճառաւ լինելուն ատենանրինքին համոզուի, խնդրոյն քննութիւնը տւրիչ օրուան կը ձգուի. իսկ եթէ սոյն բացակայութիւնը անձամբ դալու արգելող ծանր հիւանդութեան պէս պատճառէ մը առաջ եկած է, այն ժամանակ գործը կը յետաձգուի մինչև ցապաքինում:

Այս վերջին պարագային արգելիչ պատճառը պէտք է ապացուցուի Թաղական Խորհրդոյ և Աւագերէցին ստորագրութիւնը կրող գրութեամբ. իսկ Թաղական Խորհուրդ և Աւագերէց չը գրտնուած տեղեր երկու պատուաւոր անձանց վկա-

յութիւնը առնուելով մօտակայ թաղին Թաղա-
կան Խորհրդոյն վաւերացնել տալ կը բաւէ :

Եթէ ներկայ չեղողին բացակայութիւնը
արգելիչ պատճառաւ ըլլալուն առեանք ինք-
նին համոզուած չըլլայ և կամ այս պատճառաւ
յետաձգուած օրը գարձեալ մի և նոյն կողմը
ներկայ չըլլայ և վերջապէս եթէ որինաւոր
պատճառաւ բացակայութիւնը պաշտօնապէս
չապացուցուի, յայնժամ ի բացակայութեան
խնդիրը կը քննուի :

Եթէ բացակայն խնդրակուն է, այն ատեն
խնդիրը պարզապէս կը մերժուի առանց քննու-
թեան :

Եթէ բացակայն գատելին է, այն ատեն
խնդրարկունն պահանջին օրինաւոր և արդար
լինելն քննութեամբ ստուգուելէ վերջ օրոշում
կը տրուի :

Սօդ. 41. Ի բացակայութեան տրուած վճռի
դէմ պաշտօնապէս հաղորդուած թուականէն ըս-
կըսեալ երեսուն և մէկ օր պայմանաժամի մէջ
գիտողութիւն կ'ընդունուի : Հաղորդուած թուա-
կանը ինչպէս նաև գիտողագրին ներկայացուած
թուականը այս պայմանաժամին մէջ չեն : Հե-
ռաւոր տեղ գտնուողներուն համար պայմանա-
ժամը կ'երկարի այն համեմատութեամբ որ

դժուած է կոչնագրերու պայմանաժամին համար
(Յե՛ա Յօդ. 14)։

Յօդ. 42. Պայմանաժամին մէջ եթէ գիտութիւն ներկայացուած չէ, աշխուհեաւ այն վճաղորդը ի ներկայութեան արուած վճաղորդի զօրութիւն կ'ունենայ։

Յօդ. 43 Դիտողազրերը պէտք է ստորագրելու ըլլան դատապարտեալ կողմէն և բացարդ ցուցնեն թէ ի՛նչ պատճառներով վճիռը անարգար կը տեսնուի։

Յօդ. 44. Դատապարտեալը իւր գիտողագիրը անմիջապէս կը հաղորդէ իւր հակառակորդին կոչնագրով՝ զոր ինք ևս կ'ստորագրէ կանխաւ որոշեալ օրը գալու համար։ Նոյն օրը եթէ ինքը չի գայ գիտողութիւնը չեղեալ կը նկատուի. իսկ եթէ ներկայանայ, այն ժամանակ պայմանաժամին մէջ ներկայացուած կամ օրինաւոր ըլլալը ստուգուելէ վերջ իւր գիտողութիւնները կը քննուին։

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 45. Վերաքննութիւն պահանջելու պայմանաժամը վճարողին հաղորդուած թուականէն սկսեալ 61 օր է, վճարողին հաղորդուած օրը, ինչպէս նաեւ վերաքննութիւն պահանջուած օրը չի հաշուելիւ: Հեռաւոր տեղ գտնուող անձանց հաղորդուած վճարողի գէմ վերաքննութեան պայմանաժամը կ'երկարի ըստ 14^{րդ} Յօդուածի:

Յօդ. 46. Վերաքննութիւն պահանջող կողմը իր այս խնդիրը կը մատուցանէ ի Կ. Պոլիս Ս. Պատրիարքին կամ նորա Փոխանորդին և ի գաւառո Առաջնորդին կամ Փոխանորդին:


Յօդ. 47. Ներկայացեալ խնդրագրին պատճէնը վերաքննիչ տանի դիւանին կսղմէն պաշտօնապէս կը հաղորդուի միւս կողմին կոչնագրով մէկտեղ, որուչեալ օրին խնդրագիրը և եթէ պատասխանագիր արուած է, այն ալ քննուելէ և խնդրագրին օրինական ժամանակամիջոցին մէջ ներկայացուիլը և օրինուոր լինելը ստուգուելէ վերջ, երկու կողմը հարցաքննելով վճիռ կը հաստատէ կամ կ'եղծանէ և նոր վճիռ մը կուտայ. և եթէ ինչ ինչ կէտերուն մասին վերստին քննութեան հարկ տեսնէ, խնդիրը նորէն Դատաւարանական Խորհրդոյ կը դարձնէ:

Յօդ. 48. Վերաքննիչ ատենի կողմանէ ի բացակայութեան տրուած որոշման գէժ գիտողագիր կրնայ մատուցուիլ վճարարին հաղորդուելէն երեսուն և մէկ օրուան մէջ, և այս պարագային մէջ խնդիրը կրկին կը քննուի նոյն ատենի առջև այն եղանակաւ որ գծուած է 41, 42, 43 և 44-րդ Յօդուածոց մէջ:

Յօդ. 49. Դատաստանական Խորհրդոյ մէջ ի կեր արկեալ դատաւարական կանոնք վերաքըննիչ Ատենի մէջ կը դործադրուին:

Յօդ. 50. Վերաքննիչ ատենի որոշմունք որ ի ներկայութեան տրուած են և անոնք որք թէև ի բացակայութեան տրուած ըլլալով անոնց գէժ գիտողագիր ներկայացուած չէ, վերջնական են:

Յօդ. 51. Թէ՛ գիտողութեան և թէ՛ վերաքննութեան խնդրագիրը արոշեալ պայմանաժամէն վերջը չեն ընդունուիր, և սակայն եթէ պայմանաժամին մէջ մէկ կողմէն խնդիր ներկայացուած է, միւս կողմէն կարող է նոյնն ընել մինչև իսկ պայմանաժամը անցնելէն վերջը, եթէ տակաւին խնդիրը ի քննութեան է:



Ընկալեալ եւ հաստատեալ ի Նառն Ժողովոյ
Ազգային Կեդրոնական Վարչութեան ի բանե-
րորդ առաջներորդ գումարման իւրում, ի 21 Ապ-
րիլի 1893 ամի, եւ յանձնեալ ի գործադրութիւն:

ՊԱՏՐԻԱՐԺ Կ. ՊՈԼՍՈՅ

Խ Ո Ր Է Ն

10 Մայիս 1893

